



Ժամանակակից

ԵՎՐԱՍԻԱ



IV(2)
2015

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

CONTEMPORARY EURASIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱԿԱԿԱՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
ԱՐԱԲ ԱՄՈՒԼԻ: ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
ՍՊՈՐՏԱԿԱՆ ԵՎ ԻԴԵՈԼՈԳԻԿԱՆ
ՆՈՎԱՆՏՐԵՆԴՆԵՐ

ARAB WORLD:
POLITICAL AND IDEOLOGICAL NEW TRENDS

EDITED BY RUBEN SAFRASYAN

VOLUME IV (2)

YEREVAN 2015

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

СОВРЕМЕННАЯ ЕВРАЗИЯ

АРАБСКИЙ МИР:
НОВЫЕ ПОЛИТИЧЕСКИЕ И ДЕОЛОГИЧЕСКИЕ
ТЕНДЕНЦИИ

ПОД РЕДАКЦИЕЙ РУБЕНА САФРАСТЯНА

ТОМ IV (2)

ЕРЕВАН 2015

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐԱՍԻԱ

ԱՐԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ.
ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ
ՄԻՏՈՒՄՆԵՐ

ԽՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄ

ՀԱՏՈՐ IV (2)

ԵՐԵՎԱՆ 2015

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԱՎԳԻՐ

Ռուբեն Սաֆրաստյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ԽՄԱՎԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Լիլիթ Հարությունյան, պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ ԱԻ ավագ
գիտաշխատող

Գոհար Իսկանդարյան, պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ ԱԻ ավագ
գիտաշխատող

Վահրամ Տեր-Մաթևոսյան, պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ ԱԻ ավագ
գիտաշխատող

Լևոն Հովսեփյան, պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ ԱԻ ավագ գիտաշխատող

Նազելի Նավասարդյան, պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ ԱԻ գիտաշխատող
(հատորի պատասխանատու)

«Ժամանակակից Եվրասիա» գիտական պարբերականի այս համարն ընդգրկում է արաբական աշխարհի առանցքային հիմնախնդիրների նվիրված ուսումնասիրություններ: Հոդվածների հեղինակների կողմից քննարկվում են նաև սիրիական ճգնաժամի համատեքստում ջրդական և ալիական գործոններով պայմանավորված քաղաքական գործընթացներն ու վերափոխումները և դրանց ազդեցությունը տարածաշրջանային զարգացումների վրա:

Ժողովածուն նախատեսված է պատմաբանների, քաղաքագետների, փորձագետների, դիվանագետների, ուսանողների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանների համար:

ISSN 1828-3948

PUBLISHED BY THE DECISION OF THE SCIENTIFIC COUNCIL
OF THE INSTITUTE OF ORIENTAL STUDIES OF NAS RA

EDITOR IN CHIEF

Ruben Safrastyan, Academician of NAS RA

EDITORIAL BOARD:

Lilit Harutyunyan, PhD, Assoc. Prof., Senior Research Fellow IOS NAS RA

Gohar Iskandaryan, PhD, Assoc. Prof., Senior Research Fellow IOS NAS RA

Vahram Ter-Matevosyan, PhD, Senior Research Fellow IOS NAS RA

Levon Hovsepyan, PhD, Senior Research Fellow IOS NAS RA

Nazeli Navasardyan, PhD, Research Fellow IOS NAS RA, Responsible for the Volume

The current volume of the "Contemporary Eurasia" includes analysis of the key issues of the Arab world. This volume also discussed Kurdish and Alevi factors in the context of Syrian crisis and their impacts on the domestic political processes and regional developments.

The volume may be of interest for scholars, experts of politology and students.

ISSN 1828-3948

ИЗДАЕТСЯ ПО РЕШЕНИЮ УЧЕНОГО СОВЕТА ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ

ГЛАВНЫЙ РЕДАКТОР

Рубен Сафрастян, академик НАН РА

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Лилит Арутюнян, к. и. н., доцент, старший научный сотрудник ИВ НАН РА

Гоар Искандарян, к. и. н., доцент, старший научный сотрудник ИВ НАН РА

Ваграм Тер-Матевосян, к. и. н., старший научный сотрудник ИВ НАН РА

Левон Овсепян, к. и. н., старший научный сотрудник ИВ НАН РА

Назели Навасардян, к. и. н., научный сотрудник ИВ НАН РА,
(ответственная за выпуск)

Настоящий том периодического сборника "Современная Евразия" включает аналитические исследования, посвященные ключевым вопросам Арабского мира. В статьях также рассматриваются курдский и алевитские факторы в контексте сирийского кризиса и их влияние на внутривосточные процессы и региональные развития. Выпуск предназначен для историков, политологов, дипломатов, экспертов, студентов, а также для широкого круга читателей, интересующихся Ближневосточным регионом.

ISSN 1828-3948

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՎԵՐԵԼՔԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՍԻՐԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ10

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍԻՐԻԱԿԱՆ ԾԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԻՇԽՈՂ ԱԼԱՎԻԱԿԱՆ
ՎԱՐՉԱԿԱՐԳՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՓՈՓՈԽՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԸ (2015 Թ.-ի ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)51

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆ ԱԴՐԲԵՋԱՆ-ԱՐԱՔԱԿԱՆ
ԵՐԿՐՆԵՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ67

ՍԱՐԳԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐԴԱԼԼԱԿ ԱԶԶԱՄԻ «ԶԻՀԱԴԻ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱ-
ԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ76

ԱՐՄԵՆ ԶՈՒԼՅԱՆԱԿՅԱՆ

ԻՐԱՅԵԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԹՈՒՐԹԻԱՅԻ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ
ՏԱՐԱՇԱՆՇԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ87

CONTENTS

VAHRAM PETROSYAN THE REASONS OF THE RISE OF DEMOCRATIC UNION PARTY IN THE CONTEXT OF SYRIAN CONFLICT	10
GRIGOR YARDANYAN THE SYRIAN CRISIS AND RESHUFFLING WITHIN RULING ALAWITE REGIME (FIRST HALF OF 2015)	51
ARAKS PASHAYAN ISLAMIC FACTOR IN AZERBAIJANI-ARAB RELATIONS	67
SARGIS GRIGORYAN THE INFLUENCE OF ABDALLAH AZZAM'S CONCEPT OF JIHAD ON THE CURRENT TRENDS OF ISLAMIC RADICALISM	76
ARSEN JULFALAKYAN THE FACTOR OF ISRAEL IN THE CONTEXT OF TURKEY AND SYRIA REGIONAL POLITICS	87

СОДЕРЖАНИЕ

ВАГРАМ ПЕТРОСЯН ПРИЧИНЫ РОСТА ПАРТИИ ДЕМОКРАТИЧЕСКИЙ СОЮЗ В КОНТЕКСТЕ СИРИЙСКОГО КОНФЛИКТА	10
ГРИГОР ВАРДАНЯН СИРИЙСКИЙ КРИЗИС И ПЕРЕСТАНОВКИ ВНУТРИ ПРАВЯЩЕЙ АЛАВИТСКОЙ ВЕРХУШКИ (ПЕРВАЯ ПОЛОВИНА 2015)	51
АРАКС ПАШАЯН ИСЛАМСКИЙ ФАКТОР В АЗЕРБАЙДЖАНО-АРАБСКИХ ОТНОШЕНИЯХ	67
САРГИС ГРИГОРЯН ВЛИЯНИЕ КОНЦЕПЦИИ ДЖИХАДА АБДАЛЛЫ АЗЗАМА НА СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ ИСЛАМСКОГО РАДИКАЛИЗМА	76
АРСЕН ДЖУЛФАЛАКЯН ИЗРАИЛЬСКИЙ ФАКТОР В КОНТЕКСТЕ РЕГИОНАЛЬНОЙ ПОЛИ- ТИКИ ТУРЦИИ И СИРИИ	87

**ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՎԵՐԵԼՔԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՍԻՐԻԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Սիրիայի քրդերն ու 2011թ. սկսված սիրիական ապստամբությունը

2011 թ. Սիրիայում սկսված ապստամբական շարժման պայմաններում քրդը երիտասարդության բազմաթիվ ներկայացուցիչներ, արձագանքելով Ասադի վարչակարգը տապալելու ընդդիմության կոչերին, միացան վերջինիս: Մինչդեռ Սիրիայի ավանդական քրդական կուսակցությունները չչտապեցին սիրիական ընդդիմությանը միանալու հարցում: Նմանատիպ հապաղումն ու զգուշավորությունն իրենց մի շարք պատճառներն ունենին.

- Սիրիայի ավանդական քրդական կուսակցությունները գտնում էին, որ ընդդիմությանը սկզբից ևեթ բացահայտորեն միանալու դեպքում Ասադի վարչակարգի պատժիչ գործողությունների զոհը կդառնան,
- Սիրիայի քրդական կուսակցությունները մասամբ վրեժխնդիր էին լինում արաբական ընդդիմությունից 2004 թ. ռեժիմի կողմից դաժանորեն ճնշված քրդական ելույթների¹ նկատմամբ դրսևորած անտարբերության համար,
- վերոհիշյալ քաղաքական ուժերը հույս ունեին, որ ժամանակ շահելու դեպքում անհամեմատ ավելի մեծ ձեռքբերումներ կունենան,
- Սիրիայի ավանդական քրդական կուսակցությունները մտավախություն ունեին, որ սիրիական ընդդիմությանը միացած քրդը երիտասարդության բազմաթիվ ակտի-

վիստներ, իրենց մարտահրավեր նետելով, կհայտնվեն առաջին դիրքերում՝ քրդական կուսակցությունների գործիչներին համապատասխանորեն մղելով երկրորդական դիրքեր²:

Սակայն արդեն երկու տարի անց՝ 2013 թ. Դրուսյամբ, Սիրիայի քրդը երիտասարդությունն աստիճանաբար հետին պլան մղվեց, իսկ առաջին պլանում հայտնվեցին քրդական քաղաքական կուսակցությունները: Դրանում էական դեր խաղացին ոչ բավարար ֆինանսական միջոցները, արտաքին աջակցության բացակայությունը և ոչ բավարար քաղաքական-կազմակերպչական գիտելիքներն այն դեպքում, երբ ձևավորված երիտասարդական խմբերն ու խմբավորումներն արդեն իսկ սկսել էին գործել քաղաքական կուսակցությունների օրինակով: Հետևաբար նրանցից շատերը լուծարվեցին, մյուսները միավորվեցին կամ միավորվելով հետագայում պատակովեցին: Սակայն քրդը երիտասարդության ամենակենսունակ հատվածը հարեց այս կամ այն քրդական կուսակցությանը՝ հանդես գալով վերջինիս կազմում՝ որպես վերջիններիս կողմից արագ ձևավորվող երիտասարդական թև: Երիտասարդներին ներգրավելու առումով հատկապես ակտիվ գործունեություն ծավալեց 2011 թ.³ Քուրդիստանի ռեզիմնալ կառավարության (ՔՌԿ) նախագահ և Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության (ՔԴԿ) առաջնորդ Մասուդ Բարզանու գլխավորությամբ ստեղծված և Սիրիայի քրդական շուրջ 11 (ներկայումս՝ 15-16) կուսակցություններ ներառող Քրդական ազգային խորհուրդը (ՔԱԽ): 2013 թ. փետրվարի սկզբներին ոչ երիտասարդ, այլ տարեց ու փորձված քաղաքական գործիչներից կազմված կոմիտեի նախաձեռնությամբ իրավիրվեց երիտասարդական կոնֆերանս, որի նպատակն էր ՔԱԽ-ի երիտասարդական թևի ներկայացուցիչների ընտրություններ անցկացնել: Ընտրվեցին, ընակաձևաբար, այն երիտասարդ քրդը գործիչները, որոնք արդեն իսկ սերտ համագործակցություն էին ծավալել ՔԱԽ ներգրավված կուսակցությունների շրջանակում³:

¹ Christian Sinclair, Sirwan Kajjo, The Evolution of Kurdish Politics in Syria.- MERIP/Middle East Research and Information Project (August 31, 2011) <http://www.merip.org/mera/mezo083111>

² International Crisis Group: Middle East Report № 136, 22 January 2013 - Brussels, Belgium 2013: p. 1.

³ Eva Savelsberg, The Kurdish Factor in the Syrian Revolution.- Syrian Studies Association Bulletin, Volume 18, No 1 (2013).- <https://ojcs.siue.edu/ojs/index.php/ssa/article/view/2858>

Քրդական եռյակը

Մերձավոր և Միջին Արևելքի քրդական զարգացումների դաշտում գերազանցապես գերիշխում են քրդական երեք քաղաքական ուժեր՝ Թուրքիայի Քրդական աշխատավորական կուսակցությունը (ՔԱԿ, քրդերեն՝ Partiya Karkerên Kurdistan-PPK) և Իրաքյան Քուրդիստանը ներկայացնող երկու ազդեցիկ քաղաքական կուսակցություններ՝ Քուրդիստանի դեմոկրատական կուսակցությունը (այսուհետ՝ ՔԴԿ, անգլերեն՝ Kurdistan Democratic Party/KDP, քրդերեն՝ Partiya Demokrata Kurdistan/PDK) և Քուրդիստանի հայրենասիրական միությունը (այսուհետ՝ ՔՀՄ, անգլերեն՝ Patriotic Union of Kurdistan/PUK, քրդերեն՝ Yekîti Nîştîmanî Kurdistan/YNK): Այս բոլոր երեք կուսակցություններն էլ ունեն իրենց համապատասխան «արբանյակային» կամ «քույր» քրդական քաղաքական կուսակցությունները Սիրիայում, որտեղ գործում են շուրջ երկու տասնյակ քրդական քաղաքական կուսակցություններ ու կառույցներ: Թուրքիայի դեմ գործող PKK-ի մասնաճյուղի կամ անվազն սիրիական հարթակում գաղափարակից ու դաշնակից կուսակցության համբավն ունի 2003 թ. հիմնված Սիրիայի քրդական Դեմոկրատական միություն կուսակցությունը (այսուհետ՝ ԴՄԿ, անգլերեն՝ The Democratic Union Party/DUP, քրդերեն՝ Partiya Yekîtiya Demokrat/PYD), որի առաջնորդն է Սալիհ Մուսլիմը: ԴՄԿ-ի վերահսկողությամբ գործում է Ժողովրդական պաշտպանության միավորումներ (քրդերեն՝ Yekîneyên Parastina Gel-YPG) կառույցը, որն ըստ էության ԴՄԿ-ի ռազմական թևն է:

Քուրդիստանի նախագահ և ՔԴԿ-ի առաջնորդ Մասուդ Բարզանին, իր հերթին, գերազանցապես աջակցում է Սիրիայի Քրդական դեմոկրատական կուսակցությանը (ՔԴԿ-Սիրիա կամ ՔԴԿ-Ս, *Kurdish Democratic Party in Syria/KDP-S*), որը նաև հայտնի է որպես «Ալ-Փարթի»: ՔԴԿ-Սիրիա քրդական քաղաքական կուսակցության առաջնորդը Աբդուլ Հաքիմ Բաշարն է, որն այժմ հիմնականում հաստատված է Քուրդիստանի Ռեզիմ-նալ կառավարության մայրաքաղաք Էրբիլում: Քուրդիստանի նախագահ Մասուդ Բարզանու և ՔԴԿ-Ս-ի առաջնորդ Աբդուլ Հաքիմ Բաշարի միջև շփումը մշտական բնույթ է կրում: Սիրիայում գործում են նաև պրոբարձանիական բազմաթիվ այլ քրդական ուժեր:

Սիրիայի քրդական զարգացումներում որոշակի ազդեցություն է ձգտում ապահովել նաև ՔՀՄ-ն: Սիրիայում գործող քրդական կուսակցությունների շարքում ՔՀՄ-ի հովանավորու-

թյունն է վայելում հիմնականում Սիրիայի Քրդական դեմոկրատական առաջադիմական կուսակցությունը (անգլերեն՝ The Kurdish Democratic Progressive Party in Syria), որի առաջնորդն է Համիդ Դարվիշը:

2011 թվականին Սիրիայում հակամարտության բռնկմանը զուգահեռ վերոհիշյալ երեք խոշորագույն քրդական կուսակցությունները սիրիական դաշտում գործող իրենց արբանյակային կուսակցություններին ուղղորդեցին միանգամայն տարբեր ուղղություններով: PKK-ն իր մարդկային ու նյութական ռեսուրսների զգալի մասն ուղղեց դեպի Դեմոկրատական միություն կուսակցությանը՝ օգնելով վերջինիս ստեղծել իր ռազմական կառույցը՝ YPG-ն: Պատահական չէ, որ 2012 թ. հուլիսի դրությամբ ԴՄԿ-ն արդեն իսկ վերահսկողություն էր հաստատել Սիրիայի քրդաբնակ տարածքների մեծագույն մասի նկատմամբ:

Մինչդեռ 2011 թ. հոկտեմբերին ՔԴԿ-ի գլխավորությամբ ու ՔՀՄ-ի աջակցությամբ ստեղծվեց Սիրիայի քրդական կուսակցությունների մի ընդդիմադիր դաշինք՝ Քրդական ազգային խորհուրդը (ՔԱԽ), որում ընդգրկվել էին հիշյալ երկուսն առաջնորդ գրեթե բոլոր քրդական կուսակցությունները, բացառությամբ ամենաազդեցիկի՝ ԴՄԿ-ի: ՔԱԽ-ը դարձավ Սիրիայում ԴՄԿ-ի հիմնական մրցակիցը: Թեև Իրաքյան Քուրդիստանի նախագահ և ՔԴԿ-ի առաջնորդ Մասուդ Բարզանու առջնափորձերը նպատակը Սիրիայի քրդերին միավորելն էր, ժամանակի ընթացքում Բարզանին հարկադրված էր Սիրիայի հարցում հարել թուրքական դիրքորոշմանը և քննադատական դիրքորոշում արտահայտել Ասադի վարչակարգի նկատմամբ: Մինչդեռ Իրաքի նախագահ (2005 թ. ապրիլի 7-2014 թ. հուլիսի 24) և ՔՀՄ-ի առաջնորդ Ջալալ Թալաբանին 2011 թ. դրությամբ իր քրդարկված աջակցությունն էր հայտնում Ասադին՝ առնվազն պահպանելով լոյալ չեզոքություն:

Վերոհիշյալ միջքրդական պայքարում հաղթող դարձավ Դեմոկրատական միություն կուսակցությունը՝ վերածվելով Սիրիայի քրդաբնակ տարածքներում գերիշխող ու առաջնորդող

⁴ Թալաբանին իր մտահոգություններն էր հայտնում «նաղիկ/արմատական ընդդիմության» հետ կապված՝ դեմ լինելով ցանկացած արտաքին (արևմտյան կամ թուրքական) միջամտությանը: Ավելին, 2012 թ. հուլիսին Ջալալ Թալաբանին ցավակցական հեռագիր հղեց Ասադի ընտանիքին՝ Սիրիայի պաշտպանության փոխնախարար Ասսիֆ Շավքաթի մահվան կապակցությամբ: Վերջինս Բաշարի քրոջ՝ Բուրայի ամուսինն էր:

ամենաազդեցիկ քաղաքական ուժի⁵:

Ներկայումս Դեմոկրատական միություն կուսակցությունը ոչ միայն հանդես է գալիս Սիրիայի քրդերի ամենաազդեցիկ ու առաջատար կուսակցության դիրքերից, այլև որոշակիորեն ուղղորդում է քրդական զարգացումները Սիրիայում: Հիշյալ իրողությունն առանձնահատուկ վերլուծության կարիք է զգում և ունի մի շարք պատճառներ:

Դեմոկրատական միություն կուսակցության գերիշխանության պարզանքները

1. Ասադի վարչակարգի գործունը:

2012 թ. հուլիսին աճող ապստամբական շարժման ճնշման տակ Սիրիայի կառավարությունը դուրս բերեց իր անվտանգության ուժերը երկրի քրդական մեծամասնություն ունեցող տարածքներից՝ դրանք թողնելով քրդական Դեմոկրատական միություն կուսակցության վերահսկողության ներքո⁶: Արդյունքում ԴԿԿ-ն (PYD), ըստ էության, սիրիական կառավարության համաձայնությամբ, դարձավ հիշյալ շրջանների դե ֆակտո կառավարությունը: Արևմտյան փորձագետների կարծիքով քրդաբնակ տարածքներից սիրիական զորքերը դուրս բերելու Բաշար ալ Ասադի որոշումը պայմանավորված էր երեք ռազմավարական հաշվարկներով: Նախ՝ Սիրիայի զինվորականությունը ձգտում էր համախմբել իր ռեսուրսները Դամասկոսում և Հալեպում ընթացող մարտերի ուղղությամբ: Երկրորդ՝ հաշվի առնելով Թուրքիայի աջակցությունն Ազատ սիրիական բանակին՝ Ասադը ցանկացավ, հավասարազոր պատասխան տալով, ուղերձ հղել Անկարային՝ սիրիացի ապստամբների Թուրքիայի կողմից ցուցաբերվող աջակցության համար: Հաշվի առնելով այն, որ ԴԿԿ-ն փոխկապակցված է Քրդական աշխատավորական կուսակցության (PKK-ի) հետ, որ հարձակումներ էր իրականացնում թուրքա-

կան պետության դեմ, ... քաասական ռեժիմը հստակ ուղերձ էր հղում Անկարային, որ PKK-ին առնչվող խմբավորմանն անվտանգության ապաստան է առաջարկել Թուրքիայի ջրամուտքին: Երրորդ՝ Դամասկոսը ձգտում էր ավելի պատակտել ընդդիմությանը՝ փորձելով ավելի բարձրացնել որոշ քուրդ խմբավորումների հավատարմությունը քաասական վարչակարգի նկատմամբ⁷: Քրդերին սիրիական ընդդիմությունից կտրելու նպատակով նախնական լուծում տրվեց նաև Սիրիայի քաղաքացիությունից 1962 թ. զրկված քրդերի խնդրին՝ վերջիններին էական հատվածին սիրիական քաղաքացիություն շնորհելու ճանապարհով⁸:

Այն փաստը, որ սիրիական կառավարական ուժերն, ըստ էության, ԴԿԿ-ին փոխանցեցին հյուսիսային Սիրիայի քրդաբնակ քաղաքներն ու գյուղերը, իսկ ԴԿԿ-ն դրանց նկատմամբ իր վերահսկողությունը հաստատեց առանց էական մարտերի ու կորուստների, վկայում է այն մասին, որ ԴԿԿ-ի և Սիրիայի իշխանությունների միջև գործարք էր կնքվել՝ լինի այն պաշտոնական բանակցությունների, թե ոչ պաշտոնական փոխհամաձայնության արդյունքում⁹:

Այսպիսով, ԴԿԿ-ն էականորեն հզորացավ Բաշար ալ Ասադի վարչակարգի հետ իր պրագմատիկ գործեակերպի արդյունքում: Մի կողմից, տեղ գտան հետևյալ իրողությունները. քրդական հիշյալ կուսակցությունը սեպ չխրեց Ասադի ռեժիմի հետ ունեցած իր հարաբերություններում և ստացավ ղեկարհն կացության մեջ հայտնված պաշտոնական Դամասկոսի աջակցությունը: Արդյունքում՝ ԴԿԿ-ի առջև ոչ միայն բացվեցին որոշակի խնդիրների լուծման ճանապարհները, այլև պտտեցիալ բազմաթիվ արգելքներն ու խոչընդոտները վերացվեցին: Մասնավորապես սիրիական հակամարտության վաղ փուլում ԴԿԿ-ն ստանձնեց մի շարք հաստատությունների

⁵ ԲԴԿ-ի հիմնական արևմտյան քննադատի համրավ ունեցող ամերիկացի փորձագետ Մաջլե Ռուբինի պնդմամբ, ինքը՝ Մասոդ Բարզանին, և պրոբարզանիական ուժերը միայն 5-ից 10% աջակցություն ունեն Սիրիայի քրդաբնակ տարածքներում: Stéu Michael Rubin, Lift the Blockade on Rojava, -The Kurdistan Tribune (January 27, 2014) -<http://kurdistantribune.com/2014/lift-blockade-on-rojava/>

⁶ Ilhan Tanir, Wladimir van Wilgenburg, and Omar Hossino, Unity or PYD Power Play? Syrian Kurdish Dynamics After the Erbil Agreement, -The Henry Jackson Society, London 2012, pp. 11-12.

⁷ Daniel Wagner and Giorgio Cafiero, In Syrian Kurdistan, a Different War, -Kurd Net (September 6, 2013) <http://www.ekurd.net/mismas/articles/misc/2013/9/syriakurd900.htm>

⁸ Президент Сирии идет на уступки: предоставил гражданство курдам в провинции Эль-Хасика, - NEWSru.com (7 апреля 2011 г.), -<http://www.newsru.com/world/07apr2011/ustupki.html>

⁹ Eva Savelsberg, The Kurdish Factor in the Syrian Revolution, - Syrian Studies Association Bulletin, Volume 18, No 1 (2013), - <https://ojs.siu.edu/ojs/index.php/ssa/article/view/2858>

(այդ թվում՝ դպրոցների, մշակութային կենտրոնների և այլն) բացման առաքելությունն այն վայրերում, որտեղ քրդերը մեծամասնություն էին կազմում¹⁰: Կուսակցությունն այդ իրողությունը դարձրեց հոգուտ իրեն աշխատող կարևորագույն գործոն: PKK-ի և Սիրիայի ռեժիմի միջև պատմական հարաբերությունների, ինչպես նաև Թուրքիայի ու Սիրիայի միջև լարվածության ծայրահեղ սրման արդյունքում Ասադի վարչակարգն իր նպաստը բերեց Սիրիայի քրդերի շրջանում ԴՄԿ-ի ազդեցության աճին: Մասնավորապես Սիրիայում ապստամբական շարժման ծավալումից հետո սիրիական բանտերում պահվող ԴՄԿ-ի 640 զինյալներ ազատ արձակվեցին¹¹:

Մյուս կողմից, ԴՄԿ-ն չգործեց ռեժիմը տապալելու նպատակ հետապնդող ընդդիմության հետ փոխհամաձայնության մեջ, այլ ընդհակառակը, սիրիական հակամարտության սկզբնական շրջանում այն դարձավ Ասադի ռեժիմի դեմ հստակորեն հանդես եկող Սիրիայի քրդական ուժերին ճնշող, ընդդիմացող ու զսպող գլխավոր դերակատար ուժը: Հետագայում ԴՄԿ-ի և սիրիական կառավարական ուժերի միջև տեղ գտան առանձին ընդհարումներ (2012թ. սեպտեմբերին, 2013թ. հունվար, փետրվար, ապրիլ և դեկտեմբեր ամիսներին, 2014 թ. մարտին և 2015 թ. հունվար և հունիս ամիսներին), սակայն դրանք գերազանցապես էպիզոդիկ դեր ունեցան, իրենց հիմքում ունեին վրեժխնդրությունը կամ կողմերի դիրքային պայքարը, կարճատև էին (հիմնականում մեկօրյա, իսկ առավելագույնը վեցօրյա ընդհարումների բնույթ էին կրում), և Սիրիայի կենտրոնական իշխանությունները նույնիսկ գերադասեցին լուրջ մատնել կամ չմեկնաբանել նմանատիպ իրողությունները: Ներկայումս Ասադի ռեժիմն ու ԴՄԿ-ն ռազմավարական դաշնակիցներ չեն, սակայն միևնույն ժամանակ չեն հեռացել միմյանցից: Ասադ-ԴՄԿ գործարքն ու տարրինակն «ոչ

դաշնակցային համագործակցությունը» բացատրվում են մի շարք գործոններով.

- Սիրիայի վարչակարգի ու PKK-ի միջև նախկինում (1980-ական-1990-ական թթ.) կերտվել էին համագործակցային հարաբերություններ, որոնք, բնականաբար, որոշակի ուղի հարթեցին Ասադի ռեժիմի ու ԴՄԿ-ի միջև ներկայիս հարաբերությունների համար:
- ԴՄԿ-ն անվերապահորեն ճնշում էր այլախոսական ու հակակառավարական ցույցերն իր համար հասանելի կամ իր մասնակի ազդեցության (նույնիսկ ոչ լիարժեք վերահսկողության) ներքո գտնվող քրդաբնակ տարածքներում (օրինակ՝ ԱՖրինում)¹² մասնավորապես 2011 թ. երկրորդ և 2012 թ. առաջին կեսի ընթացքում: Ավելին, մինչ օրս նմանատիպ ակտիվիստները զգուշանում են հակակառավարական ցույցեր կազմակերպելուց¹² քրդական երեք կանտոններում (ԱՖրին, Քոբանի և Հասեկե):
- Ասադը ԴՄԿ-ն համարում է մի միջոց՝ ընդդիմության կողմից գործողությունների նոր շրջանների ու հենակետերի ստեղծումը կանխելու համար:¹³ Ավելին, այն պահից սկսած, երբ Ազատ սիրիական բանակը նույնպես սկսեց գործել Սիրիայի քրդաբնակ տարածքներում, սիրիական իշխանությունների կողմից դրանց վերահսկողության փոխանցումը ԴՄԿ-ին նշանակում էր, որ այսուհետ ժողովրդական պաշտպանության միավորումները, այլ ոչ թե

¹⁰ О. Жигалина, К вопросу о политических организациях сирийских курдов, - Институт Ближнего Востока (21.02.2012)- <http://www.centrasia.ru/newsA.php?st=1329801300>

¹¹ St'u Mohammad Ballout, Syrian Kurds Trade Armed Opposition for Autonomy, -Al-Monitor (June 23, 2012),- <http://www.al-monitor.com/pulse/politics/2012/06/syrias-kurds-oppose-the-regime-y.html#>, տե՛ս նաև Oytun Orhan, "Syria's PKK Game," Sunday's Zaman, 14 Şubat 2012, http://www.sundayszaman.com/sunday/newsDetail_getNewsById.action?newsId=271361

¹² Eva Savelsberg, The Kurdish Factor in the Syrian Revolution, - Syrian Studies Association Bulletin, Volume 18, No 1 (2013),- <https://ojs.siu.edu/ojs/index.php/ssa/article/view/2858>

¹³ Մասնավորապես 2013 թ. հոկտեմբերին, երբ սկզբունքային նշանակություն ունեցող մարտեր էին ընթանում Սիրիայի քրդական ուժերի և սիրիական ընդդիմության միջև Հասեկեում և Հասեկեից հարավ ընկած շրջաններում, սիրիական զորքերն ըստ էության աջակցեցին քրդերին՝ հրետանային հարվածներ հասցնելով տվյալ շրջաններում կենտրոնացված սիրիական ընդդիմության ուժերին: St'u B Сирии продолжают столкновения между курдами и сирийскими боевиками, - ИА REGNUM (5 Октября 2013)- <http://www.regnum.ru/news/polit/1716148.html> 2015 թ. հուլիսին ժողովրդական պաշտպանության ուժերն (YPG) ու սիրիական բանակը համագործակցեցին նաև Հասեկեում՝ ընդդեմ ԻՊՊ զինյալների: Maher Al Mouanes, Syria regime, Kurds join to fight IS in Hasakeh, -AFP (July 20, 2015) <http://news.yahoo.com/syria-regime-kurds-join-fight-hasakeh-070536892.html>

սիրիական բանակն է պայքար մղելու զինված ընդդիմության դեմ (օրինակ՝ Ռաս ալ-Այնում)¹⁴։

- Լեզվափոխության և այլ հարցերում ԴՄԿ-ի ունեցած խնդիրներն ու սահմանափակումները նույնպես այն հիմնական պատճառների շարքում են, որ ուղղորդեցին Ասադի վարչակարգին քրդական կուսակցությունների շարքում ընտրելու հենց ԴՄԿ-ին որպես լծակ օգտագործելու տարբերակը։ Մշտապես մեղադրանքներ են հնչում, որ ԴՄԿ-ն PKK-ի մասնաճյուղն է Սիրիայում։ Հետևաբար, հաշվի է առնվում նաև իրավական ճանաչման խնդիրը. ԴՄԿ-ի հարցում թուրքական մտտեցումն ու քրդական հիշյալ կուսակցության դեմ գանազան քաղաքական ուժերի կողմից տարվող հակաքարոզչությունն ինքնին միանգամայն դժվարին խնդիր էին դարձնում ԴՄԿ-ի համար միջազգային լիարժեք աջակցության, առավել ևս իրավական ճանաչման ստացումը։ Ասադը նաև գիտակցում էր, որ սիրիական իշխանությունների հետ ԴՄԿ-ի համագործակցությունն իր հերթին կավելացնի ԴՄԿ-ի հասցեին հեղող մեղադրանքները՝ էլ ավելի բարդացնելով վերջինիս ճանաչումը¹⁵։
- Ակնհայտ էր նաև, որ Իրաքյան Քուրդիստանը չի կարող իր վերահսկողությունը հաստատել այս կարգի կառույցի

նկատմամբ։ Միաժամանակ, հաշվի առնելով Թուրքիայի դիրքորոշումն ու թուրքական գործոնը, բացառվում էր նաև ԴՄԿ-ՔՌԿ, մասնավորապես ԴՄԿ-ՔԴԿ սերտ համագործակցությունը, քանզի ՔԴԿ-ն քաղաքական ու տնտեսական էական կախվածություն ունի Թուրքիայից և ոչ միայն պատրաստ չէ, այլև անկարող է խզելու իր կապերը վերջինիս հետ¹⁶։ Լիովին բացառվում էր նաև ԴՄԿ-ի պրոթուրական գործելակերպը։ Այս կազմակերպությունը (ԴՄԿ-ն) իր սեփական զինյալներով (YPG), ինքնուրույն ու անկախ գործելակերպով, գաղափարախոսությամբ ու պահանջներով (որոշակի համագործակցություն Ասադի վարչակարգի հետ և հակակառավարական ելույթների ճնշում, ժողովրդավարական ինքնավարություն, քրդերի քաղաքական իրավունքների ապահովում) արդեն իսկ բացասական ընկալում ուներ մնացյալ՝ արաբական ընդդիմության շրջանակներում։ Վերոհիշյալի հետ մեկտեղ Սալեհ Մուսլիմը մշտապես հերքում է անկախության նպատակը¹⁷ առաջ բերելով գանազան քրդական շրջանակների հակասական վերաբերմունքը։

- «Ասադի ռեժիմը գերադասում է ունենալ քրդական շրջաններ, որոնք ներկայումս գտնվում են ԴՄԿ-ի վերահսկողության ներքո, և որտեղ չեն պլանավորվում ու իրականացվում նոր հարձակումներ ընդդեմ վարչակարգի (սիրիական կառավարության-Վ.Պ.), այլ ոչ թե տարածքներ, որոնք գտնվեն ընդդիմության կամ Մասուդ Բարզանու վերահսկողության ներքո, որոնք ապագայում անհամեմատ ավելի լուրջ անօնգաղտության պատճառ կարող էին հանդիսանալ Սիրիայի ներկայիս վարչակարգի համար։ Այս պահի դրությամբ Սիրիայում քրդական ապրամարական գոտիների ավալությունն այնքան էլ չի կա-

¹⁴ Ավելին, քանի որ Ռաս ալ-Այնում մարտնչող որոշ խմբավորումներ պատկանում էին «ռադիկալ իսլամիստներին, ԴՄԿ-ն չքննադատվեց հեղափոխության դեմ պայքար մղելու համար, այլ փոխարենը որոշակի համակրանք շահեց»։ St'ev Eva Savelsberg, The Kurdish Factor in the Syrian Revolution, - Syrian Studies Association Bulletin, Volume 18, No 1 (2013), - <https://ojs.siu.edu/ojs/index.php/ssa/article/view/2858>

¹⁵ Մասնավորապես Սիրիայի քրդերի շրջանում գերիշխող ԴՄԿ-ի հետ շփումների մեջ ստնելու առաջարկները մերժող գերմանական կառավարության կողմից բերվող հիմնական առարկություններն էին՝ ԴՄԿ-ի չափազանց սերտ կապերը PKK-ի հետ, Ասադի դեմ գործող ու գերազանցապես սուննի արաբական գերակշռություն ունեցող ընդդիմությանը միանալու ԴՄԿ-ի մերժումը, ԴՄԿ-ի՝ պաշտոնական Դամասկոսի հետ միայն ժամանակ առ ժամանակ ընդհատվող համագործակցությունը և մրցակից քրդական կուսակցությունների դեմ ձեռնարկվող հալածանքները։ St'ev Günter Seufert, The Return of the Kurdish Question: On the Situation of the Kurds in Iraq, Syria and Turkey, - German Institute for International and Security Affairs, SWP (Stiftung Wissenschaft und Politik) Comments, № 38, August 2015, p. 3, - http://www.swp-berlin.org/fileadmin/contents/products/comments/2015C38_srt.pdf

¹⁶ The Fragile Gains of Syria's Kurds, - Global Intelligence, Stratfor (August 1, 2014), - [Lebanonwire http://www.lebanonwire.com/1508MLN/15080103STR.asp](http://www.lebanonwire.com/1508MLN/15080103STR.asp)

¹⁷ PYD's leader says no plan for a Kurdish state in northern Syria, - Kurdish Daily News (June 24, 2015) <http://kurdishdailynews.org/2015/06/24/pyds-leader-says-no-plan-for-a-kurdish-state-in-northern-syria/>

րևորվում Ասադի վարչակարգի կողմից, քանի դեռ դրանք չեն ծառայում ընդդիմության նպատակներին»¹⁸:

- Սիրիական իշխանությունները ձգտում էին խաղարկել քրդական խաղաքարտն ընդդեմ Թուրքիայի, ինչպես դա արել են բազմիցս նախկինում: Ինքնին հասկանալի է, որ ԱԶԿ-ն մի կողմից չէր կարող հանդուրժել Սիրիայի հյուսիսում և իր հարավում ԴԿԿ/ՔԱԿ (PKK) գործունի ռազմական և քաղաքական դիրքերի ամրապնդումը: Սակայն մյուս կողմից խնդրի ռազմական լուծումը թուրքական ներխուժման ճանապարհով նույնպես չէր բխում Թուրքիայի շահերից, քանզի վերջինիս դեմ կմիավորեր ԴԿԿ-ին ու վերջինիս քննադատներին՝ Սիրիայի քաղաքական և ռազմական այլ խմբավորումների¹⁹:
- ԴԿԿ-ի դիրքերի ամրապնդման և հետագա հզորացման գործում Ասադի վարչակարգի և թուրքական գործոնները կարևորող թուրք փորձագետ Ռեյխան Գյուները իրադարձությունների զարգացման հետևյալ մեկնությունն է տալիս. «ԴԿԿ-ի հզորացման ամենաառաջին պատճառներից մեկն այն է, որ այս խմբավորումը, ի տարբերություն ընդդիմադիր մյուս խմբերի, ռազմական պայքար չի մղում ընդդեմ Ասադի վարչակարգի: Քաղաքացիական պատերազմի սկզբում քրդերը նպատակ ունեին ստեղծելու իրենց ապահով ու անվտանգ գոտին՝ հակամարտություններից դուրս մնալու ճանապարհով: Սակայն, քանի որ Սիրիայի ազատ բանակը փորձում էր տեղակայվել քրդական խիտ բնակչություն ունեցող այնպիսի քաղաքներում, ինչպիսիք են Քամըշլուն և Աշրաֆիյան, ինչպես նաև հիշյալ շրջանների քրդական քաղաքացիական բնակչության դեմ նրանց հարձակումների արդյունքում, քրդերը հարկադրված էին քաղաքացիական պատերազմի կողմ դառնալ: Այս իրողությունը քրդերի համար ստեղծեց բոլոր հիմքերը՝ ԴԿԿ-ին աջակցելու համար՝ որպես առաջին այլընտրանքային տարբերակ և Ասադի

ոեժմին նույնպես բերեց ԴԿԿ-ին աջակցելու ուղուն: Այսպիսով, Ասադի վարչակարգի ուժերը, որոնք դուրս եկան Սիրիայի հյուսիսային շրջաններից, հիշյալ շրջանների վերահսկողությունը թողեցին ԴԿԿ-ի ուժերին²⁰: Հետևաբար, ԴԿԿ-ի զինյալներին Թուրքիա-Սիրիա սահմանի երկայնքով տեղաբաշխելու միջոցով PKK-ի Սիրիայի մասնաճյուղը կարող էր օգտագործվել որպես սպառնալիք ընդդեմ Թուրքիայի»²¹:

2. Սիրիայում տեղական կառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու, Սիրիայի քրդական կանտոններում ընտրությունների անցկացման, Ժողովրդական պաշտպանության միավորումների (YPG) և Ասայիջի ուժերի լիազորությունների օրինականացման, ինչպես նաև հիշյալ կանտոններում բնակվող Ժողովուրդների իրավունքները սահմանադրորեն ամրագրելու գործոնները:

ՔԲԿ-ի և/կամ նրա գաղափարախոսությունը կիսող ԴԿԿ-ի ռազմավարության կարևորագույն չափումներից մեկն էլ մասնակցությունն էր 2011 թ. դեկտեմբերին Սիրիայում տեղ գտած տեղական կառավարման մարմինների ընտրություններին²²: Մինչդեռ սիրիական ընդդիմությունը բոյկոտեց հիշյալ ընտրությունները՝ դրանք չկարևորելով: Արդյունքում ԴԿԿ-ն, որը ճանաչված չէր միջազգային հանրության կողմից որպես օրինական կազմակերպություն, մասնակցելով Սիրիայում տեղ գտած ընտրություններին, պահպանեց «Արևմտյան Քուրդիստանի Ժողովրդական խորհուրդ» անվանումով հայտնի իր հաստատությունները երկրի քրդաբնակ շրջաններում՝ տեղական կառավարման մարմիններում որոշակի՝ պաշտոն գրա-

¹⁸ Մեջբերումը համաձայն 'Suriye'de Kürt Hareketleri (Kurdish Movements in Syria).- ORSAM (Ortadoğu Stratejik Araştırmalar Merkezi/Center for Middle Eastern Strategic Studies) Report № 127, August 2012, Ankara, ORSAM 2012: p. 32.

¹⁹ St'ü Eva Savelsberg, The Kurdish Factor in the Syrian Revolution.- Syrian Studies Association Bulletin, Volume 18, No 1 (2013).- <https://ojs.siu.edu/ojs/index.php/ssa/article/view/2858>

²⁰ Սիրիական բանակի վերահսկողության ներքո մնացին միայն ռազմավարական նշանակություն ունեցող առանձին կետեր, մասնավորապես Քամըշլուի և Հասեկեի հատվածում:

²¹ Reyhan Güner, 'Why is PYD getting upper hand in Syria?,-The Journal of Turkish Weekly (JTW), USAK (March 1, 2014).-<http://www.turkishweekly.net/2014/03/01/op-ed/why-is-pyd-getting-upper-hand-in-syria/>

²² Municipal elections in Syria, Radio New Zealand 13 December 2011 <http://www.radionz.co.nz/news/world/93584/municipal-elections-in-syria> Michael Olschimke, Local Elections in Syria (December 12, 2011)- <http://www.olschimke.eu/2011/12/12/local-elections-in-syria/>, Syria unrest: Local elections held despite fighting.- BBC (12 December 2011), <http://www.bbc.com/news/world-middle-east-16135298>

դեցնող ու կարևորագույն դերակատարում ունեցող յուրային անձանց միջոցով, որոնք տեղեկում այդ դիրքերում հայտնվեցին վերոհիշյալ ընտրությունների արդյունքում:

Այսպիսով, ԴՄԿ-ն ինչ-որ չափով օգտվեց Ասադի կողմից անցկացված ընտրություններից՝ երկրի քրդաբնակ շրջաններում իր լեգիտիմության շրջանակներն ընդլայնելու ու սպահովելու նպատակով: Հետագայում, երբ Ասադի ուժերը հեռանում էր որոշակի տարածքներից, ԴՄԿ-ի անդամները, որոնք փաստացի նշված շրջանների բնակչության ընտրված ներկայացուցիչներն են կամ առնվազն ներկայացվում են որպես այդպիսին, գալիս են փոխարինելու այսպես կոչված «նախորդ ուժերին»²³:

Արդեն 2013 թվականի նոյեմբերին ԴՄԿ-ն հայտարարեց երեք ոչսահմանակից ինքնավար տարածքներում կամ կանտոններում (Աֆրին, Քոբանի և Ջազիրա) միջանկյալ կառավարության ստեղծման մասին²⁴: 2014 թ. Ջազիրայի, Քոբանի և Աֆրինի կանտոնները ինչպես նաև ինքնավարության ինքնավարությունը: 2014 թ. հունվարին հռչակվեց նաև վերջիններիս Սահմանադրությունը՝ «Սոցիալական պայմանագրի կանոնադրությունը»²⁵: Իսկ արդեն 2015 թ. մարտի 13-ին տեղ գտած տեղական ընտրությունների արդյունքում ձևավորվեցին վերոհիշյալ երեք կանտոնների տեղական ինքնակառավարման մարմինները: Թեև վերոհիշյալ երեք կանտոններն իրական ինքնավարություն էին ունենալու, և ԴՄԿ-ի անվանումը չէր հիշատակվում, հիշյալ իրողությունն էլ ավելի ամրապնդեց ԴՄԿ-ի դիրքերը Ռոժավայում (Արևմտյան կամ Սիրիական Քուրդիստանում): Վերջինս բաղկացած էր լինելու վերոհիշյալ երեք կանտոններից և պաշտոնապես կոչվելու էր «Աֆրինի, Ջազիրայի և Քոբանի Դեմոկրատական ինքնավար ռեգիոններ»՝ միաժամանակ դիտարկվելով որպես Սիրիայի տարածքի բաղկացուցիչ մաս: Թեև «Սոցիալական պայմանագրի կանոնադրությունում» ԴՄԿ-ն չէր հիշատակվում, այնուամենայնիվ,

հիշատակվում էին վերջինիս ռազմական թևն (ժողովրդական պաշտպանություն միավորումները՝ YPG) ու անվտանգության մարմինը (Ասայիշ), և ամրագրվում էին վերջիններիս լիազորությունները: Մասնավորապես նշվում էր, որ «ժողովրդական պաշտպանություն միավորումները (YPG) երեք կանտոնների միակ ռազմական ուժն են, որոնք լիազորված են պահպանելու և պաշտպանելու Ինքնավար ռեգիոնների և դրանց ժողովուրդների անվտանգությունը՝ ընդդեմ ներքին և արտաքին սպառնալիքների», և որ «Ասայիշ ուժերի վրա են դրվում Ինքնավար ռեգիոններում քաղաքացիական ոստիկանական գործառույթները»²⁶:

Ոչ պակաս կարևոր էր նաև այն իրողությունը, որ «Աֆրինի, Ջեզիրայի և Քոբանիի Դեմոկրատական ինքնավար ռեգիոնները» դիտարկվում էին որպես «քրդերի, արաբների, ասորիների, քաղղեացիների, արամեացիների, թուրքմենների, հալեբի ու չեչենների կոնֆեդերացիա»²⁷: Թեև Ջազիրա կանտոնի պաշտոնական լեզուներ էին հռչակվում միայն քրդերենը, արաբերենը և ասորերենը, նշվում էր, որ «բոլոր համայնքներն իրենց մայրենի լեզվով կրթելու և կրթվելու իրավունք ունեն»²⁸:

3. ԴՄԿ-ի զինված ուժերի առկայության գործոնը:

ԴՄԿ-ին հաջողվեց ստեղծել, կայացնել ու ամրապնդել նաև իր զինված ուժերը Սիրիայում՝ վերածելով այն իրական գործոնի: Սիրիայի քրդերի շրջանում ՔԱԿ-ի գործունեության և վերջինիս զինյալների հավաքագրմանն ուղղված աշխատանքի փորձն անգնահատելի էր ԴՄԿ-ի զինված խմբավորումների հզորացման գործում: Հայտնի է, որ դեռ 2011 թ. սեպտեմբերի դրությամբ Իրաքից ՔԱԿ-ի որոշ զինյալներ էին աստիճանաբար ժամանում Սիրիա: Նրանց ներկայությունը, կազմակերպական մակարդակն ու զինվածության փաստն ինքնին սահմանափակեցին այլ կուսակցությունների՝ ԴՄԿ-ի վերահսկողության ներքո գտնվող տարածքներ մուտք գործելու կամ այստեղ ազդեցություն ձեռք բերելու հնարավորությունը:

²³ Suriye'de Kürt Hareketleri (Kurdish Movements in Syria).--ORSAM (Ortadoğu Stratejik Araştırmalar Merkezi/Center for Middle Eastern Strategic Studies) Report № 127, August 2012, Ankara, ORSAM 2012: pp. 33-34.

²⁴ PYD Announces Surprise Interim Government in Syria's Kurdish Regions.- Rudaw (13.11.2013) <http://rudaw.net/english/middleeast/syria/13112013>

²⁵ Charter of the Social Contract (Self-Rule in Rojava).- Peace in Kurdistan (29 January 2014)- <http://peaceinkurdistancampaign.com/charter-of-the-social-contract/>

²⁶ Տե՛ս նույն տեղում, «Սոցիալական պայմանագրի կանոնադրություն», Հոդված 15:

²⁷ Տե՛ս նույն տեղում, «Ներածություն»:

²⁸ Տե՛ս նույն տեղում, «Սոցիալական պայմանագրի կանոնադրություն», Հոդված 9:

ԴՄԿ-ի վերահսկողության ներքո գտնվող զինված խմբերը ժամանակի ընթացքում, թերևս, վերածվեցին Սիրիայի քրդերի զինված ուժերի: Այդ զինված ուժերը, որոնք գործում են «**Ժողովրդական պաշտպանության ուժեր**» (միավորումներ կամ կոմիտեներ, քրդերեն՝ Yekîneyên Parastina Gel-YPG) անվան տակ, ծառայել են երկու հիմնական նպատակների՝ նախ որպես «պետության» մարմիններ՝ քրդական բնակավայրերից հեռացած Ասադի ուժերի քաղաքական գործիչների փոխարեն, ինչպես նաև որպես պաշտպանական ուժեր՝ 2012 թ. հուլիսի 19-ից հետո ԴՄԿ-ի վերահսկողության ներքո անցած քրդաբնակ տարածքների համար²⁹: Եթե 2014 թ. հունվարին հռչակված սահմանադրությամբ՝ «Սոցիալական պայմանագրի կանոնադրությամբ», հաստատվեցին «Ժողովրդական պաշտպանության միավորումների (YPG)» և «Ասայիշի» լիազորությունների շրջանակները, ապա 2014թ. հուլիսին ընդունված և Սիրիայի քրդաբնակ տարածքներում կիրառման մեջ դրված «Հին պարտության մասին օրենքով»³⁰ ոչ միայն ապահովվում էր զինված ուժերի համալրումը, այլև պետական կառույցին վայել մակարդակի բարձրացվում հիշյալ գործընթացը:

Ակնհայտ է, որ ԴՄԿ-ի զինված ուժերի ձևավորման գործում էական դեր խաղաց թե՛ Ասադի ուժերի կողմից տրամադրված, թե՛ իրենց կողմից ձեռք բերված զենքի գործոնը: Սակայն չպետք է անտեսվի առաջին հերթին Քրդական աշխատավորական կուսակցության (ՔԱԿ-ի կամ PKK-ի) գործոնը: ՔԱԿ-ը ժամանակ առ ժամանակ Հյուսիսային Իրաքում պահվող զինյալների խմբեր էր ուղարկում Սիրիա՝ ԴՄԿ-ի զինյալ թևի՝ Ժողովրդական պաշտպանության ջոկատների կազմում մարտնչելու համար³¹: Ներգրավվում էին նաև արդեն իսկ Սիրիա և ԻԻՀ անցած PKK-ի մարտիկները: Թուրքական ազգային հետախուզական ծառայության դեռ 2013 թ. հոկտեմբերին պատրաստված զեկուցագրում նշվում էր, որ Սիրիայում PKK-ի

զինյալ կառույցը ներառում է մի շարք ռազմական ստորաբաժանումներ՝ տղամարդկանց դեսանտայինները, արևմտյան և արևելյան ճակատի զինված խմբավորումները, կանանց գումարտակը, անվտանգության գումարտակը և ոստիկանական ուժերը: Կա նաև հատուկ նշանակության գումարտակ: Ընդ որում, տարբեր վայրերից (Թուրքիայից, Սիրիայից և Իրանից) PKK-ին միանալու նպատակով եկող երիտասարդ ջուրջ զինյալները սկզբում քաղաքական, իսկ այնուհետև ռազմական ուսուցում անցնելուց հետո ներգրավվում են ընթացող հակամարտության մեջ³²: Կարևոր իրողություններից մեկն էլ այն է, որ PKK-ին հաջողվում է Իրաքյան Քուրդիստանում ջուրջ երիտասարդների էական հավաքագրում իրականացնել: Նույնիսկ 2015 թ. ընթացքում, չնայած թուրքական օդուժի կողմից Հյուսիսային Իրաքում տեղաբաշխված PKK-ի ճամբարներին ու հենակետերին հուլիս ամսից սկսած հասցվող օդային հարվածներին ու թուրքական տրանսսահմանային գործողություններին, Հյուսիսային Իրաքում աստիճանաբար ավելի մեծ թիվ կազմող իրաքցի ջուրջ երիտասարդներ են մեկնում Քանդիլ PKK-ին միանալու և Իսլամական պետության դեմ պայքար մղելու նպատակով³³:

4. «Քրդական» կամ «դեմոկրատական նախաձեռնությունը»³⁴ Թուրքիայում և Թուրքիայի «պասիվ ներգրավվածությունը»:

Մեր կարծիքով «քրդական» կամ «դեմոկրատական նախաձեռնությունը» Թուրքիայում, ինչպես նաև թուրքական կա-

³² MIT: РПК создана в Сирии батальон из 1000 бойцов,- Kurdistan.Ru (15.10.2013) - http://kurdistan.ru/2013/10/15/news-19828_MIT_RPK_sozdala_v_S.html

³³ Իրաքյան Քուրդիստանից PKK-ն կարողանում է յուրաքանչյուր ամիս հավաքագրել շուրջ 100 ջուրջ երիտասարդների: Sb'u Independent: Kuzey Irakli Kurt gencler PKK'ya katiliyor (09.09.2015) <http://www.halkindostlari.com/Haber/1/5082/independent-kuzey-irakli-kurt-gencler-pkk-ya-katiliyor.aspx>

³⁴ 2009 թ. կեսերին իշխող ԱԶԿ-ն պատրաստեց Թուրքիայում քրդական խնդրի կարգավորման ուղղված դեմոկրատական բարեփոխումների մի փաթեթ, որը ստացավ «քրդական նախաձեռնություն» անվանումը: Սակայն հետագայում այդ հասկացության փոխարեն շրջանառության մեջ դրվեց ավելի չեզոք համարվող «դեմոկրատական նախաձեռնություն» անվանումը:

²⁹ Suriye'de Kürt Hareketleri (Kurdish Movements in Syria).- ORSAM (Ortaođu Stratejik Arařtirmalar Merkezi/Center for Middle Eastern Strategic Studies) Report № 127, August 2012, Ankara, ORSAM 2012: p. 34.

³⁰ Zara Syda, Conscription Law: PYD calls on Syria Kurds to 'defend dignity',- ARA News (July 19, 2014) - <http://aranews.net/2014/07/conscription-law-pyd-calls-syria-kurds-defend-dignity/>

³¹ MIT: РПК создана в Сирии батальон из 1000 бойцов,- Kurdistan.Ru (15.10.2013) - http://kurdistan.ru/2013/10/15/news-19828_MIT_RPK_sozdala_v_S.html

նավարության և PKK-ի միջև սկսված բանակցային գործընթացը նույնպես նպաստեցին ԴՄԿ-ի ամրապնդմանը: Հիշյալ իրողություններն էականորեն կաշկանդեցին Թուրքիայի գործողություններն ու առժամանակ բացառեցին թուրքական կողմի՝ ԴՄԿ-ին և PKK-ին ռազմական հարվածներ հասցնելու, այն է՝ Թուրքիայի առջև ծառայած խնդրի ռազմական լուծման տարբերակը:

PKK-ի հետ բանակցությունների առնչությամբ թուրք փորձագետ Ռեյհան Գյուները մասնավորապես նշում է. «PKK-ի հետ թուրքական կառավարության բանակցային գործընթացը նույնպես նպաստեց ԴՄԿ-ի ամրապնդմանը: Հայտնի է, որ, բանակցությունների հետ կապված, Թուրքիայից ինքնուրույն հեռացած PKK-ի զգալի թվով զինյալներ հաստատվեցին Շահիդանի ճամբարում՝ Իրանում, ինչպես նաև Սիրիայի որոշ շրջաններում, ինչպես, օրինակ է Քուրանիում, Քամըշլուում և Աֆրինում: Քուրդ այն զինյալները, ովքեր երկար ժամանակ էին մնացել Լեռներում և ավելի փորձառու էին դարձել զինված հարձակումների համար, ներգրավվեցին ժողովրդական պաշտպանության զորամիավորումներ (YPG)՝ ԴՄԿ-ի (PYD) զինված մասնաճյուղեր: Այսպիսով, ԴՄԿ-ն ռազմական առումով ուներ ինչպես որակական, այնպես էլ քանակական առավելություն մյուս խմբերի նկատմամբ»³⁵:

Թուրքիան քնականաբար գիտակցում էր, որ պրո-PKK-ական ուժերն ու մասնավորապես ԴՄԿ-ն, օգտվելով իրավիճակից, ամրապնդում են իրենց դիրքերը Սիրիայում: Սակայն էրդողանը չէր ցանկանում վտանգել հաշտեցման գործընթացը, քանզի դրա արդյունքում ԱԶԿ-ն ընտրություններում ծայնեղ կկորցներ երկրի քրդաբնակ շրջաններում: Ավելին, առնվազն 2012 թ. հետո (ընդհուպ մինչև 2015 թ. հուլիսն ընկած ժամանակահատվածը) թուրքական կողմը հարվածներ չէր հասցնում PKK-ի դիրքերին Իրաքյան Քուրդիստանում: Բացի այդ, թուրքական կողմը հույս ուներ, որ ներգրավվելով սիրիական հակամարտություն՝ PKK-ն ու ԴՄԿ-ն ահռելի նյութական ու մարդկային կորուստներ կունենան, և որ քրդերն ու իսլամիստները, միմյանց թուլացնելով, ավելի խոցելի կդառնան Թուրքիայի համար: Սակայն, չնայած ահռելի նյութական ու մարդկային

կորուստներին, ԴՄԿ-ն ամրապնդում էր իր դիրքերը Սիրիայում, և նրա հզորացումը, ձնազնդի մոդել հիշեցնելով, անվերջ սնուցվում էր:

Այսպիսով, Սիրիայում քրդերի դիրքերի ամրապնդման գործում էական դեր խաղաց Թուրքիայի «պասիվ ներգրավվածությունը» և «քաղաքական ու անվտանգության վակուումը»՝ ցնցելու ԴՄԿ-ի և նրա ռազմական թևի՝ YPG-ի կարողությունը³⁶:

5. ԱՄՆ-ի դիրքորոշումն ու ԴՄԿ-ին ցուցաբերվող ամերիկյան աջակցությունը:

Կարևորագույն իրողություն էր նաև ԴՄԿ-ին ԱՄՆ-ի կողմից ցուցաբերվող ոչ անմիջական օգնությունը ռազմական գործողությունների ընթացքում (օդային հարվածների և օդից զենք, զինամթերք ու դեղորայք մատակարարելու) և ԴՄԿ-ին քնույթագրելու ու որակելու հարցում, որին զուգահեռաբար սկսվեցին³⁷ ԴՄԿ-ին շարունակական ամերիկյան ռազմական աջակցություն ցուցաբերելու շուրջ քննարկումներն³⁸ ու հիշյալ աջակցության ցուցաբերումը: Որքան էլ Թուրքիան փորձեց ԴՄԿ-ն ներկայացնել որպես PKK-ի սիրիական թև և Իսլամական պետությունն ու ԴՄԿ-ն՝ որպես միանման ու հավասարազոր սպառնալիք ներկայացնող ահաբեկչական կառույցներ,³⁹ միջազգային հանրությունը չընդունեց այդ տեսակետն ու դիտարկեց ԴՄԿ-ն որպես հնարավոր դաշնակից: Լատենավորապես դեռ 2014 թ. հոկտեմբերին ԱՄՆ պետդեպար-

³⁶ The Fragile Gains of Syria's Kurds,- Global Intelligence, Stratfor (August 1, 2014), <http://www.lebanonwire.com/1508MLN/15080103STR.asp>

³⁷ Չեչեի մատակարարման հարցի շուրջ ԱՄՆ-ի և ԴՄԿ-ի միջև առաջին անմիջական քննարկումները տեղ գտան 2014 թ. հոկտեմբերին՝ Քուրանիի զարգացումների առնչությամբ: Տե՛ս US, PYD have new talks, discuss arms transfer to Syrian Kurds,- Today's Zaman (October 19, 2014)- http://www.todayszaman.com/anasayfa_us-pyd-have-new-talks-discuss-arms-transfer-to-syrian-kurds_362061.html

³⁸ Verda Özer, PYD 'promised' US to not give arms to PKK,- Hürriyet Daily News (December/08/2014)

<http://www.hurriyetdailynews.com/pyd-promised-us-to-not-give-arms-to-pkk.aspx?PageID=238&NID=75307&NewsCatID=359>, Кеppi: Военная помощь курдам не противоречит политике США,- Национальная Служба Новостей (НСН), 20 Октября 2014-<http://nsn.fm/hots/kerri-voennaya-pomoshch-kurdam-ne-protivorechit-politike-ssha.php>

³⁹ Fahrettin Altun, Turkey in the snare of ISIS and PKK,- Daily Sabah (July 24, 2015) <http://www.dailysabah.com/op-ed/2015/07/24/turkey-in-the-snare-of-isis-and-pkk>

³⁵ Reyhan Güner, Why is PYD getting upper hand in Syria?,-The Journal of Turkish Weekly (JTW), USAK (March 1, 2014),-<http://www.turkish-weekly.net/2014/03/01/op-ed/why-is-pyd-getting-upper-hand-in-syria/>

տամենտի փոխտոնակ Մարի Հարֆը, արծազանքելով էրդոզանի այն պնդմանը, թե Թուրքիայի համար «PKK-ն ու ԴՄԿ-ն երկվորյակներ ու զույգեր են», հայտարարեց, որ ԱՄՆ-ի տեսանկյունից «ԴՄԿ-ն ահաբեկչական կազմակերպություն չէ»⁴⁰, և «PKK-ն ու ԴՄԿ-ն տարբեր կազմակերպություններ (կառույցներ) են»⁴¹: Թուրքիայում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Բասսն իր հերթին 2015 թ. հունիսին տեղ գտած իր ելույթում ոչ միայն ընդունեց, որ ԱՄՆ-ը ԻՊԻ-ին հասցվող օդային հարվածների միջոցով աջակցում է ԴՄԿ-ին, այլև հայտարարեց, որ «ԱՄՆ-ը, ի տարբերություն Թուրքիայի, չի ճանաչում ԴՄԿ-ն որպես ահաբեկչական կազմակերպություն և չի գտնում, որ այն կապված է Քուրդիստանի աշխատավորական կուսակցության (PKK-ի) հետ»⁴²:

ԱՄՆ-ը YPG-ին աջակցելու մի շարք պատճառներ ունի: Սակայն կարևորվում են դրանցից երկուսը.

- Նախ, YPG-ի հարձականքը հիմնականում հաջող ավարտ են ունեցել, և սիրիացի քրդերը գերազանցապես կենտրոնացած են ԻՇԻՊ-ի դեմ պայքարի վրա, քանզի նրանց համար, ի տարբերություն ընդդիմադիր այլ ուժերի, առաջին պլանում սիրիական կառավարական ուժերի դեմ պայքարը չէ:
- Պատճառներից երկրորդը որոշակիորեն կապվում է հասարակական կարծիքի հետ: Արևմուտքի հասարակական կարծիքը որոշակի համակրանք է տաժում քրդերի հանդեպ և հակված է դիտարկելու քրդերին ծայրահեղականության դեմ ճակատամարտ մղող և առավել առաջադեմ մտածելակերպ ունեցող ապստամբական խմբի լույսով: Նույնը չի կարելի ասել տարածաշրջանային հովանավորներից օգնություն ստացող անհամար այլ խմբակցությունների մասին, որոնցից շատերը համագործակցել են

ալ-Քաիդա-ի սիրիական կառույցի՝ Նուարա ճակատի հետ⁴³:

Թեև ԱՄՆ-ԴՄԿ լիարժեք համագործակցությունը դեռևս կայսլված է բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններից, այնուամենայնիվ, ակնհայտ են դրական միտումները ԴՄԿ-ի հարցում ԱՄՆ-ի դիրքորոշման մեջ⁴⁴:

Իրադարձությունների նման զարգացմանը նպաստեցին սիրիական զարգացումներում Թուրքիայի «պասիվ ներգրավվածությունը» և «քաղաքական ու անվտանգության վակուումը» լցնելու ԴՄԿ-ի և նրա ռազմական թևի՝ YPG-ի կարողությունը: Վերոհիշյալի հետ կապված արևմտյան փորձագետները մասնավորապես նշում են հետևյալը. «YPG-ի հաջողություններն աճեցին, քանի որ Թուրքիան պասիվ էր ներգրավված հակամարտության մեջ, քայլ կատարելով միայն իր համար նախապատվելի խմբերին աջակցություն տրամադրելու համար: Վաշինգտոնն ավելի մեծ չափով ներգրավվելու կոչ էր անում Անկարային, սակայն Թուրքիան կանգնած էր ինչպես ներքին, այնպես էլ ռազմավարական մարտահրավերների առջև, որոնք ստիպում էին նրան տատանվել ակտիվ, անմիջական ձևով ներգրավվածության հարցում: Այս պատճառով է, որ ԴՄԿ-ն կարողացավ հաստատել իր հարաբերական ինքնավարության շրջանակը քաղաքական և անվտանգության վակուումի պայմաններում, և Միացյալ Նահանգներն աջակցեց քուրդ զինյալներին Սիրիայի հյուսիսում, որպեսզի գործընկեր ունենան մի հարթակում, որը Թուրքիան հրաժարվում է զբաղեցնելուց:

Թուրքիան նույնիսկ լռելյայն, ժամանակ առ ժամանակ, հեշտացրեց YPG-ի նպատակների իրագործումը: Անկարան, օրինակ՝ նպաստեց քրդական համալրող ուժերի շարժմանը դեպի Քոբանի: Մինչդեռ YPG-ը վաստակեց Իսլամական պետության դեմ պայքարող տարածաշրջանային առավել արդյու-

⁴⁰ ABD: PYD bizim için terör örgütü değil,- Sabah 21.10.2014, <http://www.sabah.com.tr/dunya/2014/10/21/abd-pyd-bizim-icin-teror-orgutu-degil>

⁴¹ 'PKK ile PYD Aynı Değil',- Tarafis haber 21.10.2014 <http://www.tarafisizhaber.com/pkk-ile-pyd-ayni-degil-8535>

⁴² США: «Мы не собираемся создавать Курдистан»,- Ria Taza (24-06-2015) <http://riataza.com/russian/politics/197-ssha-my-ne-sobiraemsa-sozdavat-kurdistan.html>

⁴³ Michael Stephens, Aaron Stein, The YPG: America's new best friend?,- Al Jazeera (28 June 2015) <http://www.aljazeera.com/indepth/opinion/2015/06/ypg-america-friend-isil-kurds-syria-150627073034776.html>

⁴⁴ Mustafa Gurbuz, US-PYD rapprochement: a shift in Washington's strategy?,- Rudaw (24/10/2014) <http://rudaw.net/english/opinion/241020141>

նավետ գեղեցիկ ուժի համբավը, մասնավորապես արևմտյան ՂՂՄ-ներում»:⁴⁵

Անկարան խորապես մտահոգված է ԱՄՆ-ի կողմից ԴԿԿ-ին ցուցաբերվող աջակցությամբ, այն իբրև ահաբեկչական կառույց ջնանաչելու փաստով, ԴԿԿ-ի առաջխաղացմամբ ու ձեռքբերումներով և միջազգային ՂՂՄ-ներում նրանց վերաբերյալ համակրանքով լի հիշատակումներով: Սակայն, անտեսելով թուրքական կողմի մտահոգությունները, ԱՄՆ-ը պատրաստակամ է շարունակելու սիրիացի քրդերին ցուցաբերվող օդային աջակցությունը ինչպես Եփրատի հարևանությամբ՝ արևմուտքում, այնպես էլ Ռաքքայի ծայրամասի հարևանությամբ՝ հարավում: Ավելին, 2015 թ. հոկտեմբերի ընթացքում իրականացվում է ամերիկյան ծրագրերն իրագործող տեղական ուժերի կրալիցիայում ԴԿԿ-ի ընդգրկումը, և քննարկվում է վերջիններիս ցուցաբերվելիք ամերիկյան բազմաբնույթ օգնության խնդիրը:

Փորձագիտական որոշ շրջանակներ գտնում են, որ ԱՄՆ-ին պետք է մտահոգի այն հարցը, թե արդյո՞ք, թուրքական պետության թշնամուն աջակցելով՝ ԱՄՆ-ը կարող է կտրուկ ընդհարվել ու սրել հարաբերությունները ՆԱՏՕ-ի իր դաշնակցի հետ, և արդյո՞ք ԻՇԻՊ-ի դեմ անհապաղ հաղթանակն ինչ-որ չափով կբացառի Անկարայի հետ երկարաժամկետ լարվածության հեռանկարի հետ կապված մտահոգությունները⁴⁶: Ինչդիրն այն է, որ որքան ավելի երկար է գործում ԻՇԻՊ-ը, այնքան ավելի են թուլանում թե՛ Իրաքը, թե՛ Սիրիան՝ ավելի հավանական դարձնելով վերջիններիս վերջնական պետական փլուզումը: Մինչդեռ ԱՄՆ-ը կողմ է Սիրիայի տարածքային ամբողջականության պահպանմանը: Սակայն հիշյալ ռազմավարության հակափաստարկն էլ այն է, որ Սիրիայի և Իրաքի քրդերին զորեղացնելու արդյունքը նույնպես կարող է հանդիսանալ հիշյալ պետությունների փլուզման արագացումը⁴⁷:

Ներկայումս ԴԿԿ-ն, ըստ էության, դարձավ ԱՄՆ-ի դաշնակիցը՝ ԻՊ-ի դեմ պայքարում, և ԱՄՆ-ի ու ԴԿԿ-ի միջև գործակցությունը թերևս կարելի է որակել որպես «մարտավարական համագործակցություն»⁴⁸:

Սակայն, նույնիսկ այս պայմաններում, ԴԿԿ-ին ներգրավելով իր ծրագրեր և ընտրելով գործընկեր ու դաշնակից մյուս կողմերին, ԱՄՆ-ը կարող է նրանց կամա թե ակամա ազդանշան տալ կամ ակնարկել, թե պատրաստ է ստեղծված ճգնաժամի հանգուցալուծման բոլոր հնարավոր տարբերակներին, այդ թվում և Սիրիայի պառակտմանն ու պետության ամբողջական փլուզմանը⁴⁹:

ԱՄՆ-ի աջակցությամբ Աֆրիկի և Քուբանի միավորումը ոչ միայն կծախտի անվտանգության գոտու վերաբերյալ թուրքական ծրագրերը, այլև աշխարհաքաղաքական նոր հնարավորություններ կստեղծի թե՛ ԴԿԿ-ի, թե՛ տարածաշրջանի քրդական մյուս կառույցների համար՝ աննախադեպ ամրապնդելով քրդերի դիրքերը ոչ միայն սիրիական, այլև տարածաշրջանային զարգացումներում:

6. ՔԱՒՍ-ի և ԴԿԿ-ի ծագման գործոնը վերջինիս առավելությունների համարեքստում:

Սիրիայի 11 տարբեր քրդական կուսակցություններ միավորող Քրդական ազգային խորհուրդը (այսուհետ՝ ՔԱՒՍ կամ անգլ.՝ KNC/Kurdish National Council) հիմնադրվել է 2011 թ. հոկտեմբերին, ըստ էության, ոչ Սիրիայում, այլ Իրաքյան Քուրդիստանում: Ներկայումս ՔԱՒՍ-ի անդամ են 15-ից 16 քրդական կուսակցություններ: ՔԱՒՍ-ի ստեղծումը պետք է դիտարկել Ստամբուլում հիմնված Սիրիայի ազգային խորհրդի (ՍԱՒՍ) համատեքստում՝ որպես վերջինիս «քրդական վերարտադրություն» կամ ի պատասխան ԱՄՆ-ի ստեղծված քրդական անձրևանոցային կառույց: ՔԱՒՍ-ի նախագահն է Սիրիայում Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության (ԱԲԴԿ կամ ՔԴԿ-Ս, անգլ.՝ Kurdistan Democratic Party in Syria) առաջնորդ

⁴⁵ The Fragile Gains of Syria's Kurds,- Global Intelligence, Stratfor (August 1, 2014), Lenanonwire <http://www.lebanonwire.com/1508MLN/15080103STR.asp>

⁴⁶ Michael Stephens, Aaron Stein, The YPG: America's new best friend?,- Al Jazeera (28 June 2015) <http://www.aljazeera.com/indepth/opinion/2015/06/ypg-america-friend-isil-kurds-syria-150627073034776.html>

⁴⁷ Michael Stephens, Aaron Stein, The YPG: America's new best friend?,- Al Jazeera (28 June 2015)

<http://www.aljazeera.com/indepth/opinion/2015/06/ypg-america-friend-isil-kurds-syria-150627073034776.html>

⁴⁸ ABD: PYD ile 'taktik' işbirliği içindeyiz,- Al Jazeera (7 Ağustos 2015) - <http://www.aljazeera.com.tr/haber/abd-pyd-ile-taktik-isbirligi-icinideyiz>

⁴⁹ Michael Stephens, Aaron Stein, The YPG: America's new best friend?,- Al Jazeera (28 June 2015)

<http://www.aljazeera.com/indepth/opinion/2015/06/ypg-america-friend-isil-kurds-syria-150627073034776.html>

Արդ Ալ-Հաքիմ Բաշարը: ՔԴԿ-Ա-ն ՔԱԽ-ի շրջանակներում գործող ամենաազդեցիկ կուսակցությունն է: Սակայն ՔԱԽ-ի հովանու ներքո գործող գրեթե բոլոր քրդական կուսակցությունների շտաբ-կայանները գտնվում են Քուրդիստանի ռեզիմալ կառավարության տարածքում: Արդյունքում հիշյալ կուսակցություններն անգոր են էականորեն ազդելու Սիրիայում տեղ գտնող զարգացումների վրա, ասովել են անկարող են տեղում փոխել դրանց ընթացքը:⁵⁰ Բացի այդ, Քրդական ազգային խորհրդի մեջ մտնող քրդական քաղաքական կուսակցությունների գերակշիռ մեծամասնությունը ծագում է Սիրիայի առաջին քրդական կուսակցությունից՝ 1957թ. հիմնադրված Սիրիայի Քրդական (հետագայում՝ Քուրդիստանի) դեմոկրատական կուսակցությունից (ՔԴԿ-Ա): Վերջինիս ճյուղավորումներն ու ենթաճյուղավորումները հանդիսացող հիշյալ կուսակցությունները մշտապես արգելված են եղել Սիրիայում և, ունենալով անօրինական կառույցի կարգավիճակ, հուսահատ պայքար են մղել իրենց ուժերի համախմբման համար: Մշտապես գտնվելով պետական հալածաշարների ու ներքին պառակտումների հարվածների տակ, նրանք չունեին իրենց դիրքերն ամրացնելու հնարավորություն, թույլ էին և հիմնականում սահմանափակում էին իրենց գործունեությունը մշակութային ոլորտի շրջանակներով⁵¹: Մինչդեռ ԴՄԿ-ն ծագում է PKK-ից: 1980-1990-ական թվականներին սիրիական կառավարությունն ապաստան է տվել PKK-ին, և հազարավոր սիրիացի քրդեր դարձել են PKK-ի անդամ, որի զինյալների շուրջ մեկ երրորդը սիրիացի քրդեր էին: Ավելին, PKK-ն մշտապես համալրվում էր սիրիացի քրդերի հաշվին: Դա ոչ միայն արգելված չէր, այլև հաճախ խրախուսվում էր սիրիական իշխանությունների կողմից: Խնդիրն այն է, որ 1990-ական թթ. Սիրիայի բաասական ռեժիմն ընդլայնեց ու մեծացրեց PKK-ին ցուցաբերվող իր աջակցությունը և նույնիսկ անմիջականորեն խրախուսում էր Սիրիայի քրդերին՝ PKK-ին միանալու և վերջինիս շարքերը

համալրելու հարցում: Այդ գործընթացն ապահովելու և իր երկրի քրդերին համոզելու համար Սիրիայի ղեկավարությունը PKK-ին միացած սիրիացի քրդերին նույնիսկ ազատում էր սիրիական բանակում ծառայելու պարտավորությունից: Այդուհանդերձ, արդյունքները գոհացուցիչ չէին, և PKK-ին միացած սիրիացի քրդերի թիվը սպասվածից քիչ էր: Հետևաբար Սիրիայի ղեկավարությունը PKK-ին զինվորագրվելու համար որոշակի քվտաներ սահմանեց սիրիացի քուրդ ցեղային առաջնորդների համար⁵²:

PKK-ի առաջնորդ Աբդուլլահ Օջալանի՝ Սիրիայից արտաքսվելուց (1998 թ.) և թուրքական հատուկ ստորաբաժանումների կողմից առևանգվելուց (1999) հետո PKK-սիրիական իշխանություններ և ԴՄԿ- սիրիական իշխանություններ հարաբերություններն առժամանակ լարված էին համապատասխանաբար 1998-2011 և 2003-2011թթ. ընթացքում: 2003 թ. հիմնվեց ԴՄԿ-ն, որի կորիզն էին կազմում PKK-ի նախկին (զերազանցապես սիրիացի) անդամներից շատերը: Թեև ԴՄԿ-ն ժխտում է PKK-ի մասնաճյուղը լինելու պնդումը, երկուսի միջև եթե ոչ կազմակերպչական ու կառուցվածքային, ապա, համենայն դեպս, օրգանական ու գաղափարախոսական կապն ակնհայտ է: ԴՄԿ-ի հիմքն են կազմում PKK-ի նախկին անդամները: ԴՄԿ-ն գաղափարապես կապված է PKK-ի հետ, PKK-ի գաղափարախոսությունն ու նպատակները կիսող քրդական կազմակերպությունների հովանոցային կառույցը հանդիսացող Քուրդիստանի համայնքների միության (KCK) բացահայտ անդամն է, որի տրամադրության տակ են նաև PKK-ի զանազան բազաներն ու հենակետերը, վերապատրաստման հնարավորությունները, փորձառու անարդիկներն ու սպառազինությունը⁵³: Ճիշտ է, ԴՄԿ-ն նույնպես արգելված կուսակցություն է եղել Սիրիայում, քանզի վերջինիս սահմանադրության համաձայն կուսակցությունները չէին կարող հիմնվել էթնիկական, կրոնական, ռեգիոնալ և ցեղային չափանիշների վրա,

⁵⁰ Rodi Hevian, *The Resurrection of Syrian Kurdish Politics*, - IDC Herzliya, Rubin Center: Research in International Affairs (December 11, 2013), - <http://www.rubincenter.org/2013/12/the-resurrection-of-syrian-kurdish-politics/>

⁵¹ Cengiz Gunes and Robert Lowe, *The Impact of the Syrian War on Kurdish Politics Across the Middle East*, - Middle East and North Africa Programme (July 2015), Chatham House, the Royal Institute of International Affairs, London 2015, p. 4. https://www.chathamhouse.org/sites/files/chathamhouse/field/field_document/20150723SyriaKurdsGunesLowe.pdf

⁵² Gary C. Gambil, "The Kurdish Reawakening in Syria", - Middle East Intelligence Bulletin, Volume 6, No. 4 (April 2004), - http://www.yasaonline.org/reports/The_Kurdish_reawakening%20in_Syria.pdf

⁵³ Cengiz Gunes and Robert Lowe, *The Impact of the Syrian War on Kurdish Politics Across the Middle East*, - Middle East and North Africa Programme (July 2015), Chatham House, the Royal Institute of International Affairs, London 2015, p. 4. https://www.chathamhouse.org/sites/files/chathamhouse/field/field_document/20150723SyriaKurdsGunesLowe.pdf

իսկ վերջինիս առաջնորդ Սալեի Մուսլիմը 2010 թ., Սիրիայից հեռանալով, ապաստան գտավ Իրաքյան Քուրդիստանի տարածքում, սակայն սիրիական քաղաքացիական պատերազմը սկսվելուց անմիջապես հետո՝ 2011թ. Մայիսին, նրան հնարավորություն տրվեց վերադառնալու Սիրիա (Քամըշլու) և վայելելու սիրիական կառավարության և PKK-ի համակողմանի աջակցությունը: Սիրիայի քրդական քաղաքականության մեջ քազմաթիվ քրդական կուսակցություններից մեկը հանդիսացող ԴԿԿ-ի վերելքին նպաստեցին բարձր կարգապահությունը, կազմակերպական հմտությունները, ռազմավարական պլանավորումն ու հստակ գաղափարախոսությունը, հատկանիշներ, որոնք բացակայում էին ԴԿԿ-ի մրցակից քրդական քաղաքական կուսակցությունների մոտ⁵⁴:

7. ԴԿԿ-ի կազմակերպվածության և անհամեմատ ավելի միապարր լինելու գործոնը:

ԴԿԿ-ն ոչ միայն ավելի կազմակերպված է, քան ՔԱԽ-ը, այլ նաև ավելի միատարր է (մոնոլիտ): Արդյունքում ԴԿԿ-ն ունի ՔԱԽ-ի նկատմամբ առավելություն թե՛ իր կողմնակիցներին համախմբելու, թե՛ օպերատիվ որոշումներ կայացնելու հարցում: Ինդիվիդուալ առումներ կայացնելիս ՔԱԽ-ը պետք է հաշվի առնի իր անդամ հանդիսացող շուրջ 16 տարբեր քրդական կուսակցությունների հաճախ իրարամերձ շահերը, միջնորդ ԴԿԿ-ն, որպես մեկ կուսակցություն, կարող է անհամեմատ ավելի օպերատիվ ու արդյունավետ որոշումներ կայացնել և անհամեմատ ավելի արագ անցնել որոշումների կայացումից մինչև դրանց իրագործումն ընկած շրջան⁵⁵:

⁵⁴ Cengiz Gunes and Robert Lowe, The Impact of the Syrian War on Kurdish Politics Across the Middle East,- Middle East and North Africa Programme (July 2015), Chatham House, the Royal Institute of International Affairs, London 2015, p. 4. https://www.chathamhouse.org/sites/files/chathamhouse/field/field_document/20150723SyriaKurdsGunesLowe.pdf

⁵⁵ John Caves, Syrian Kurds and the Democratic Union Party (PYD).- ISW (Institute for the Study of War), Background (December 6, 2012), p. 4. Դատախազական չէ, որ ի պատասխան այն հարցին, թե ինչու է հատկապես ԴԿԿ-ն գերիշխում Սիրիայի քրդաբնակ շրջաններում, Սալեի Մուսլիմը նշել է, որ, օրինակ, անցակետերում ԴԿԿ-ն և ՔԱԽ-ը պետք է ունենան երեքական ներկայացուցիչներ: Սակայն եթե ԴԿԿ-ն արագ ընտրում կամ նշանակում է իր ներկայացուցիչներին, ՔԱԽ-ի կազմում ընդգրկված կուսակցությունները չունեն համապատասխան մարդիկ՝ ուղարկելու համար կամ չեն

8. ԴԿԿ-ի կազմակերպական կառույցների ցանցի կայացումը:

Մինչ Սիրիայի այլ քրդական կուսակցություններն ու կազմակերպությունները պայքարում էին միմյանց դեմ կամ վարում ներկուսակցական պայքար լիդերության դիրքերի համար, ԴԿԿ-ն զարգացնում, ընդլայնում ու կատարելագործում էր իր կազմակերպական կառույցները: Ավելին, մինչ Սիրիայի ընդդիմադիր կուսակցություններն ու կազմակերպությունները քննարկումների ու բախումների մեջ էին այն հարցում, թե իրենք և մյուսները ընդդիմադիր որ խմբավորմանը պիտի հարեն, ԴԿԿ-ն մեծացրեց իր իշխանությունն ու ազդեցությունը ժողովրդական զանգվածների շրջանում: Այդ գործին նպաստեց նաև այն, որ ԴԿԿ-ին հաջողվեց օգտվել ՔԱԽ-ում ընդգրկված քրդական կուսակցությունների միջև առկա մրցակցությունից: Ավելին, աստիճանաբար ԴԿԿ-ն դարձավ գերիշխող ուժ այն մարզերում, որոնք փաստացի վերահսկում էր, կամ որոնք հետագայում անցան իր վերահսկողության ներքո: ԴԿԿ-ն ստանձնեց որոշակի հաստատությունների (դպրոցներ և այլն) գործարկման պատասխանատվությունը՝ զուգահեռաբար մասնակցելով նաև ընտրություններին: Բնականաբար ԴԿԿ-ի զինված ուժերի դերը չպետք է անտեսվի, սակայն ռազմավարական և մարտավարական հստակությունը նույնպես կարևորվեց: Մասնավորապես, ի հակադրություն այլ կուսակցությունների ելույթներում ու դիրքորոշման մեջ առկա անորոշության, ԴԿԿ-ն փաստացի ձեռք բերեց իր նպատակները հստակորեն գիտակցող և առկա խնդիրներին լուծումներ տալուն ընդունակ կուսակցության վարկանիշ: Վերածվելով խնդիրների լուծման կենտրոնի՝ ԴԿԿ-ն աստիճանաբար ձեռք բերեց նույնիսկ այն քուրդ բնակիչների աջակցությունը, որոնք անցյալում ԴԿԿ-ի հետ որոշակի հեռավորություն էին պահպանում⁵⁶:

9. ԴԿԿ-ի՝ քրդական այլ (գերազանցապես ՔԱԽ-ում ընդգրկված) կուսակցությունների քաղաքական դիրքորոշումը:

կարողանում բոլորի համար ընդունելի մարդկանց ընտրել, իսկ հետո մեղադրում են ՔԴԿ-ին իշխանությունը չկիսելու մեջ: Տե՛ս նույն տեղում:

⁵⁶ Suriye'de Kürt Hareketleri (Kurdish Movements in Syria).- ORSAM (Ortadoğu Stratejik Araştırmalar Merkezi/Center for Middle Eastern Strategic Studies) Report № 127, August 2012, Ankara, ORSAM 2012: p. 32.

ման ու գործելակերպի մեջ տեղ գրած թերացումներից ու ծախսողումներից, թուլությունից ու պառակրվածությունից օգտվելու կարողությունը:

Մինչ Քրդական Ազգային խորհուրդը չէր կարողանում կարգավորել իր հարաբերությունները Սիրիայի ընդդիմադիր մյուս շարժումների հետ, ԴՄԿ-ն կենտրոնացավ երկու հիմնական դիսկուրսի վրա: Առաջինն այն է, որ «Սիրիայի Ազգային խորհուրդը (ՍԱԽ-ը կամ SNC-ն) մի միջոց ու գործիք է» Թուրքիայի ձեռքում, հետևաբար այն ամենևին մտադիր չէ ճանաչել քրդերի ներկայությունն ու իրավունքները, այլ նույնիսկ մտադիր է ճնշել վերջիններիս՝ կանխելով նրանց ակտիվացումը: Այն փաստը, որ այս գործընթացում Քրդական Ազգային խորհուրդը փորձեց հարաբերություններ հաստատել Սիրիայի Ազգային խորհրդի հետ, սակայն ծախսողվեց ու չունեցավ իրական ձեռքբերում, նույնպես նպաստեց ԴՄԿ-ի դիրքերի ամրապնդմանը: ՍԱԽ-ի կոնֆերանսներում ՔԱԽ-ի կամ վերջինիս հետ փոխկապակցված կուսակցությունների ունեցած անհատական անհաջողություններն ամրապնդեցին ԴՄԿ-ի դիրքերը: Արաբական ընդդիմության հակաքրդական արծազանքը և նույնիսկ Սիրիայի Ազգային խորհրդի ղեկավար Բուրհան Դալիյունի այն պնդումը, թե «չկա նման քան, ինչպես սիրիական Քուրդիստան»՝ հասկացություններ է, դյուրացրին ազգայնական զարթոնք ապրող Սիրիայի քրդերի շրջանում աջակցություն գտնելու ԴՄԿ-ի խնդիրը, առավել ևս, որ վերջինս որոշակի հեռավորություն էր պահպանում թե՛ ՔԱԽ-ի, թե՛ ՍԱԽ-ի նկատմամբ: ԴՄԿ-ի երկրորդ դիսկուրսի համաձայն՝ քրդերի իրական թշնամին Թուրքիան է: Այս դիսկուրսում Ասադի ոեժիմը նկարագրվում է որպես թույլ, դեպի անկում ու փլուզում գնացող գործոն, որը հետևաբար այլևս չի կարող մեծ սպառնալիք ներկայացնել ընդդեմ քրդերի: Փոխարենը, ԴՄԿ -ի պնդմամբ, իրական վտանգ ու սպառնալիք է ներկայացնում Թուրքիան, որն «ապացուցել» է դա թե՛ սեփական երկրում, թե՛ այլ երկրների քրդերի դեմ վարած քաղաքականությամբ: Հակաթուրքական դիսկուրսի օգտագործումն անչափ արդյունավետ եղավ Սիրիայի քրդերի շրջանում⁵⁷:

Որոշ փորձագետների կողմից ԴՄԿ-ի առավելությունն ապահովող այլ գործոնների շարքում է դիտարկվում «սիրիական քաղաքացիական պատերազմի սկզբից ևեթ բոլոր քրդական խմբավորումները մեկ-միասնական կառույցի մեջ միավորելու նպատակ հետապնդող նախաձեռնությունների», ինչպես նաև սիրիական ընդդիմության հետ քրդական կուսակցությունների սերտ համագործակցությունն ապահովելու բոլոր ջանքերի ծախսողումը: Մասնավորապես հիմնականում ՔԴԿ-ի առաջնորդ և ՔԴԿ-ի նախագահ Մասուդ Բարզանու ղեկավարության ներքո գործող, սակայն նաև պրոԲՀՄ-ական կուսակցություններ ներառող «Քրդական ազգային խորհուրդը չկարողացավ ինտեգրվել ո՛չ Սիրիայի ազգային խորհրդում և ո՛չ էլ Սիրիայի հեղափոխական և ընդդիմադիր ուժերի ազգային կոալիցիայում: Քրդական ազգային խորհրդի անդամների միջև գաղափարների բախման խորացումը և խորհրդի որոշ անդամների՝ ԴՄԿ-ի հետ ունեցած սերտ հարաբերությունները նպաստեցին ԴՄԿ-ի վերելքին: Այս ամենը խրախուսեց ԴՄԿ-ին իր սեփական ուժերով պայքարելու քրդական խիտ բնակչություն ունեցող շրջաններում Սիրիական ազատ բանակի հարձակումների դեմ, այնպես, որ քրդերի՝ ԴՄԿ-ին ցուցաբերվող աջակցությունն աստիճանաբար աճեց»⁵⁸:

Թեև Քրդական Ազգային խորհուրդն ունի շուրջ 16 անդամ-կուսակցություններ, նրանց միջև պառակրվածությունը զգալի է ու նկատելի: Արդյունքում նրանցից շատերը համագործակցում են ՔԴՄ-ի հետ: Մասնավորապես Քուրդիստանի հայրենասիրական միության հետ անվազն փոխկապակցված գործող ՔԱԽ-ի անդամ մի շարք կուսակցություններ (օրինակ՝ Համիդ Դարվիշի գլխավորած Քուրդիստանի դեմոկրատական առաջադիմական կուսակցությունը, ինչպես նաև ճափ ուղղվածության կուսակցություններից՝ Մուհամմադ Մուսայի գլխավորած Քրդական դեմոկրատական ճափ կուսակցությունը և Շեյխ Ջամալի գլխավորած Սիրիական դեմոկրատական քրդական կուսակցությունը) սերտ հարաբերություններ են պահպանում ՔԴՄ-ի հետ: Ավելին, որոշ աղբյուրների համաձայն, սիրիական դաշտում. «...նրանք նաև համագործակցում են ՔԴՄ-ի հետ և իրենց մարտիկներին ուղարկում՝ միանալու ՔԴՄ-ի

⁵⁷ Suriye'de Kürt Hareketleri (Kurdish Movements in Syria),- ORSAM (Ortadoğu Stratejik Araştırmalar Merkezi/Center for Middle Eastern Strategic Studies) Report № 127, August 2012, Ankara, ORSAM 2012: pp. 32-33.

⁵⁸ Reyhan Güner, Why is PYD getting upper hand in Syria?,-The Journal of Turkish Weekly (JTW), USAK (March 1, 2014), -<http://www.turkishweekly.net/2014/03/01/op-ed/why-is-pyd-getting-upper-hand-in-syria/>

մարտական ուժին՝ YPG-ին»⁵⁹:

10. ԴՄԿ-ի՝ իր ազդեցության շրջանակը սիրիական և քրդական այլ ուժերի ներթափանցումից զերծ պահելու կարողությունը:

ԴՄԿ-ն հստակորեն սահմանել է Սիրիայի՝ իր ազդեցության ներքո գտնվող քրդաբնակ տարածքներում սիրիական բանակի ներկայության կետերը: Այդ պայմանավորվածությունների խախտման փորձերն անմիջապես հանգեցրել են ԴՄԿ-ի կտրուկ հակահարվածին: Դրա հետ մեկտեղ, ԴՄԿ-ն փորձել է ընդգրկել ՔԴԿ-ին սիրիական գործընթացներում միայն այնքան, որքան որ ինքն է հարմար գտնում՝ որոշակիորեն սահմանափակելով ՔԴԿ-ի ներգրավվածության շրջանակները: Մասնավորապես, ԴՄԿ-ն զգուշավորություն է հանդես բերում Սիրիայի տարածքում Իրաքյան Քուրդիստանի փեշմերգաների ներկայության և Իրաքյան Քուրդիստանում ռազմական պատրաստություն (ուսուցում ու վերապատրաստում) անցած սիրիացի քրդերի (փեշմերգաների) վերադարձի հարցում⁶⁰: Չնայած համատեղ ու միասնական քրդական շարժման ու համաքրդական մեծ համագործակցության վերաբերյալ մեկնաբանություններին՝ երկու կողմերը շարունակում են կասկածել միմյանց ունեցած մտադրությունների և վարած քաղաքականության առնչությամբ: ԴՄԿ-ն չի ցանկանում, որ Իրաքյան քրդերի փեշմերգա ուժերը մտնեն Սիրիա, քանի որ այն կհանգեցնի ինչպես արաբական ընդդիմության, այնպես էլ Իրանի ու Սիրիայի կտրուկ բացասական արձագանքին: Բացի այդ, ԴՄԿ-ն, բնական է, չի ցանկանում կորցնել Սիրիայի քրդերով բնակեցված շրջաններում ռազմական ուժեր ունեցող միակ քրդական կուսակցության հիմնական առավելությունը: Այսպիսով, ԴՄԿ-ն կտրուկ մերժում է Իրաքյան կամ սիրիական

ծագում ունեցող քրդական փեշմերգա ուժերի ներգրավման ու Սիրիա մուտք գործելու հեռանկարը: Սակայն կարևորելով քրդերի միջև անդրասահմանային համագործակցությունը՝ ԴՄԿ-ն նշում է, որ «փեշմերգա ուժերը Սիրիա կկանչվեն, երբ դրա անհրաժեշտությունը լինի», ինչով ԴՄԿ-ն ակնարկում է, որ փեշմերգա ուժերին իրենք համարում են մի միջոց, որին կարող են ապավինել միայն այն դեպքում, երբ իրենք կզգան նման օգնության ծայրահեղ անհրաժեշտությունը: Այսպիսով, ԴՄԿ-ն, որը ՔԴԿ-ին և ընդհանրապես ՔՌԿ-ին դիտարկում է որպես Սիրիայի քրդերի շրջանում կամ միջազգային ասպարեզում լեգիտիմություն ձեռք բերելու միջոց, կարող է դիմել կամ ապավինել ՔՌԿ-ի աջակցությանը միայն այն ժամանակ ու այն դեպքում, երբ կզգա դրա ծայրահեղ անհրաժեշտությունը: Այդ է հուշում մինչ օրս տեղ գտած զարգացումների տրամաբանությունը⁶¹:

11. ԴՄԿ-ի վերահսկողության ներքո գտնվող կանտոնների գաղափարախոսական պատնեշումը. նոր գաղափարներն ու ծրագրերը:

Սիրիայում սկսված ապստամբական շարժումներից անմիջապես հետո ԴՄԿ-ն թե՛ դիսկուրսում, թե՛ գործնականում առաջ քաշեց դեմոկրատական ինքնավարության⁶² կամ դեմոկրատական կոնֆեդերալիզմի⁶³ նպատակը՝ ծրագիր, որ առաջ էր քաշվում PKK-ի կողմից:

Հիշյալ գաղափարը լայնորեն լուսաբանվեց ԴՄԿ-ի կողմից՝ առաջ բերելով նաև արևմտյան պաշտոնատար և ոչ պաշտոնատար շրջանակների աննախադեպ հետաքրքրությունը: Խնդիրն այն է, որ ԴՄԿ-ն սկսեց հիշյալ գաղափարի կենսագործումը Սիրիայի քրդաբնակ շրջաններում: Այս գաղափարն ընկած էր նաև Ռոժավայի (Սիրիայի քրդաբնակ շրջաններում)

⁵⁹ Rodi Hevian, The Resurrection of Syrian Kurdish Politics.- IDC Herzliya, Rubin Center: Research in International Affairs (December 11, 2013). - <http://www.rubincenter.org/2013/12/the-ressurrection-of-syrian-kurdish-politics/>

⁶⁰ "Пешмерга Рожава" вернутся в Сирийский Курдистан.- Kurdistan.Ru (17.09. 2015), http://kurdistan.ru/2015/09/17/news-24920_Peshmerga_Rozhava.html. Администрация Сирийского Курдистана: Нет никаких планов разрешить возвращение сирийских пешмерга.-Kurdistan.Ru (18.09.2015)- http://kurdistan.ru/2015/09/18/news-24928_Administraciya_Siriy.html

⁶¹ Suriye’de Kürt Hareketleri (Kurdish Movements in Syria).- ORSAM (Ortadoğu Stratejik Araştırmalar Merkezi/Center for Middle Eastern Strategic Studies) Report № 127, August 2012, Ankara, ORSAM 2012: p. 33.

⁶² «Դեմոկրատական ինքնավարության» մասին տե՛ս "A Revolution of Life - Interview With Saleh Muslim",- Tenk (10 November 2014) - <http://tenk.cc/2014/11/a-revolution-of-life/>

⁶³ Abdullah Ocalan, Democratic Confederalism. - London [International Initiative Edition Transmedia Publishing Ltd], 2011.

ձևավորված կանտոնների սահմանադրության հիմքում⁶⁴: Դրանով իսկ գաղափարախոսական տեսությունը դրվում էր պրակտիկ հողի վրա և հաջողության դեպքում կարող է վերածվել կառավարման մի նոր մոդելի:

Իր նպատակներին հասնելու համար ԴՄԿ-ն առաջին հերթին մտադիր էր ամրապնդել իր կառույցները քրդերի շրջանում: Այն ընդլայնեց իր սոցիալական և կազմակերպական ցանցը, առաջին պլան մղեց սոցիալական և քաղաքական խնդիրները՝ բնակչության շրջանում ստանալով անհամեմատ ավելի մեծ աջակցություն: Այս հարցերում այլ կուսակցությունների հնարավորությունների անբավարարության արդյունքում ԴՄԿ-ն վերջիններիս նկատմամբ ձեռք բերեց որոշակի առավելություն:

Երկրորդ փուլում ԴՄԿ-ն իր հիմնական շեշտադրումն անում էր այն ուղերձի վրա, որ ինքն այն միակ ուժն է, որ կարող է պաշտպանել քրդերին Սիրիայում: Ասադի հետ գործարք կնքելու արդյունքում ԴՄԿ-ին հիմնականում հաջողվեց Ազատ սիրիական բանակի (ԱՄԲ-ի, անգլ.՝ Free Syrian Army, FSA) գործողությունների դաշտից հեռու պահել այն շրջանները, որտեղ քրդական բնակչությունը մեծամասնություն էր կազմում: Ավելին, ժամանակի ընթացքում Սիրիայի վարչակազմի աջակցությամբ ԴՄԿ-ին հաջողվեց ստանալ իշխանությունը հիշյալ շրջաններում: Այս ժամանակահատվածի ընթացքում այն փաստը, որ մյուս կուսակցությունները չունեին զինված ուժեր կամ նմանատիպ կազմակերպական ցանց, դյուրացրեց ԴՄԿ-ի գործունեությունը:

ՔԱԿ-ի (PKK-ի) և ԴՄԿ-ի ռազմավարության ամենակարևոր գործոններից մեկն է նախապատրաստվելն էր այն ժամանակաշրջանին, երբ սիրիական գործող վարչակարգը պետք է տապալվեր: Սակայն, լինելով ճկուն ու շրջահայաց, այն արագորեն մի ճամբարից մյուսը չանցավ ու չփոխեց կողմերին: Երկար ժամանակահատվածի ընթացքում այն համագործակցեց Ասադի ռեժիմի հետ: Բայց երբ տեսավ, որ ռեժիմն աստիճանաբար թուլանում է, արագ սկսեց համապատասխան

քայլեր ձեռնարկել հեշտությամբ կողմերին փոխելու համար⁶⁵:

12. ԴՄԿ-ի վերջին գործում անգնահատելի է նաև վերջինիս առաջնորդ (ներկայումս՝ համանախագահ) Սալեհ Մուալիմի⁶⁶ դերը:

Վերջինս, ըստ էության, Ռոժավայի փաստացի ղեկավարն է, թեև երեք կանտոններից յուրաքանչյուրն ունի իշխանության իր մարմիններն ու ղեկավար կազմը: Սալեհ Մուալիմի ողջ կենսագրությունն օբյեկտիվորեն ապահովել է նրա՝ որպես քաղաքական գործչի լայնախոհությունն ու շրջահայացությունը: Նա հրաշալի է պատկերացնում թե՛ Սիրիայի քրդական մյուս կուսակցությունների, թե՛ Իրաքյան Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության պոտենցիալը, գործելակերպը, ուժեղ և թույլ կողմերը, քանզի 1970-ական թթ. Սկսած՝ լեգենդար Մուստաֆա Բարզանու շարժման հետևորդն էր, իսկ 1998-2003թթ. եղել է Իրաքյան ՔԴԿ-ի սիրիական մասնաճյուղի՝ Սիրիայի Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության (ՔԴԿ-Ա) անդամ: Սակայն 2003 թ. նա հեռացավ ՔԴԿ-Ա-ից՝ գտնելով, որ վերջինս անարդյունավետ է գործում և անկարող է հասնել իր նպատակներին: Սալեհ Մուալիմը բնականաբար հրաշալի է պատկերացնում PKK-ի գործունեությունը, քանզի նույն 2003թ. դարձավ PKK-ի սիրիական մասնաճյուղի՝ ԴՄԿ-ի անդամ անմիջապես ընդգրկվելով ԴՄԿ-ի գործադիր խորհրդի կազմում և 2010 թ. ընտրվելով կուսակցության առաջնորդ: Սալեհ Մուալիմը լավ հարաբերություններ ու կապեր ունի նաև Քուրդիստանի հայրենասիրական միության (ԲՀԱ) հետ, քանզի իր կնոջ՝ Այշե Էֆենդիի հետ բանտարկվելուց հետո 2010թ. Հեռացավ Սիրիայից՝ ապաստան գտնելով Իրաքյան Քուրդիստանի տարածքում (ընդիուպ մինչև 2011 թ. մայիսը)՝ ոչ միայն PKK-ի ճամբարներում, այլև ԲՀԱ-ի ազդեցության գոտում:

Սալեհ Մուալիմը հրաշալի է պատկերացնում նաև թուրքական զարգացումները, քանզի, PKK-ի գործնի հետ մեկտեղ,

⁶⁴ The Constitution of the Rojava Cantons: The Social Contract.- https://peaceinkurdistancampaign.files.wordpress.com/2014/03/english-version_sc_revised-060314.pdf

⁶⁵ Suriye'de Kürt Hareketleri (Kurdish Movements in Syria).- ORSAM (Ortadoğu Stratejik Araştırmalar Merkezi/Center for Middle Eastern Strategic Studies) Report № 127, August 2012, Ankara, ORSAM 2012: p. 33.

⁶⁶ Saleh Muslim Mohammed.- Carnegie Middle East Center (December 29, 2011)- <http://carnegie-mec.org/publications/?fa=48726>

1970-ական թթ. Սովորել է Ստամբուլի տեխնիկական համալսարանում:

Նա կարևորում է նաև կանանց դերը ԴՄԿ-ի գործունեության շրջանակներում: Պատահական չէ, որ 2012 թ. Սկասա՝ Մալեի Մուսլիմն ու Ասյա Աբդուլլան ԴՄԿ-ի համանախագահներ են: Կանայք ԴՄԿ-ի շարքեր ներգրավված են տղամարդկանց հավասար՝ կառավարման, քաղաքական և ռազմական կառույցներում: Նման մոտեցումն էականորեն տարբերվում է ցիհադականների գործելակերպից, որի արդյունքում ԴՄԿ-ն գրավում է միջազգային հանրության ուշադրությունն ու շահում վերջինիս համակրանքը: Սիրիայի քրդական բնակչության շրջանում Մալեի Մուսլիմն անկեղծ համակրանք ու աջակցություն է վայելում նաև այն պատճառով, որ իր անմիջական հարազատների հետ մեկտեղ առաջին շարքերում է⁶⁷:

13. ԴՄԿ-ն փարածաշրջանային՝ ոչԴՄԿ-ական քրդական ուժերի ու կառույցների (ներառյալ Սիրիայի ոչԴՄԿ-ական քրդերի) օգնությունից և աջակցությունից օգտվելու լայն հնարավորություններ ունի, թեև մրցակցությունն ու միջամտությունը բացառելու նպատակով դեռևս լիովին չի օգտվում ընդհանրված հնարավորություններից:

Մի կողմից, տարածաշրջանային քրդական կառույցների հիմնական մասը քննադատում է Ռոժավայում⁶⁸ միահեծան իշխելու ԴՄԿ-ի վճռականությունը և մրցակցում ու նույնիսկ ժամանակ առ ժամանակ ընդհարվում կամ տեղեկատվական պատերազմ մղում վերջինիս դեմ: Մյուս կողմից, տարածաշրջանային բոլոր՝ այդ թվում ոչ-ԴՄԿ-ական քրդական ուժերն ու կառույցներն են գիտակցում, որ Ռոժավայի ի հայտ գալն աննախադեպ ձեռքբերում է, քանզի նախկինում Սիրիայում քրդական ինքնավարության հարցն ընդհանրապես չէր քննարկվել, իսկ նմանատիպ պահանջներն անիրատեսական էին թվում: Ռոժավան լիովին փոխեց քրդական շարժման

ընթացքն ու քրդական ազգայնական դիսկուրսը: Սակայն բոլորն են նաև գիտակցում, որ Սիրիայի քրդական ինքնավարությունը (Ռոժավան) չափից դուրս փխրուն է ու վտանգված, քանզի գործում է թշնամական ու սպառնալից միջավայրում⁶⁹: Նման պայմաններում Սիրիայի նույնիսկ այն քրդերը, ովքեր ԴՄԿ-ական չեն, իրենց անվտանգությունն ապահովելու նպատակով հարկադրված են ստեղծել սեփական զինված ստորաբաժանումներն ու ինքնակառավարման մարմինները, որոնք արդյունավետ կարող են գործել միայն ԴՄԿ-ի ենթակայության ներքո գործելու դեպքում: Ոչ միայն սիրիական գործընթացներն ու Իսլամական պետության գործոնը, այլև Թուրքիայի ռազմական գործողությունները Հյուսիսային Իրաքում և Անկարայի կողմից Սիրիայում գործող քրդական ինքնավարությունը չընդունելու փաստն ու քրդական ձեռքբերումները վերացնելու ձգտումն ավելի ակնհայտ են դարձնում սպառնալիքները թե՛ տարածաշրջանային, թե՛ սիրիական քրդական քաղաքական կառույցների համար: Հետևաբար, Սիրիայում քրդական ինքնավարության դեմ հարձակման դեպքում վերջիններս պատրաստ են աջակցելու ԴՄԿ-ին և նրա ռազմական թևին՝ YPG-ին⁷⁰:

14. Իսլամական պետության գործոնը:

Սիրիայում՝ ԴՄԿ-ի, իսկ Իրաքյան Քուրդիստանում ՔԱԿ-ի (PKK-ի) դիրքերի ամրապնդմանն էականորեն նպաստեցին նաև Իսլամական պետության զինյալների կողմից ռազմական գործողությունների ընդլայնումն ու տարածումը Հյուսիսային Իրաքի ուղղությամբ՝ ինչպես ՔՌԿ-ի անմիջական վերահսկողության ներքո գտնվող տարածքներում (ներառելով նաև Էրբիլի և Բաղդադի միջև դե յուրե վիճելի համարվող, սակայն դե ֆակտո ՔՌԿ-ի վերահսկողության ներքո գտնվող շրջանները),

⁶⁷ Նրա որդին՝ Շերվանը, Ժողովրդական պաշտպանության զորամիավորումների կազմում մարտնչում էր իսլամականների դեմ և զոհվեց 2013 թ. հոկտեմբերին Թեյ Աբյադի մարտերի ժամանակ:

⁶⁸ Ռոժավա ասելով նկատի ունեն Սիրիայի քրդաբնակ տարածքները՝ Արևմտյան Քուրդիստանը (քրդերեն՝ رۆژاوای کوردستان, Rojava yê Kurdistanê), որը ներկայումս ներառում է Աֆրին, Քոբանի և Ջազիրա կանտոնները:

⁶⁹ Cengiz Gunes and Robert Lowe, The Impact of the Syrian War on Kurdish Politics Across the Middle East.- Middle East and North Africa Programme (July 2015), Chatham House, the Royal Institute of International Affairs, London 2015, p. 6. https://www.chathamhouse.org/sites/files/chathamhouse/field/field_document/20150723SyriaKurdsGunesLowe.pdf

⁷⁰ Cengiz Gunes and Robert Lowe, The Impact of the Syrian War on Kurdish Politics Across the Middle East.- Middle East and North Africa Programme (July 2015), Chatham House, the Royal Institute of International Affairs, London 2015, p. 6. https://www.chathamhouse.org/sites/files/chathamhouse/field/field_document/20150723SyriaKurdsGunesLowe.pdf

այնպես էլ իրաքյան կենտրոնական իշխանությունների վերահսկողության ներքո գտնվող շրջաններում: ՔՌԿ-ի սկզբնական ռազմական պարտությունների արդյունքում:

ա/քրդական փեշմերգան մասամբ հեղինակագրվեց: Վերջիններիս սկսեցին որակել որպես «թղթե վագրեր»⁷¹:

բ/ Առանց հապաղելու ԴՄԿ-ի մարտիկները՝ ժողովրդական պաշտպանության զորամիավորները (YPG) շտապեցին լցնել ժամանակավորապես ձևավորված իշխանության վակուումը փեշմերգաների և իրաքյան բանակի կողմից թողնված Հյուսիսային Իրաքի որոշակի շրջաններում:

գ/ ԻՊՊ զինյալների դեմ ռազմական հաջողությունների արդյունքում ԴՄԿ-ն և ՔԱԿ-ը բացառեցին անցանկալի գարգացումներն ու վերահսկողություն հաստատեցին Սիրիա-Իրաք սահմանի որոշակի հատվածի նկատմամբ, ինչն էլ ավելի ամրապնդեց իրենց դիրքերը սիրիական դաշտում: Սինջարի ուղղությամբ ԻՇԻՊ-ի հարձակումը ԴՄԿ-ի կողմից դիտվեց որպես իր դեմ ուղղված սպառնալիք՝ հաշվի առնելով Սիրիա-Իրաք սահմանին մոտ լինելու իրողությունը: Եթե ԻՇԻՊ-ի զինյալներին հաջողվեր զավթել ողջ Սինջարը, ԻՊ-ն իր վերահսկողությունը կհաստատեր Մոսուլ-Թեյ Աֆար-Սիրիայի քրդաբնակ տարածքներ «երթուղին» ներառող զգալի տարածքների նկատմամբ: «...ինչը կնշանակեր, որ ԻՇԻՊ-ի հրոսակախմբերն ի զորու կլինեին Ռոժավայի դեմ իրենց հարձակումներն իրագործելու՝ զենք, զինամթերք ու զինյալներ տեղափոխելով հիշյալ միջանցքի երկայնքով»⁷²:

դ/ 2014 թ. օգոստոսին Սինջարում տեղ գտած եզդիների ցեղասպանությանն անմիջականորեն հաջորդած ժամանակահատվածում ԴՄԿ-ն և ՔԱԿ-ը (PKK-ն) թե՛ ռազմադաշտում, թե՛ տեղեկատվական դաշտում հաջողություններ արձանագրեցին՝ իրենց դրսևորելով որպես ցեղասպանությունից փրկված եզդիների իրական պաշտպաններ: Ժողովրդական պաշտպանության զորամիավորները (YPG), սահմանն անցնելով, ոչ միայն օգնություն ցուցաբերեցին ու աջակցեցին Սինջարի լեռներում ապաստանած շուրջ 200000 եզդի փախստականներին, այլև

իրենց վերահսկողությունը հաստատեցին Սիրիայի հետ սահմանային Ռաբիա անցակետի նկատմամբ⁷³: ԴՄԿ-ն և ՔԱԿ-ը ռազմական աջակցություն էին ցուցաբերում նաև 2014 թ. օգոստոսի սկզբներին ձևավորված եզդիների ինքնապաշտպանության մարտիկներին: Ձևավորվել էին հետևյալ եզդիական զինված միավորները՝ Շանգայի ինքնապաշտպանության ուժեր (Yekaniya Berxwedana Şengale, YBS), Շանգայի ինքնապաշտպանության ջոկատ (Heza Parastina Şengale, HPS), Եզդի կանանց ջոկատ (YPJ) և այլն: Այս ջոկատները ՔՌԿ-ից չստացան զենք ու զինամթերք: Սակայն այս հարցում աջակցություն ցուցաբերեցին ԴՄԿ-ն և ՔԱԿ-ը: Քրդական աշխատավորական կուսակցության հետ սերտորեն համագործակցել ու համագործակցում են և ԴՄԿ-ից զգալի աջակցություն են ստանում հատկապես Շանգայի (Սինջար) ինքնապաշտպանության ուժերն ու Եզդի կանանց ջոկատը: Մասնավորապես Շեյխ Խալաֆի գլխավորությամբ գործող և ներկայումս շուրջ 1500 մարտիկ ունեցող «Շանգայի ինքնապաշտպանության ուժերի համալրման համար Սիրիայում հիմնվեց ռազմական դպրոց, որը կոչվեց եզդի զորահրամանատար Դավրեշ Ալդիի անունով: Այս ռազմական դպրոցում որոշակի ժամանակ ուսանում էին կամավորականներ Շանգայից, այնուհետև միանում Շանգայի ինքնապաշտպանության ուժերին և մասնակցում ռազմական գործողություններին»⁷⁴: ԴՄԿ-ի հետ Եզդի կանանց ջոկատի համագործակցությունը նույնպես պատահական չէ, քանզի հիշյալ ջոկատի հրամանատար Հեյար Ռաշիդը ակտիվորեն «մասնակցել է Սիրիայի եզդի համայնքի պաշտպանությանը և բավական մեծ մարտական փորձառություն ունի»⁷⁵:

15. ՔՄԿ-ի ու Գորրանի գործոնը:

ՔԴԿ-ն և ՔՄԿ-ն ռազմավարական դաշնակիցներ էին իրաքյան Քուրդիստանի դաշտում, որտեղ նրանք ձգտում էին շրջանցել չբարձրաձայնել կամ համբերատար լուծել միմյանց միջև առկա տարածայնությունները: Սակայն սիրիական դաշտում ավելի մոտ էին Աբդուլլահ Օջալանի PKK-ի (ներառյալ

⁷¹ Bilgay Duman, Kobani'nin Kürt iç siyasetine etkileri,- Al Jazeera (17 Ekim 2014),- <http://www.aljazeera.com.tr/gorus/kobani-in-kurt-ic-siyasetine-etkileri>

⁷² Othman Ali, The Implications of the War on ISIS In Kurdistan,- ORSAM (Ortadoğu Stratejik Araştırmalar Merkezi) Review of Regional Affairs (No.10, September 2014), pp. 5-6.

⁷³ Othman Ali, The Implications of the War on ISIS In Kurdistan,- ORSAM (Ortadoğu Stratejik Araştırmalar Merkezi) Review of Regional Affairs (No.10, September 2014), pp. 5-6.

⁷⁴ Տե՛ս **Քոբիս Մուրազի**, 100 տարի անց, երևան-2015, 83-84:

⁷⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 83-84:

Սալեհ Մոսայիմի ԴՄԿ-ն) և Ջալալ Թալաբանու ՔՀՄ-ի տեսակետներն ու շահերը: Երկուսն էլ դեմ էին արևմտյան կամ թուրքական ցանկացած միջամտությանը Սիրիայում: Երկուսն էլ ձգտում էին սահմանափակել ՔԴԿ-ի ազդեցությունը Սիրիայի քրդական շրջաններում և հակակշռել Իրաքյան Քուրդիստանում Մասուդ Բարզանու և ՔԴԿ-ի ազդեցության աննախադեպ հզորացմանը: Սա միանշանակ նպաստում է ԴՄԿ-ի դիրքերի ամրապնդմանը, առավել ևս, որ Սիրիայի պրոՔՀՄ-ական քրդական քաղաքական ուժերը նույնպես սկսեցին որոշակիորեն համագործակցել ԴՄԿ-ի հետ: Սակայն ծագեցին նաև որոշակի խնդիրներ: 2013թ. անոսնը ՔՀՄ-ի հովանավորությունը վայելող Սիրիայի Քրդական դեմոկրատական առաջադիմական կուսակցությունը սկսեց փոխել իր քաղաքականությունը ԴՄԿ-ի (PYD-ի) նկատմամբ՝ հակառակ այն իրողության, որ վերջինիս հովանավորող Իրաքյան Քուրդիստանի կուսակցությունը՝ ՔՀՄ-ն, շարունակում էր սիրիական դաշտում նախապատվություն տալ ԴՄԿ-ի և PKK-ի հետ դաշինքին: 2013թ. հունիսի 27-ին Ամոնայում տեղ գտած միջադեպից հետո, երբ ԴՄԿ-ի զինյալների կողմից սպանվել էին վեց քաղաքացիական անձինք, Առաջադիմական կուսակցությունը դուրս եկավ ԴՄԿ-ի ռազմական ստորաբաժանումների կազմից: Հուլիսի 3-ին Առաջադիմական կուսակցության առաջնորդ Դարվիշը Կատար այցելեց արդեն Քրդական Ազգային խորհրդի արտաքին հարաբերությունների պատասխանատուի կարգավիճակով, այն բանից հետո, երբ խորհուրդը հանդիպեց վտարանդի սիրիական հեղափոխական և ընդդիմադիր ուժերի ազգային կոալիցիայի հետ: Ավելին, Առաջադիմական կուսակցությունն (ԱԿ) իր աջակցությունը հայտնեց Քրդական Ազգային խորհրդի՝ Ազգային կոալիցիային միանալու որոշմանը: Առաջադիմական կուսակցության որոշ անդամներ ներգրավված էին ԴՄԿ-ի ժամանակավոր ադմինիստրացիայի ստեղծման ծրագրերում, բայց կուսակցությունը չներգրավվեց ինքնակառավարման մարմնի ստեղծման վերաբերյալ PYD-ի աջակցությամբ նոյեմբերի 11-ին տեղ գտած հայտարարությանը⁷⁶: Այդուհանդերձ, ԴՄԿ-ԱԿ հարաբերություններում համագործակցության պոտենցիալը լավատեսություն է ներշնչում: Մյուս

կողմից, կարևորվում են ՔՀՄ-ի և Գորրան կուսակցության գործունեությունը: Ակնհայտ է, որ ՔՀՄ-ի պառակտման (2009 թ.) ու Գորրան կուսակցության ձևավորման, քաղաքական ասպարեզից Ջալալ Թալաբանու երկարատև բացակայության (2012 թ. դեկտեմբերից մինչ օրս) ու վերջինիս հնարավոր ժառանգորդների շուրջ սկիզբ առած քննարկումների, ՔՀՄ-ի ներսում առկա խմբավորումների միջև հակասությունների խորացման և Քուրդիստանի ընտրություններում (2013 թ. սեպտեմբերի 21) ունեցած անհաջողության արդյունքում ՔՀՄ-ն չի կարող միասնական դիրքորոշում ունենալ սիրիական զարգացումների ու սիրիացի քրդերի նկատմամբ տարվող քաղաքականության մշակման հարցում: Բացի այդ, ի տարբերություն Մասուդ Բարզանու ՔԴԿ-ի և Արդուլլահ Օջալանի PKK-ի, ՔՀՄ-ն սահմանակից չէ Սիրիային և չի վերահսկում վերջինիս հետ մերձասահմանային որևիցե շրջան, առավել ևս չունի ռազմական ներկայություն Սիրիայի տարածքում, ինչն ավելի է դժվարացնում Հյուսիսային Սիրիայում տեղ գտնող զարգացումների վրա ազդելու ՔՀՄ-ի հնարավորությունները: Պատահական չէ, որ ՔՀՄ-ի ներկուսակցական խառնաշփոթի ու սիրիական զարգացումների նկատմամբ ունեցած ազդեցության նվազման պայմաններում Համիդ Դարվիշի գլխավորությամբ Սիրիայում գործող պրոՔՀՄ-ական «քույր» կամ «արբանյակային» կուսակցությունը՝ Սիրիայի Քրդական դեմոկրատական առաջադիմական կուսակցությունը (The Kurdish Democratic Progressive Party in Syria), սկսեց որոշակիորեն հեռանալ թուլացող ՔՀՄ-ից՝ համապատասխանորեն փոխելով նաև իր քաղաքականությունն ու ինքնուրույն դիրքորոշում որդեգրելով որոշակի հարցերում: ՔՀՄ-ի գործիչներից և ոչ մեկը ներկայումս լիովին չի վերահսկում ներկուսակցական իրադրությունը, իսկ 2013 թ. սեպտեմբերի 21-ի արդյունքում կորցնելով 11 պատգամավորական մանդատ՝ կուսակցությունն այժմ արդեն երրորդն է Իրաքյան Քուրդիստանի խորհրդարանում՝ ՔԴԿ-ից ու Գորրանից հետո: Սակայն սիրիական զարգացումների հարցում ՔՀՄ-ի և վերջինից անջատված րեկորի՝ Գորրանի դիրքորոշումները բավականին մոտ են:

16. Ներքաղաքական իրավիճակի սրումն ու միջքրդական հակասությունները Իրաքյան Քուրդիստանում:

2015 թ. հոկտեմբերի դրությամբ ՔԴԿ-ի ներքաղաքական լարվածությունն ու Իրաքյան Քուրդիստանի քրդական կուսակ-

⁷⁶ Wladimir van Wilgenburg, The Kurdish PUK's Syria Policy, - Carnegie Endowment for International Peace, Carnegie Middle East (December 11, 2013)- <http://carnegieendowment.org/syriaincrisis/?fa=53884>

ցությունների միջև հակասությունների սրումը ՔՌԿ-ին կանգնեցրին քաղաքացիական պատերազմի կամ առնվազն ծայրահեղ անկայունության իրական սպառնալիքի առջև: Այդ խնդիրների շարքում էին.

- ՔՌԿ-ի պատերազմն ընդդեմ Իսլամական պետության, պատերազմական աննախադեպ ծախսերը, մարդկային և նյութական կորուստները, որոնք զուգակցվում են Հյուսիսային Իրաքում ԴՄԿ-ի և հատկապես ՔՌԿ-ի ազդեցության աճով:
- Իրաքի մնացյալ հատվածներից և Սիրիայից ՔՌԿ տարածքում ապաստան գտած փախստականների խնդիրը:
- Տնտեսական ճգնաժամն ու սոցիալական լարվածությունը: ՔՌԿ-ի ունեցած ֆինանսական խնդիրները, որոնք հանգեցնում են նաև սոցիալական խնդիրների (աշխատավարձերի վճարման մշտական ուշացումները), որոնց հիմնական պատճառներից մեկը էրբիլ-Բաղդադ հարաբերությունների ծայրահեղ սրումն է, երբ Բաղդադը դադարեցրել է իրաքյան քյուջեից ՔՌԿ-ին հասանելիք (քյուջեի 17%-ը կազմող) գումարների հատկացումը: Ֆինանսական միջոցների սղությունը հնարավորություն չի ընձեռում ՔԴԿ-ին էական ծախսեր կատարելու սիրիական դաշտում:
- Նախագահական ճգնաժամն⁷⁷ Իրաքյան Քուրդիստանում և ՔԴԿ-ՔՀՄ, ՔԴԿ-Գորրան, ՔԴԿ-Իսլամական կուսակցություններ հարաբերությունների ծայրահեղ սրումը, ինչը քաղաքացիական պատերազմի սպառնալիք է ներառում:
- Հակակառավարական ցույցերն Իրաքյան Քուրդիստանի Սուլեյմանիեի շրջանում, որոնց իրական թիրախը ՔԴԿ-ին պատկանող գրասենյակներն են:

Ստեղծված պայմաններում ՔՌԿ-ն չի կարող միասնական դիրքորոշում ունենալ սիրիական զարգացումների հարցում, իսկ ՔԴԿ -ն չի կարող կենտրոնանալ Սիրիայում ԴՄԿ-ի կամ ՔՌԿ-ի հետ իր մրցակցության առնչվող խնդիրների վրա:

Եզրակացություն

Սիրիայի քրդաբնակ տարածքներում ԴՄԿ-ի ունեցած ձեռքբերումները խիստ փխրուն են: ԴՄԿ-ի միակ դաշնակիցը Քուրդիստանի աշխատավորական կուսակցությունն է՝ ՔՌԿ-ն, որը, կարևորագույն գործոն լինելով, նաև ԴՄԿ-ի ամենաթույլ կողմն է: Սիրիական կամ տարածաշրջանային հարթակում ԴՄԿ-ն չունի այլ դաշնակիցներ, այլ միայն գործընկերներ, որոնք գերազանցապես մարտավարական ու ժամանակավոր են՝ ոչ ռազմավարական: Մեծ է նաև ներքրդական կոնֆլիկտային պոտենցիալը ոչ միայն ներսիրիական, այլև տարածաշրջանային համատեքստում: 2012թ. Էրբիլի և 2014 թ. Դոհուկի համաձայնագրերը որոշակիորեն նպաստեցին միջքրդական լարվածության թուլացմանը և նվազեցրին ԴՄԿ-ի ու ՔԱԽ-ի (իրականում ԴՄԿ-ի և ՔԴԿ-ի) միջև հակամարտության հեռանկարները, սակայն լիովին չվերացրին դրա հավանականությունը: Ներկայումս էլ, հատկապես իր ռազմական հզորություն և Սիրիայի քրդերի շրջանում ունեցած ուժեղ հենարանի շնորհիվ, ԴՄԿ-ն շարունակում է աշխատել հիմնականում միայնակ՝ բացառելով նաև փեշմերգաների մուտքը Սիրիայի քրդական կանտոններ և գերիշխելով Սիրիայի քրդական թատերաբեմում թե՛ քաղաքական, թե՛ ռազմական տեսանկյունից: Թե՛ Սիրիայի, թե՛ տարածաշրջանային քրդական քաղաքական կառույցները, միանշանակ կողմ լինելով Սիրիայում քրդական ինքնավարության ու նույնիսկ անկախության գաղափարին, այդուհանդերձ, պառակտված են ԴՄԿ-ի կողմից «դեմոկրատական կոնֆեդերալիզմի»՝ օջախնական գաղափարի կամ «դեմոկրատական ինքնավարության» կանտոնային մոդելի իրականացման հարցում, և քրդական բազմաթիվ քաղաքական ուժեր նույնիսկ չեն ճանաչել ԴՄԿ-ի առաջնորդությամբ ստեղծված քրդական ինքնավարությունը Սիրիայում: Ինքնին բնակչության խառը կազմ ունեցող տարածքներով միմյանցից անջատված երեք քրդական կանտոնները միավորելու հաջողված (Քոբանի և Ջեզիրա) և անհաջող (Աֆրինի և Քոբանի) փորձերը, իրատեսական լինելով հանդերձ, դժվարուժելի և կոնֆլիկտային մեծ պոտենցիալ ունեցող աշխարհաքաղաքական ծրագրեր են, որոնց իրականացումը կախված է առաջին հերթին մեծ տերությունների դիրքորոշումից: Իր հերթին Աֆրինը և Քոբանին կապող տարածքում անվտանգություն և թոփխքագրծ գոտի ստեղծելու թուրքական ծրագրերը միաժամանակ թե՛ սպառնալիք թե՛ հնարավորություններ պարունակող մարտահրավեր են

⁷⁷ 'Legal vacuum' as Iraqi Kurdistan president's term expires, - Ekuord.net (August 20), 2015) <http://ekurd.net/legal-vacuum-as-iraqi-kurdistan-presidents-term-expires-2015-08-20>

ԴՄԿ-ի համար, կախված այն իրողությունից, թե ինչպիսին կլինի Թուրքիայի ներգրավվածությունը հիշյալ ծրագրերում, և կկրկնվի՝ արդյոք Հյուսիսային Իրաքի՝ 1991 թ. «թուխքազերծ գոտու» և «անվտանգության ապաստանի» սցենարը:

ԴՄԿ-ին ԴՄԿ-ի առաջնահերթ թուլությունը ՔԱԿ-ի հետ վերջինիս ունեցած սերտ կապերն են, որոնք ապահովում են թե՛ Մասուդ Բարզանու, թե՛ հիմնականում Թուրքիայի թշնամանքը: Ի հակադրություն դրա, ՔԱԿ-ը շարունակում է հանդիսանալ մասնատված բեկորներ ներառող մի կրալիցիա, որն անկարող է արդյունավետ գործել որպես մեկ միասնական մարմին: Այդուհանդերձ այն շարունակում է գործել գերազանցապես արտաքին ֆինանսական ու քաղաքական հովանավորության շնորհիվ:

Իրաքում և Սիրիայում տեղ գտած զարգացումներից քրդական կողմն էականորեն շահեց: Սակայն մեծ տերությունների հեռանկարային ծրագրերում ավելի էական դերակատարում ունենալու համար տարածաշրջանի քրդական ուժերն ավելի միավորված պետք է լինեն: Մինչդեռ վերջիններս մարտավարական ու ժամանակավոր համագործակցություն են ծավալում գերազանցապես ի դեմս Իսլամական պետության սպառնալիքի: Հետևաբար միջքրդական կոնֆլիկտային պոտենցիալը գերազանցում է կոնսոլիդացման պոտենցիային:

Սակայն թերևս ամենակարևոր իրողությունն այն է, որ որքան էլ կարևորվի ԴՄԿ-ի գործոնը Սիրիայում և ընդհանրապես քրդական գործոնը տարածաշրջանում, ՔՌԿ-ն, ՍԿԿ-ն ու, առավել ևս, ԴՄԿ-ն չունեն սիրիական հակամարտության ընդհանուր ընթացքը, արդյունքն ու նույնիսկ սեփական կարգավիճակը որոշելու քաղաքական և ռազմական կարողությունը:

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍԻՐԻԱԿԱՆ ԾԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԻՇԽՈՂ ԱՆԱՎԻԱԿԱՆ ՎԱՐՉԱՎԱՐԳՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (2015 Թ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

2015 թ. առաջին կեսին սիրիական ճգնաժամն ու երկրի ներսում գինված բախումները շարունակվում էին: Աստիճանաբար խորանում էին նաև ներհամակարգային խմորումները՝ սպառնալով Բաշար ալ-Ասադի վարչակարգի տապալմանը: Այս ուսումնասիրությունը նպատակ ունի քննության անելու 2015 թ. առաջին կեսին Սիրիայում տեղի ունեցած իրադարձություններն ու պալի-բասական վարչակարգի ներսում կատարված փոփոխությունները:

Մերձավոր Արևելքի պատմության և քաղաքականության հայտնի ուսումնասիրողներից Ռայմոնդ Հիններուշի կարծիքով Սիրիայի հարցով ՄԱԿ-ի հատուկ բանագնաց Ստեֆան դե Միստուրայի ակտիվ միջնորդական դիվանագիտության շնորհիվ սիրիական ճգնաժամի խաղաղ կարգավորման հարցով ժնև 3-րդ՝ բանակցությունները հնարավոր է սկսվեն մոտ ապագայում, սակայն ռազմական իրադրությունը Սիրիայի ներսում թույլ է տալիս ենթադրել, որ այդ բանակցությունները հաջողությամբ ավարտելու հնարավորությունն այնքան էլ մեծ չէ:

¹ Ժնև 1-ին բանակցությունները Սիրիայի հարցով տեղի են ունեցել 2012 թ. հունիսի 30-ին Շվեյցարիայի ժնև քաղաքում՝ Սիրիայի հարցով ՄԱԿ-ի հատուկ բանագնաց Քոֆի Անանի, իսկ ժնև 2-րդ բանակցությունները տեղի են ունեցել 2014 թ. հունվարի 23-ից 31-ը Սիրիայի հարցով ՄԱԿ-ի երկրորդ բանագնաց Լախար Բրահիմի միջնորդությամբ: ՄԱԿ-ի հատուկ բանագնացների միջնորդությամբ կազմակերպվող այս բանակցությունները նպատակ են ունեցել հասնելու սիրիական ճգնաժամի խաղաղ կարգավորմանը: <http://www.un.org/News/dh/infocus/Syria/FinalCommuniqueActionGroupforSyria.pdf>, <http://www.aljazeera.com/indepth/features/2014/01/explaining-geneva-ii-peace-talks-syria-2014118142853937726.html>.

Հետագոտողի ներկայագմամբ տարածաշրջանի պետությունները Սիրիան կարող են բաժանել մի շարք ազդեցության գոտիների: Իրանն ու Հիզբալլահի կձգտեն իրենց դիրքերը պահել Դամասկոսում, Կալամունի լեռնային շրջանում, Արևմտյան Հունում և Տարտուսում, Հորդանանը, Ծոփի երկրները և Իսրայելը Դարաայում և Կունեյտրայում աջակություն կգուժաբերեն Ազատ սիրիական բանակին²: Թուրքիան և Կատարը կաջակցեն Իդլիբի և Հալեպի շրջաններում գործող զինված խմբավորումներին³: Իսլամական պետությունը կպահպանի իր դիրքերը Սիրիայի արևելքում՝ շարունակելով պայքարը քրդերի և կառավարական ուժերի դեմ⁴:

2015 թ. մարտի 28-ին սիրիական բանակը, չկարողալով դիմակայել ահաբեկչական Ջաիսա Ան-Նուրա (Սիրիացիների պաշտպանության ճակատ) խմբավորման ինտենսիվ հարձակումներին, նրանց զիջեց Սիրիայի հյուսիսարևմուտյան խոշոր բնակավայրերից Իդլիբը⁵: Չնայած կառավարական

ուժերի կողմից արված բազմաթիվ փորձերին՝ սիրիական բանակը չկարողացավ հետ գրավել Դամասկոսին հարող հյուսիսային և արևելյան շրջանները: Սիրիական բանակի առանձին ստորաբաժանումներ ձախողումներ գրանցեցին նաև Հալեպի և Դարաայի շրջաններում:

Ծայրահեղ ծանր վիճակում է գտնվում Սիրիայի տնտեսությունը: Բրիտանական Միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտի՝ «Չեթիլմ Հաուզի» հետազոտող Դեյդիվ Բաթերի ուսումնասիրության համաձայն՝ 2011 թ. մարտից սկսած Սիրիայի տնտեսության արտադրողականությունը կրճատվել է շուրջ 50%-ով: Հսկայական կորուստներ են գրանցվել գյուղատնտեսական ապրանքների արտադրության, էներգետիկայի և արդյունաբերության տարբեր ոլորտներում: Լայնածավալ արտագաղթի արդյունքում Սիրիայի բնակչությունը 21 միլիոնից կրճատվելով հասել է 17.5 միլիոնի, իսկ դեռևս երկրի ներսում մնացած բնակչության 1/3-ը համարվում է ներքին տեղահանված: 2012 թ. հունվարից մինչև 2015 թ. մարտը երկրում գնաճը կազմել է 51%, սիրիական ազգային դրամը արժեզրկվել է 80%-ով⁶: Եվրախորհրդի արտաքին հարաբերությունների (European Council on Foreign Relations) հետազոտական կենտրոնի զեկույցի համաձայն՝ Սիրիայում մարդկային զարգացման ինդեքսը (Human Development Index/HDI) նվազել է՝ հասնելով 1977 թ. մակարդակին, այսինքն՝ այսօրվա միջին սիրիացիի ունի նույն կյանքի տևողությունը, կրթության և աշխատանքային պայմաններն ունենալու պահանջները, ինչը նաև ուներ շուրջ 38 տարի առաջ: Հաշվարկների համաձայն՝ տարեկան միջինը 5% անընդմեջ տնտեսական աճի դեպքում միայն 30 տարի անց հնարավոր կլինի Սիրիայի համախառն ներքին արդյունքի ծավալը հասցնել 2010 թ. արդյունքներին, որն այդ ժամանակ կազմել է 60.5 մլրդ ամերիկյան դոլար⁷:

² Ազատ սիրիական բանակը ստեղծվել է 2011 թ. հուլիսի 29-ին սիրիական ազգային բանակի դասայից սպաների և զինվորների կողմից: Գլխավոր նպատակը ռազմական ճանապարհով բառասական վարչակարգի տապալումն էր Սիրիայում: 2015 թ. հուլիսից Սիրիական ազգային կոալիցիան, որն սիրիական ընդդիմության քաղաքական ղեկավար մարմինն է, Ազատ սիրիական բանակի գլխավոր շտաբի պետ Նշանակեց քրիզոգի զենեթալ Ահմադ Բարին: 2013 թ. փետրվարի 28-ին ԱՄՆ-ի պետքարտուղար Ջոն Քերին հայտարարեց, որ ԱՄՆ-ը Ազատ սիրիական բանակին կորսնակողի ռազմական օգնություն, որը ներառում էր ռազմական այդ կառույցի անդամների մարզումները և Նյուբատնիսիական ապահովումը: Այս ճանապարհով Ազատ սիրիական բանակն առաջին անգամ ԱՄՆ-ի կողմից ճանաչվեց որպես օրինակարգ ռազմական մարմին: Մանրամասն տե՛ս O'Bagy E., The Free Syrian Army, Middle East Security Report 9, Institute for The Study of War, March 2013.

³ Իդլիբի և Հալեպի շրջաններում հիմնականում գործում են Թուրքիայի հատուկ ծառայությունների կողմից հրահանգավորվող զինված իսլամական ծայրահեղ գաղափարներով տոգորված խմբավորումները, որոնցից ամենաախտիներն են Աիրաբ ալ-Համի և Նուրադդին ալ-Ջանկի գնադատակները: Մանրամասն տե՛ս Шегловин Ю. Б., О Развитии Военной Ситуации В Сирии, Институт Ближнего Востока, Москва, 16.08.2015. <http://www.imes.ru/?p=25599>

⁴ Lund A., Grim Expert Assessments of Syria's Peace Process, Carnegie Endowment for International Peace, 03.08.2015.

⁵ Sly L., Syrian Rebels Take Strategic Town of Idlib, Washington Post, 28.03.2015.

⁶ Butter D., Syria's Economy, Picking up The Pieces, Middle East and North Africa Program, June 2015. http://www.chathamhouse.org/sites/files/chathamhouse/field/field_document/20150623SyriaEconomyButter.pdf

⁷ Yazigi J., Syria's War Economy, European Council of Foreign Relations, 07.04.2014. http://www.ecfr.eu/publications/summary/syrias_war_economy, Համաշխարհային բանկի տվյալներով ճգնաժամի հետևանքով ստեղծված հումանիտար աղետը երկրում գնալով վատթարանում է: Չոհվածների թիվը գերազանցում է 220 հազարը, շուրջ 840 հազար սիրիացիներ հակամարտության հետևանքով հաշմանդամ են դարձել: 3.8 միլիոն սիրիացիներ փախստականներ են, 1.5 միլիոն ունեն ոչ փախստական

Չնայած արևմտյան որոշ հետազոտողների գնահատականներով⁸ Բաշար Ալ-Ասադը կարողանում է պահել իշխանությունն Իրանի և Ռուսաստանի բազմակողմ աջակցության շնորհիվ, սակայն վաշինգտոնյան «Միդլ Իսթ Ինսթիթյույթ» հետազոտական կենտրոնի աշխատակից և 2011-2014 թթ. Սիրիայում ԱՄՆ-ի դեսպան Ռոբերտ Ֆորդը գտնում է⁹, որ առաջիկայում Սիրիայում համակարգային փոփոխություններն անխուսափելի են լինելու՝ մի շարք ռազմական և քաղաքական գործոններից ելնելով:

Առաջին գործոնը կառավարական ուժերի՝ պաշտպանություն կազմակերպելու ու հակահարված տալու անկարողությունն է: Չնայած զինված ընդդիմությունն Իդլիբի գրոհի մասին նախօրոք, շաբաթներ առաջ հայտարարություններ էր տարածել, սակայն իշխանություններն անկարող գտնվեցին, լրացուցիչ զորքեր կենտրոնացնելով, ուժեղացնել քաղաքի պաշտպանությունը, քանի որ սիրիական բանակը զինվորական ուժի պակաս ունի: Մարտի 28-ին՝ մարտական գործողությունների սկսվելուց մեկ շաբաթ անց, քաղաքն անցավ ընդդիմադիրների ձեռքը: Մարտի 25-ին երկրի հարավարևելյան շրջանում՝ Հորդանանի հետ սահմանին, իշխանությունները կորցրին Բուսրա Շամ բնակավայրը, իսկ արդեն ապրիլի 2-ին Հորդանանի հետ սահմանի ամենակարևոր անցակետերից վերջինը՝ Նափբը: Հալեպի արևմտյան շրջանների պահպանությունը նույնպես վտանգված էր թիկունքային ապահովման հետ կապված խնդիրների առկայության պայմաններում: 2015 թ. մայիսին կատաղի մարտեր տեղի ունեցան պատմական Պալմիրայի (Օտարմոր) համար մղված պայքարում: Մայիսի 13-ին «Իսլամական պետություն»¹⁰ ահաբեկչական խմբավորման (այսուհետ՝

«Իսլամական պետություն») զինյալների կողմից Պալմիրայի պաշտպանությունն ապահովող կառավարական ուժերի դեմ սկսված գրոհն ավարտվեց մայիսի 20-ին «Իսլամական պետության» գրոհայինների հաղթանակով: Բրիտանական Ջեյնս Դիֆենս (Jane's Defence) պարբերականի ռազմական վերլուծաբան Մեթյու Հենմանի կարծիքով Պալմիրայի կորուստը կրճատում է կառավարական ուժերի օպերատիվ-մարտավարական հնարավորությունները՝ երանց թողնելով Ջայշ Ալ-Ֆաթիի (Հաղթանակի) և «Իսլամական պետության» կողմից վերահսկվող տարածքների միջև: Բազմաթիվ վերլուծաբաններ, այդ թվում նաև եվրասիա խումբ (Eurasia Group) քաղաքական հայտնի խորհրդատվական կենտրոնի վերլուծաբան Ալիամ Քամիլը գտնում են, որ Պալմիրայից կառավարական ուժերի դուրս գալը ցույց է տալիս, որ սիրիական բանակն այլևս անկարող է իր վերահսկողությունը պահպանել երկրի ամբողջ շրջաններում և հետ քաշվելով կենտրոնանում է մեծ քնակչությամբ քաղաքների ու բնակավայրերի պաշտպանության ապահովման վրա¹¹: Սիրիայի իշխանության տեսանկյունից կառավարական ուժերը, կորցնելով Պալմիրան, տակտիկական պարտություն են կրել, սակայն ռազմավարական հաղթանակ են գրանցել, քանի որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգություն համարվող Պալմիրայի գրավումն ահաբեկչական խմբավորման կողմից կարող էր նպաստել Սիրիայի նկատմամբ ԱՄՆ-ի վարած քաղաքականության վերանայմանը, ինչպես նաև կստիպեր Հորդանանին ավելի խորն ընկալել «Իսլամական պետության» սպառնալիքը, մյուս կողմից էլ կարող էր նպաստել, որպեսզի Իրաքն ուժեղացներ Սիրիայի հետ համագործակցու-

միզրաստի կարգավիճակ: Ավելի քան 12.2 միլիոն մարդ, այդ թվում՝ 5.6 միլիոն երեխաներ, ունեն հումանիտար օգնության կարիք: <http://www.worldbank.org/en/country/syria/overview>

⁸ Taylor G., Russian, Iranian Loyalty to Bashar Assad tested as Syria Approaches Tipping Point, *Washington Times*, 29.06.2015. <http://www.washingtontimes.com/news/2015/jun/29/russian-iranian-loyalty-to-bashar-assad-tested-as-/?page=all>

⁹ Ford R., The Assad Regime: The Beginning of the End, *The Middle East Institute*, Washington D.C., 24.04.2015.

¹⁰ Իրաքի և Լևանտի իսլամական պետությունը կամ Իրաքի և Սիրիայի իսլամական պետությունը, Իրաքի և Սիրիայի Արաբական Հանրապետության տարածքներում գործող սուննի ծայրահեղ ահաբեկչական

խմբավորում է: Ակտիվ ծայրահեղական գործունեություն է ծավալում նաև Արևելյան Լիբիայում, եզիպտոսի Սինայի թերակղզում, ինչպես նաև Մերձավոր Արևելքի, Հյուսիսային Աֆրիկայի, Հարավային և Հարավարևելյան Ասիայի մի շարք այլ տարածքներում: 2014 թվականի հունիսի 29-ին ազդարարվեց Իրաքի և Լևանտի իսլամական պետության ստեղծումը, որի առաջնորդը դարձավ ունը Աբու Բաքր ալ-Բադդադի: Հակադրվում է շիա իսլամի ուսմունքներին: Մանրամասն տե՛ս Alastair C., You Can't Understand ISIS if You Don't Know The History of Wahhabism in Saudi Arabia, *The Huffington Post*, 05.09.2014.

¹¹ Cassandra V., Analysis: ISIS Gains Momentum With Palmyra, Assad Squeezed on Multiple Fronts. *NBC News*. 23 May 2015.

թյունը¹²: Սակայն Դամասկոսում այս տեսակետը հորջորջողների սպասումները չարդարացան, քանի որ ԱՄՆ-ը դեռևս «Իսլամական պետության» դեմ պայքարում և ընդհանրապես Սիրիայի նկատմամբ իր քաղաքականության հիմնական դրույթների փոփոխության նշաններ ցույց չի տալիս: Իսկ Հորդանանի և Իրաքի հետ ավելի խորը համագործակցության վերաբերյալ տեղեկատվություն զոնե բաց հետախուզական աղբյուրները չեն տրամադրում:

Երկրորդ գործոնը վարչակարգի ներսում հետզհետե աճող անվստահության ու անհամաձայնության մթնոլորտն է: 2015 թ. մարտին իշխանությունները հայտարարեցին, որ երկրի անվտանգության համակարգի կարևորագույն մարմիններից երկուսի ղեկավարներն ազատվել են իրենց պաշտոններից: Սիրիայի Քաղաքական անվտանգության դիրեկտորատի ղեկավար Ռուստամ Ղազալեի և ռազմական հետախուզության ղեկավար Այաֆիկ Շիհադեհի պաշտոնազրկումներն աննախադեպ էին: Այս երկու գործիչները գտնվել էին Սիրիայում տեղի ունեցող ռազմական գործողությունների ընթացքում իրանական տարրի ազդեցության ահազանցող աճի պատճառով: 2015 թ. մարտին Ռուստամ Ղազալեն իր թիկնապահ զորախմբի հետ միասին այցելեց Դամասկոսի ՔՖար Սուսե արվարձան՝ ռազմական հետախուզության ղեկավարի հետ քննարկելու սիրիական պատերազմում ոչ սիրիական տարրերի՝ իրանական զինուժի և Հիզբալլահի ռազմական ներկայության խնդիրը: Այդ ժամանակ Ռուստամ Ղազալեն ծեծի ենթարկվեց Շեհադեհի մարդկանց կողմից՝ կորցնելով գիտակցությունը¹³: Որոշ հեղինակներ Ղազալեի և Շեհադեհի միջև հարաբերությունների վատթարացման պատճառներից են համարում մաքսաներգության ճանապարհով ստացված ֆինանսական միջոցների բաշխման հարցը¹⁴: Սաուդական ալ-Արաբիյա հեռուստաընկերության փոխանցմամբ Լիբանանի սուննիների առաջնորդ Սաադ Հարիրիի հաստատել է, որ մինչև Ռուստամ Ղազալեն կհանդիպեր Շեհադեհի հետ ՔՖար Սուսեում, նա փորձել էր

կապ հաստատել Հարիրիի կողմնակիցների հետ՝ ցանկանալով հայտարարությամբ հանդես գալ Հարիրիին պատկանող Ալ-Մուսթաֆալ հեռուստատեսությամբ և հույժ գաղտնի տեղեկատվություն տրամադրել Ռաֆիկ Հարիրիի սպանության գործի հետ կապված¹⁵: Ապրիլի 24-ին Բեյրութի ասադամետ Ալ-Մայադին հեռուստակայանը հայտնում է, որ Ռուստամ Ղազալեն մահացել է¹⁶: Ղազալեի թաղման արարողությունը կայացավ Դամասկոսի Բաղդադ փողոցում գտնվող Լալա Մուստաֆա փաշա մզկիթում: Սիրիական պետական հեռուստաընկերությունը, որը սովորաբար մահազդ է տարածում հանրահայտ բարձրաստիճան պաշտոնյաների մասին, ոչ մի տեղեկատվություն այդ մասին չփոխանցեց, այս և թաղմանը ներկա փոքրաթիվ պաշտոնյաների և սպաների ներկայությունը ենթադրաբար խոսում է այն փաստի մասին, որ Ղազալեն սպանվել է բասանական վարչակարգի հետ իր ունեցած անհամաձայնությունների պատճառով:

Ղազալեի և Շեհադեհի պաշտոնանկությունները հետևում էին դեռևս 2014 թ. սեպտեմբերին երկու ալավի անվտանգության ծառայողների՝ Հաֆեզ Մախլուֆի և Սաքր Ռուստոմի հեռացումներին: Հաֆեզ Մախլուֆը, ով ղեկավարում էր հայտնի Անվտանգության զլխավոր դիրեկտորատի (Իդառաթ ալ-Աման Ալամ) 40-րդ մասնաճյուղը Դամասկոսում¹⁷, պաշ-

¹⁵ المروري عزالي رسمت تمصلا بنا قبل يوم من حادثة ضرب
<http://www.alarabiya.net/ar/arab-and-world/syria/2015/04/28/>

¹⁶ A. Land, նշվ. աշխ.:

¹⁷ Այս կառույցը շատ կարևոր գործառնություն ունի: Այն պատասխանատու է քաղաքացիական անվտանգության համար: 40-րդ մասնաճյուղը ներքին գործերի նախարարության կազմում գտնվող Անվտանգության զլխավոր դիրեկտորատի մասնաճյուղերից է, որը վերահսկում է վարչակարգի և քաղաքական կուսակցությունների, առևտրային միությունների, համալսարանների և ոսանողների միջև հարաբերությունները՝ այդպիսով կառավարելով քաղաքացիական հասարակության գրեթե բոլոր ասպեկտները երկրում: Պատմականորեն 40-րդ մասնաճյուղը լուրջ ազդեցություն է ունեցել վարչակարգի ներսում: Սիրիայի նախկին նախագահ Հաֆեզ Ալ-Ասադի կառավարման շրջանում կառույցի ղեկավարն էր Մուհամմադ Նախիֆ Խեյրեբքը, որը հայտնի էր Աբու Ռախլ անվամբ, նրան հաջորդեց հայտնի Բահջաթ Սուլեյմանը, որը կարողացել էր համոզել արդեն 2000 թ. սկզբների նախագահ Բաշար ալ-Ասադին թույլ տալ քաղաքացիական հասարակության կոմիտեների ձևավորումը, որոնք պետք է նախաձեռնեին այսպես կոչված Դամասկոսյան զարուն: Սակայն հետագայում հին

¹² Westall S., Syrian Insurgent Advances Put Assad Under pressure, Reuters, 02.06.2015. <http://uk.reuters.com/article/2015/06/02/uk-mideast-crisis-syria-military-idUKKBN0011W520150602>.

¹³ Land A., The Death of Rustam Ghazaleh, Carnegie Endowment for International Peace, Washington DC, April 30, 2015 <http://carnegieendowment.org/syriaincrisis/?fa=59953>

¹⁴ <http://www.alquds.co.uk/?p=307243>

տոնանկությունից հետո իշխանությունների իմացությամբ լքեց Սիրիան և հաստատվեց Բելառուսում¹⁸: Մախլուֆի պաշտոնանկությունը կարող է համարվել իշխանությունների կողմից սիրիական հասարակության նկատմամբ ցուցաբերված բարի կամքի դրսևորում: Այս պաշտոնանկությունը պետք է դիտարկել ներքին խնդիրների չեզոքացման շրջանակում: Այդ քայլով վարչակարգը փորձում էր չեզոքացնել սիրիացիների դժգոհությունն ու ցատումը պետական պաշտոնյաների նկատմամբ, ինչպես նաև հատուկ ցույց էր տրվում այլ գերատեսչություններին ղեկավարներին, որ եթե այլափ պաշտոնյաներն ու նախագահ Ասադի ընտանիքի անդամները կարող են զրկվել իրենց պաշտոններից, ապա մյուսները պետք է չափազանց զգույշ լինեն հակաիշխանական, ընդդեմ բաասական վարչակարգի գործողություններ կատարելիս:

Այս համատեքստում պետք է դիտարկել նաև ապրիլի 14-ին նախագահ Ասադի հրամանով իր հորեղբորորդի Մունտիր ալ-Ասադի ձերբակալությունը Լաթաքիայում: Նա այլափական շրջաններում Ասադի ընտանիքի հեղինակություն վաշելող ներկայացուցիչներից է, որին նաև բաասական իշխանությանը նյութական աջակցություն տրամադրելու պատճառով մի շարք երկրներ ընդգրկել են իրենց պատժամիջոցների ցուցակներում¹⁹: Դամասկոսից Լաթաքիա ժամանած հատուկ ջոկատայինները շրջափակել են Լաթաքիայի Ալզիհա շրջանը, ձերբակալել նրան և Ջաբախ օդանավակայանից հասցրել Դամասկոս, որտեղ նախագահի հետ հանդիպումից հետո նույն գիշերը Մունտիր ալ-Ասադին Հանրապետական զվարդիայի ջոկատայինները հետ են ուղեկցել Լաթաքիա: Որոշ աղբյուրների պնդմամբ Մունտիր ալ-Ասադին ձերբակալել են այն ժամանակ,

երբ Ազգային անվտանգության բյուրոն հաստատել է Մունտիր ալ-Ասադի և նախագահ Ասադի հորեղբայր Ռիֆաթի միջև հարաբերությունների մասին տեղեկությունը²⁰, իսկ սիրիական Ալ-Ախբար թերթի փոխանցմամբ Մունտիրի ձերբակալությունը կապված է նրա՝ այլափական շրջաններում ծավալած ինքնագործունեության հետ, մասնավորապես հանցագործ խմբավորումներից մեկին սեփական ուժերով առևանգելու փաստի արձանագրման հետ²¹: Պետք է ենթադրել, որ նման գործելաճը վարչակարգի կողմից դիտվել է որպես սպառնալիք սեփական իշխանության նկատմամբ, քանի որ Մունտիրի ինքնագործունեությունն օրինակարգության ապահովման ուղղությամբ ի դերն է հանել բաասական իշխանության անգործությունն այլափական շրջաններում հասարակական կարգի պահպանման և հանցագործության դեմ պայքարում:

2015 թ. մայիսի 11-ին քրիտանական «Թելեգրաֆ» և «Դեյլի Մեյլ» պարբերականները միաժամանակ լուր տարածեցին, որ Սիրիայի Ազգային անվտանգության բյուրոյի ղեկավար, հայտնի գեներալ Ալի Մամուրը տնային կալանքի է ենթարկվել վարչակարգին ընդդիմադիր գործիչների հետ զաղտնի հանդիպումներ ունենալու և Թուրքիայի հետախուզական ծառայությունների հետ միջնորդավորված բանակցություններ վարելու մեղադրանքով²²: Հեղինակներ Ռաթեր Շերլոքն ու Քեթրոլ Մալուֆը պնդում են, որ երբ կառավարական ուժերն իրենց վերահսկողությունը սկսեցին կորցնել Իդլիբի և Ջիսր Շուղուրի նկատմամբ²³ դրանք զիջելով ծայրահեղական զինված խմբա-

²⁰ Syrian President Orders Munther Assad to Damascus, by Al-Souria, 16.04.2015, http://syrianobserver.com/EN/News/29027/Syrian_President_Orders_Munther_Assad_Damascus

²¹ <http://www.al-akhbar.com/syria?page=12>

²² Sherlock R., and Malouf C., Bashar al-Assad's Spy Chief Arrested Over Syria Coup Plot, The Telegraph, London, 11.05.2015. <http://www.telegraph.co.uk/news/worldnews/middleeast/syria/11596142/Bashar-al-Assads-spy-chief-arrested-over-Syria-coup-plot.html>

Hall J., Syrian spy Chief is Arrested after Plotting with Rebel Sympathisers to Stage Coup and Planning to Overthrow the Assad Regime, Mail Online, London, 11.05.2015. <http://www.dailymail.co.uk/news/article-3076426/Syrian-spy-chief-arrested-plotting-rebel-sympathisers-stage-coup-planning-overthrow-Assad-regime.html>

²³ 2015 թ. ապրիլի 22-ին հակաիշխանական զինված խմբավորումները սկսեցին իրենց գոհը Ջիսր ալ-Շուղուր քնակավայրի վրա: Այս քնակավայրի

զվարդիան՝ հիմնականում փոխվարչապետ Աբդուլ Հալիմ Խադդամը և նախկին ՋՈՒ ԳՇ պետ Հիթմեթ Շիհաբին, կարողացան հետ համոզել նախագահ Բաշարին արգելել այդ կոմիտեների գործունեությունը և կրկին անցնել ավտորիտար կառավարման: Բախթաթ Սուլեյմանը թողեց իր պաշտոնը և նշանակվեց Հորդանանում Սիրիայի դեսպան, իսկ Բաշար ալ-Ասադի քեռորդի Հաֆեզ Մախլուֆը նշանակվեց 40-րդ մասնաճյուղի ղեկավար:

¹⁸ Aziz J., Assad Dismisses Security Chief of Powerful Branch 40, Washington D.C., October 16, 2014, <http://www.al-monitor.com/pulse/originals/2014/10/change-leadership-damascus-syria-regime.html#>

¹⁹ Alajlan A., Syria: Bashar al-Assad Arrests Own Cousin Munther for Kidnapping Links, International Business Times, 14.04.2015.

վրումներին, այդ թվում նաև հայտնի Ջաբհաթ Ան-Նուսրային, գեներալ Ալի Մամլուքը ենթադրաբար սկսել է կապեր հաստատել վարչակարգին ընդդիմացող տարբեր պետությունների հատուկ ծառայությունների ներկայացուցիչների և սիրիացի ընդդիմադիր գործիչների հետ: Նա կարողացել է նաև հալեպցի մի գործարարի միջոցով կապ հաստատել նաև Բաշար ալ-Ասադի հորեղբայր, դեռևս 1997 թ. Սիրիայից վտարված Ռիֆաթ ալ-Ասադի հետ, չնայած Ռիֆաթ ալ-Ասադը որևէ մենաթափանցություն չի արել այս լրատվության հետ կապված²⁴: Ալի Մամլուքին ենթադրյալ տնային կալանքի ենթարկելը Բաշար ալ-Ասադի վարչակարգի ներսում աճող անվստահության մթնոլորտի և ձևավորվող ճգնաժամի արդյունքն էր: Բասսական և անվտանգության ոլորտի պետական ծառայողներն անհանգստանում էին ապստամբական ուժերի կողմից տարբեր ուղղություններով առաջխաղացումների և Սիրիայի դաշնակից Իրանի զինվորական և քաղաքացիական պաշտոնյաների աճող ազդեցության պատճառով: Ներկայում իրանցի պաշտոնյաները Սիրիայի կառավարությունում առաջնակարգ ղեկավարման պաշտոններ են զբաղեցնում, սկսած կենտրոնական բանակից մինչև մարտահաշտում տարբեր հրամանատարական պաշտոններ: Նախագահական նստավայրում նույնպես գլխավոր խորհրդականների պաշտոններում իրանցիներ են նշանակված, իսկ Ալի Մամլուքը, որը երկրի ամենաազդեցիկ կառույցներից մեկի ղեկավարն էր և համարվում էր նախագահ Բաշար ալ-Ասադի ամենավստահելի գործիչներից մեկը, չէր կարողանում հանդուրժել ուժերի հավասարակշռության տվյալ տրամաբանությունը:

Հուլիսի վերջին, սակայն, բրիտանական լրատվամիջոցների տրամադրած վերոնշյալ տեղեկատվությանը հակասող լուրեր տարածվեցին, որ Ալի Մամլուքն այցելել է Ասուդյան Արաբիա և Մասկատ: Նրա այս այցը ցույց տվեց, որ Ասուդյան

գրավման գլխավոր նպատակը կառավարական ուժերի թիկունքային ապահովման համար ռազմավարական նշանակություն ունեցող Իդլիբ-Լաթաքիա ավտոճանապարհի նկատմամբ վերահսկողության սահմանումն էր: Արդեն ապրիլի 28-ին կառավարական ուժերը տեղի տվեցին հիմնականում Ջաշ ալ-Ֆաթի խմբավորման գրոհայինների ներգրավմամբ հարձակումներին և քաղաքի նկատմամբ վերահսկողություն անցվող երկրի հյուսիսարևմտյան շրջանում գործող տարբեր զինված խմբավորումներից կազմված զինյալների ձեռքը: Karouny M., Islamist Fighters Seize Syria's Jisr Al-Shughour, Army says redeploys, Reuters, 25.04.2015.

²⁴ Sherlock R., and Malouf C., նշվ. աշխ.:

Արաբիան և Օմանն առաջին անգամ հրավիրել են բարձրաստիճան սիրիացի պաշտոնյային՝ քննարկելու սիրիական ճգնաժամի քաղաքական հանգուցայումման ճանապարհները²⁵: Սիրիայի արտգործնախարարության պաշտոնական կայքի համաձայն՝ Մամլուքի այցելությանը հաջորդեց օգոստոսի 8-ին Սիրիայի արտաքին գործերի նախարար Ուալիդ Մուալլիմի պաշտոնական այցը Մասկատ, որտեղ նա հանդիպեց Օմանի իր պաշտոնակցի՝ Յուսուֆ բին Ալուոիի հետ՝ քննարկելու սիրիական ճգնաժամի ապագա հանգուցայումմանը, որով պետք է ապահովվեին Սիրիայի ինքնիշխանությունը, միասնականությունը և տարածքային ամբողջականությունը²⁶: Մամլուքի պատվիրակության կազմում ընդգրկված անդամների՝ «Ֆորին Փոլիսի» կայքին տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Մամլուքն այցելել էր Ջիդդահ և Մասկատ՝ շարունակելու Սիրիայում քաղաքացիական պատերազմի խաղաղ հանգուցայումմանը միտված իր առաջարկությունները: Բանակցությունները սառտական և իրանական կողմի հետ սկսվել և զարդանի ընթանում էին դեռևս ամիսներ առաջ: Ալի Մամլուքն իր գործընկերների վկայությամբ ռազմավարական մտածողությամբ օժտված կարևոր պաշտոնյա է, ով կարողանում է կառավարել բասսական վարչակարգի անվտանգության մարմինները և պահել դրանց միջև մրցակցային հարաբերությունները²⁷: Ալի Մամլուքի այցելությունները Ասուդյան Արաբիա և Օման, ինչպես նաև ակտիվ գործունեությունը հիմք են տալիս ենթադրե՞ն, որ բրիտանական մամուլի կողմից նրան տնային կալանքի ենթարկելու տեղեկատվությունը հնարավոր է՝ անհիմն էր, այսինքն՝ վերջինս իրականում ազատության մեջ է եղել և նման լուրեր տարածելով՝ վարչակարգը նպատակ է ունեցել զգոնություն հաղորդելու մյուս պաշտոնյաների շրջանում, որոնք Իդլիբի և Ջիար ալ-Շուդրիի ապստամբական ուժերի ձեռքն անցնելուց հետո հնարավոր է՝ փորձեին հրաժարվել իրենց ղեկավար պաշտոններից և խորացնեին ներհամակարգային ճգնաժամը երկրում՝ այդպես ավելի թուլացնելով բասսական իշխա-

²⁵ Bowen A., Mcinnis M., The Saudi-Syrian Back Channel to End the War, Foreign Policy, Washington DC, 17.08.2015, <https://foreignpolicy.com/2015/08/17/the-saudi-syrian-back-channel-to-end-the-war-iran/>.

²⁶ <http://www.mofa.gov.sy/ar/news/17>.

²⁷ Bowen A., Mcinnis M., նշվ. աշխ., <https://foreignpolicy.com/2015/08/17/the-saudi-syrian-back-channel-to-end-the-war-iran/>.

նույնպես հիմքերը: «Ֆորին Փոլիսի» պարբերականի հոդվածագիրները նույնպես պնդում են, որ Ալի Մամլուքը մյուս սիրիացի զինվորական և անվտանգության ոլորտի գործիչների հետ միասին անհանգըստացած էր Սիրիայում իրանական ազդեցության մեծացմամբ, քանի որ ոչ մի ռազմավարական և օպերատիվ մակարդակի որոշում չէր կայացվում առանց իրանական կողմի իմացության: Մամլուքը և մյուս պաշտոնյաները գտնում էին, որ պաշտոնական Թեհրանի ներգրավվածությունը սիրիական ներքին գործերին աստիճանաբար չեզոքացնում է սիրիական ղեկավար էլիտայի որոշիչ դերը երկրի ապագայի կառուցման գործում²⁸:

Երրորդ գործոնը վարչակարգի ներսում պետության կայունության ապահովման հարցում տարակարծությունների և ոչ միասնական տրամադրությունների առկայությունն է: Տասնյակ հազարավոր զոհերից հետո այլափական համայնքում հոգնածության տրամադրություններ են նշմարվում: Դամասկոսում և Լաթաքիայում կառավարական ուժերի զորահավաքը չի լուծել բանակի թվային ապահովման խնդիրը: Բազմաթիվ ընտանիքներ միջոցներ են ձեռնարկում՝ իրենց չափահաս տարիքի շնորհ հատող զավակներին Սիրիայից դուրս տեղափոխելու համար: Ավելին, դեռևս 2013 թ. ամռանը Տաբլաքի օդանավակայանի կորստից հետո ձևավորված այլափական «Հայրենիքի կանչը» հակաիշխանական շարժումը կարողացել է գոյատևել՝ չնայած այն ճնշելու և արմատախիլ անելու իշխանությունների բազմաթիվ փորձերին: Միևնույն ժամանակ բաասական իշխանությունները փորձում էին համախմբել երկրի դրուզական համայնքներին, չնայած նրանք ի սկզբանե չեզոքություն են պահել՝ միանշանակորեն չպաշտպանելով հակամարտող ոչ մի կողմի²⁹: Այսպիսի բարդ իրադրությունը ստիպում է, որ նախագահ Ասադը հուլիսի 25-ին դասալիքների և բանակում ծառայելուց խուսափողների համար համաներման ակտ է ստորագրում: Հուլիսի 26-ին ելույթ ունենալով պետական և կառավարական մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ՝ Բաշար ալ-Ասադը անթաքույց ընդգծում է. «Սիրիական բանակը զինվորների կարիք ունի: Բանակը չունի

մարդկային այն միջոցները, որպեսզի կարողանա իր վերահսկողության տակ պահել երկրի բոլոր շրջանները, մասնավորապես որ ապստամբական ուժերը հսկայական աջակցություն են ստանում արտերկրից, հիմնականում Թուրքիայից, Ասուդյան Արաբիայից և Կատարից: Մենք պետք է հստակեցնենք կարևոր ռազմավարական շրջանները մեզ համար և դրանք պահենք մեր վերահսկողության տակ: Պարտություն բառը սիրիական բանակի բառարանում չկա, մենք պետք է մարտնչենք և պետք է հաղթենք»: Սիրիական բանակը հուլիսի սկզբին սկսել է նոր զորահավաք՝ զինվորական ուժի պակասը լրացնելու խնդրին լուծում տալու համար: Մարդու իրավունքների սիրիական դիտորդ (Syrian Observatory for Human Rights) կազմակերպության տվյալներով³⁰ շուրջ 70 հազար սիրիացիներ խուսափել են պարտադիր զինվորական ծառայության անցնելուց, 2011 թ. ի վեր սիրիական բանակի ավելի քան 80 հազար զինվորներ և սպաներ են գոհվել ծայրահեղական ցիհադիստների և ապստամբների տարբեր խմբերի դեմ պայքարում³¹: Հորդանանցի հոդվածագիր Նաբիհ Բուլուրը բրիտանական «Թեյեզրաֆ» պարբերականում անդրադառնում է օգոստոսի 8-ին Լաթաքիայում սկսված բողոքի ցույցերին, որոնց պատճառ է հանդիսացել այն, որ նախագահ Բաշար ալ-Ասադի զարմիկներից մեկը՝ Սուլեյման ալ-Ասադը, օգոստոսի 4-ի երեկոյան Լաթաքիայի մայրուղիներից մեկի վրա, ճանապարհը իրեն չգիջելու պատճառով, գնդակահարել էր սիրիական բանակի գնդապետներից Հասան ալ-Շեյխին: Այս դեպքը բողոքի այլք բարձրացրեց այլափական շրջանում, մասնավորապես Լաթաքիայում: Իշխանամետ «Դամասկոսի այսօր» ինտերնետային կայքէջը տեսանյութեր էր ներբեռնել, որտեղ երևում էր, թե ինչպես էր զայրացած ամբոխը «Մարդիկ ուզում են պատժել Սուլեյմանին» կոչերով ցույցի դուրս եկել Լաթաքիայում: Չնայած բողոքավորներն ազգային միասնության կոչեր էին անում ելույթների ժամանակ, սակայն այս դեպքը շատերը համարում են

²⁸ Նույն տեղում:

²⁹ Samaha N., Trapped between Assad, Israel, and Al-Qaeda, Foreign Policy, 22.06.2015. <http://foreignpolicy.com/2015/06/22/druze-syria-assad-israel-netanyahu/>

³⁰ Syrian Observatory for Human Rights Report, By numbers, The two speeches of July bring misfortune and casualties on the regime forces and allied militiamen <http://www.syriaohr.com/en/2015/08/by-numbers-the-two-speeches-of-july-bring-misfortune-and-casualties-on-the-regime-forces-and-allied-militiamen/>.

³¹ Tisdall S., Syrian President Admits Military Setbacks, in First Public Speech for a Year, The Guardian, 26.07.2015. <http://www.theguardian.com/world/2015/jul/26/syrian-president-public-speech-bashar-al-assad>

Ասադի կառավարման դեմ ալավիական համայնքում աճող դժգոհության նշաններից մեկը:

Ներկայացնելով Սիրիայում 2015 թ. առաջին կեսին տեղի ունեցած իրադարձությունների որոշ ասպեկտներն ու վարչա-կարգի ներսում իրականացված փոփոխությունների պատճառներն ու նպատակները՝ հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

1. օգոստոսի 26-ին լիբանանյան ալ-Մանար հեռուստաընկերությանը տված հարցազրույցի ժամանակ նախագահ Բաշար ալ-Ասադն ընդգծեց, որ Ռուսաստանի և Իրանի աջակցության հաստատական շարունակության շնորհիվ հնարավոր կլինի հաղթանակներ գրանցել և ապահովել երկրում հարաբերական կայունությունը³²: Սակայն, հաշվի առնելով քննարկված ժամանակաշրջանում երկրի տարածքի նկատմամբ սիրիական բանակի վերահսկողության գրեթե կայուն անկումը, կարելի է պնդել, որ բասական վարչակարգի դիրքերը երկրում աստիճանաբար թուլանում են: Պետք է ենթադրել, որ նախագահ Ասադի այս հարցազրույցի ընթացքում արված հիմնական շեշտադրումները հիմնավորվել են Իրանի միջուկային ծրագրի շուրջ P5+1 և Իրան բանակցային ֆորմատով Վիեննայում 2015 թ. հուլիսի 15-ին ձեռք բերված պայմանավորվածության՝ սիրիական վարչակարգի ռազմաքաղաքական պոտենցիալի բարձրացման վրա դրական ազդեցության հնարավորության ընկալմամբ:
2. Իրանական ազդեցությունն ու ներկայությունը Սիրիայում հակասական նշանակություն է ունենում սիրիական վարչակարգի գործունեության և հետաքրքրությունների վրա՝ նկատի առնելով ալավի գործիչների միջև հիմնականում այդ գործոնով պայմանավորված հակասությունները: Բասական վարչակարգի կողմից Սիրիայում իրանական տարրի ներգրավման խթանումը, վարչակարգի տեսանկյունից, ռազմական և տնտեսական առումով դրական ազդեցություն է ունենում Սիրիայի վրա՝ օգնելով իշխող էլիտային ռազմական հաջողություններ արձանագրել երկրի որոշ շրջաններում, թույլ չտալ զինված խմբավորումների կողմից Սիրիայի ամբողջական մասնատումը, նպաստել սիրիական բանակի մարտունակության ապահովմանը,

հնարավորինս կարգավորել երկրի տնտեսության ռազմավարական նշանակության ճյուղերի, հիմնականում նավթագազային արդյունաբերության և էներգետիկայի ոլորտի անխափան աշխատանքը: Սակայն մյուս կողմից իրանական տարրի ներկայությունը քաղաքական առումով բացասական ազդեցություն է ունենում ալավիական վարչակարգի ռազմական և քաղաքական գործիչների միջև լարված հարաբերությունների ձևավորման վրա՝ անուղղակիորեն սպառնալով վարչակարգի կայունությանը: Փաստորեն իրանական ազդեցության խթանումը ոչ միանշանակ ազդեցություն է ունենում վարչակարգի ներքին և արտաքին խնդիրների լուծման վրա, և դեռևս իշխող էլիտան Սիրիայում չի կարողանում կողմնորոշվել այդ ազդեցության հավասարակշռման հարցում, քանի որ ռազմական և տնտեսական մարտահրավերները հիմնականում Իրանի ներգրավմամբ են լուծվում, իսկ ներքաղաքական խնդիրների և վարչակարգի անդամների միջև հարաբերությունների կարգավորումը դեռևս մնում է ալավիական համայնքի շահերի և հավաքական անվտանգության գիտակցման շրջանակում:

3. Սիրիական ճգնաժամին խաղաղ լուծում տալու նպատակով միջնորդավորված բանակցությունները շարունակվում են: Միջուկային խնդրի շուրջ Իրան-Արևմուտք հարաբերությունների բարելավումը հնարավոր է հիմք հանդիսանա սիրիական ճգնաժամի հարցում Իրան-Արևմուտք հնարավոր համագործակցության համար: Սիրիական հիմնախնդրի լուծման հարցում միջազգային դիվանագիտության առջև ծառայած կարևորագույն մարտահրավերներից մեկը իրանական և տարածաշրջանի մյուս խաղացող պետությունների՝ Թուրքիայի, Սաուդյան Արաբիայի և Ծոցի արաբական միապետությունների շահերի հավասարակշռումն է Սիրիայում:
4. Հաշվի առնելով սիրիական բանակի ստորաբաժանումների նահանջի ռազմավարությունը՝ պետք է փաստել, որ վարչակարգի կենսական շահերը թելադրում են Դամասկոս-Հոմս-Համա-Իդլիբ-Լաթաքիա բնակավայրերի երկայնքով դեպի արևմուտք՝ Միջերկրական ծով ընկած ռազմավարական նշանակության տարածքները պահել ալավի-բասական իշխանության ամբողջական վերահսկողության տակ: Սիրիայի Արաբական Հանրապետության

³² <http://www.bbc.com/news/world-middle-east-34058893>

տության սահմանների վերաձևման գործընթացը շարունակվում է, որին անխուսափելիորեն իր մասնակցությունն է ունենում նաև ալավի-բաասական վարչակարգն իր ռազմական և դիվանագիտական հնարավորությունների անբավարար լինելու հետևանքով:

ԱՐԱՔՍ ՓՈՇԱՅԱՆ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆ ԱԴՐԲԵՋԱՆ-ԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1991թ. անկախություն ձեռք բերելուց հետո արաբական երկրների հետ միջպետական հարաբերությունների հաստատումը դարձավ Ադրբեջանի արտաքին քաղաքական ուղղություններից մեկը: Հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ արաբական առանձին պետություններ ոչ միայն ցանկանում էին Ադրբեջանի հետ բազմակողմ հարաբերություններ հաստատել, այլև, օգտվելով ԽՍՀՄ-ի փլուզումից հետո առկա գաղափարախոսական բացից, հաստատել իրենց թե՛ քաղաքական և թե՛ կրոնական ազդեցությունը: Պատահական չէ, որ Պարսից ծոցի արաբական տունիական միապետություններից սկսեցին Ադրբեջան ներթափանցել տունի-սալաֆիական՝ գաղափարներ: Մերձավոր Արևելքի, այդ թվում՝ արաբական երկրների հետ հաստատված հարաբերությունների արդյունքում Ադրբեջանում ներդրվեցին ֆինանսական ծավալուն միջոցներ՝ մզկիթների նորոգման և կառուցման, կրթական և մշակութային հաստատությունների ստեղծման, կրոնական կադրերի պատրաստման, ինչպես նաև ադրբեջանցի փախստականներին օգնելու համար: Հնարավորություն տրվեց ադրբեջանցի

¹ Իսլամում սալաֆիականներ ասելով նկատի են առնվում այն հավատացյալները, ովքեր հետևում են բարեպաշտ նախնիների (*աս-սալաֆ ա-սալիհուն*) օրինակելի վարքին: Նրանք ձգտում են վերադառնալ դեպի ակունքները, մասնավորապես իսլամի պատմության Մադինայի շրջանը (622-632թթ.), երբ ձևավորվեց Մուհամմադ մարգարեի կողմից ղեկավարվող առաջին մուսուլմանական համայնքը՝ ումման: Գաղափարախոսությունը մերժում է վտանգավոր և անընդունելի ամեն տեսակի նորարարություն (*բիդա*), ինչը համարվում է անհավատություն (քուֆր) և ենթակա է միանշանակ մերժման ու մահապատժի:

ուսանողներին կրոնական կրթություն ստանալու արտերկրի իսլամական հայտնի կենտրոններում:

Նշենք, որ սառը պատերազմի ավարտից հետո արաբական երկրներից, հատկապես Սաուդյան Արաբիայից, Քուվեյթից, Քաթարից, կառավարական և ոչ կառավարական խոշոր վակներով արտահանվող սալաֆիականությունն իր ներթափանցումներն ունեցավ նաև Ադրբեջանում: Ընդհանրապես կրոնական հոսանքներն Ադրբեջան էին ներթափանցում ամենատարբեր ճանապարհներով²: Ադրբեջանում գործում էին մեծ թվով մուսուլման, այդ թվում՝ արաբ կրոնական քարոզիչներ: Քարոզչության թիրախ էին դառնում հասարակության հիմնականում լուսանցքային և սոցիալապես խոցելի խավերը: Ադրբեջանում սուննի իսլամի արաբական մեկնաբանության՝ սալաֆիականության, տարածման համար լուրջ գործն դարձան հենց ռուս-չեչենական պատերազմները (1994-1996թթ., 1999թ.) և ընդհանրապես Հյուսիսային Կովկասում հակառուսական ռազմաքաղաքական շարժումները, որոնց գաղափարական հենքը հիմնականում սալաֆիականությունն էր:

Հատկանշական է, որ արտաքին ազդեցությունները՝ թե՛ արաբական-սալաֆիական և թե՛ թուրքական-սուննիական ու իրանական-շիայական, նպաստեցին Ադրբեջանում իսլամի վերածննդի խթանմանը, ինչպես նաև կրոնական ծայրահեղական գաղափարների տարածմանը՝ որոշակիորեն վերածնելով ազգային տեղական իսլամը: Ամեն պարագայում Ադրբեջանի հասարակական-քաղաքական և կրոնական դաշտում առավել զգալի էր թուրքական ազդեցությունը, քանի որ Ադրբեջանն անկախությունից հետո թե՛ քաղաքական և թե՛ քաղաքակրթական առումով կողմնորոշվեց դեպի Թուրքիան: Հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ 1989-2010թթ. Ադրբեջանում կառուցվել է 595 մզկիթ, որից 150-ը՝ օտար դրամաշնորհներով: Նրանցից 63-ը բաժին է ընկնում Քուվեյթին, 24-ը՝ Թուրքիային, մնացածները՝ Սաուդյան Արաբիային, Իրանին, Կատարին և այլն³:

² Political Islam in the Caucasus: Trends in Islam in the Wider Caucasus, Carnegie Endowment, http://carnegieendowment.org/files/022212_transcript_poli-islam-12.pdf

³ Юнусов А., Исламская палитра Азербайджана, Институт мира и демократии, Баку, 2012, с. 13.

Հարկ է նկատի ունենալ, որ անկախությունից հետո Ադրբեջանում սկսեցին տարբեր ձևաչափերով գործել նաև իսլամական վերազգային տարաբնույթ արմատական կազմակերպությունների մասնաճյուղեր, այդ թվում՝ արաբական ծագում ունեցող: Ասվածի ապացույցն է սաուդական հովանավորություն ունեցող «Իսլամական աշխարհի լիգայի» երկու մասնաճյուղերի՝ «Փրկության» («Ալ-Իսադա») և «Երկու սրբավայրերի» («Ալ-Հարամեյն»)՝ Ադրբեջանում ծավալած գործունեությունը⁴: Բացի այդ, հատկապես 1994թ. ռուս-չեչենական առաջին պատերազմից ի վեր Ադրբեջանի տարածքը սկսեց օգտագործվել նաև Չեչենիա և Դաղստան զենք, ֆինանսական, նյութական և այլ միջոցներ ու զինային տեղափոխելու համար, որը նպաստեց «մարտնչող իսլամի» ներթափանցմանն Ադրբեջան⁵:

Արտաքին կրոնական ազդեցությունների ալիքի արդյունքում Ադրբեջանում արմատավորվեցին իսլամի առանձին ուղղություններ ու մեկնաբանություններ, իսկ պետության ազգային անվտանգության համակարգը բախվեց մի շարք վտանգների հետ, որոնք շատ դեպքերում ուղղակի կապ ունեին արաբական երկրների հետ: Խնդիրն այն է, որ անկախության առաջին շրջանում մերձավորարևելյան, այդ թվում՝ արաբական երկրների հարցում Ադրբեջանը կարծես վարում էր «բաց դռներ»՝ քաղաքականություն, որն արդյունք էր անկախությանը հաջորդած շրջանին բնորոշ քաղաքական ու սոցիալական վայրկիւրումների, դարաբաղյան պատերազմի, փախստականների և այլևայլ խնդիրների⁶:

⁴ «Իսլամական աշխարհի լիգան» (արաբերեն՝ «Առ-Ռաբիհա ալ-ալամ ալ-իսլամի», կրճատ՝ Ռաբիհա) հիմնվել է 1962 թ. Մեքքայում Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆեյսալ իբն Աբդ ալ-Ազիզի (1964-1975 թթ.) կողմից՝ որպես ոչ կառավարական անդրազգային կազմակերպություն՝ հակազդելու արաբական աշխարհիկ ազգայնականության աճին: Կազմակերպության նպատակն իսլամի տարածումն է, իսլամական քարոզչության (դավա) իրականացումը, բարեգործությունը և այլն: Կազմված է ութ հիմնական մարմիններից: Առավելապես ֆինանսավորվում է Սաուդյան Արաբիայի կողմից: «Իսլամական աշխարհի լիգայի» 2001 թ. Նյու Յորքի ահաբեկչությունից հետո մեղադրվեց միջազգային ահաբեկչությանը սատարելու մեջ:

⁵ А. Юнусов, *ibid.*, աշխ.:

⁶ Heyat F., *New Veiling in Azerbaijan: Gender and Globalized Islam*, *European Journal of Women's Studies*, 2008, vol. 15, no. 4.

Սակայն արդեն Հեյդար Ալիևի (1993-2003թթ.) իշխանության գալուց հետո պետությունը սկսեց խստորեն ու կոշտ մերթոդներով վերահսկել ազգային անվտանգության ուղղված մարտահրավերները: Աստիճանաբար հաջողվեց կասեցնել արաբական և ոչ արաբական երկրներից կրոնական ճանապարհով արտաքին ներթափանցումների վտանգը: Արդեն 1996թ. Ադրբեջանի խորհրդարանը լրացումներ կատարեց դավանանքի ազատության մասին հոդվածում: Օտար երկրների քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց արգելվեց Ադրբեջանում կրոնական քարոզչություն ծավալել⁷:

Փաստորեն արաբական երկրների հետ Ադրբեջանի հարաբերություններում տարբեր միտումներ սկսեցին դրսևորվել: Մի կողմից Ալիևը փորձեց կասեցնել արաբական իսլամական աշխարհից եկող վտանգավոր կրոնական ներթափանցումները, մյուս կողմից առավել զգուշորեն շարունակել գործընկերությունն արաբական երկրների հետ: Դեռևս 1994թ. հուլիսին Հեյդար Ալիևը պաշտոնական այց կատարեց Սաուդյան Արաբիա՝ Էռ-Ռիադ, որի շրջանակներում նախկին կոմունիստական առաջնորդը և նրան ուղեկցող պատվիրակությունը, որի մեջ էր նաև Ադրբեջանի հոգևոր առաջնորդ շեյխ ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեն, Մեքքայում «փոքր» ուխտագնացություն (ումրա)⁸ կատարեցին: Հետագայում Մեքքա և Մադինա ուխտագնացության մեկնողների մեջ որոշակի տեղ սկսեցին զբաղեցնել նաև կառավարության անդամները⁹:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև այն հանգամանքը, որ Ալիևը փորձեց ստեղծել ադրբեջանական կամ ազգային իսլամի բրենդը՝ ձգտելով մաքրել այն պարսկական, թյուրքական, արաբական և այլևայլ ազդեցություններից: Ալիևը մի կողմից ձգտում էր Ադրբեջանում զարգացնել եվրոպական փորձը, մյուս կողմից՝ սերտացնել կապերն արաբական իսլամական աշխարհի հետ: Ադրբեջանը ներկայացվում էր մի երկիր, որը կարող էր կամրջի դեր խաղալ Արևմուտքի և Արևելքի

միջև: Իսլամը դիտարկվում էր Ադրբեջանի ազգային-հոգևոր հարստություն: Ալիևը ձգտում էր Ադրբեջանը դարձնել իսլամական աշխարհի առաջատար երկիր, նաև իսլամագիտության կենտրոն¹⁰:

Հատկանշական է, որ Ադրբեջանի իշխանություններն արաբական որոշ միապետությունների, այդ թվում՝ Սաուդյան Արաբիայի աջակցության շնորհիվ կարողացան շահեկանորեն օգտագործել իսլամական գործոնն արտաքին քաղաքականության մեջ: Այդ հարցում Ադրբեջանին էական օգնություն ցույց տվեց Թուրքիան: Աստիճանաբար Ադրբեջանը սկսեց ակտիվ դեր խաղալ իսլամական աշխարհի բարձրագույն քաղաքական մարմնում՝ Իսլամական համագործակցություն կազմակերպությունում (ԻՀԿ, 1969-ից մինչև 2011-ը՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպություն), որի նստավայր-գրասենյակը Ջիդդայում է (Սաուդյան Արաբիա), և որտեղ հանգուցային դիրք ունեն Ծոցի արաբական միապետությունները: Ադրբեջանը ԻՀԿ-ին անդամակցելուց հետո իրեն հայտարարեց իսլամական աշխարհի կամ Ումմայի¹¹ անքակտելի մաս:

Բացում ամեն կերպ ձգտում էր ակտիվացնել համագործակցությունն արաբական աշխարհի հետ ոչ միայն միջազգային իսլամական ընտանիքի մաս դառնալու համար: Ադրբեջանի իշխանությունները ձգտում էին օգտագործել իսլամական աշխարհի, այդ թվում արաբական ներուժը Ադրբեջանից անկախացած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության¹², ինչ-

⁷ Hady-zadeh, Hikmet, Freedom of Belief in Independent Azerbaijan: Majority and Minority Problems, <http://www.crvp.org/book/Series04/IVA-29/chapter-8.htm>:

⁸ Ումրան ենթադրում է ուխտագնացություն Մեքքա տարվա ցանկացած շրջանում, բացի հաջի օրերից:

⁹ Sbi'U Valiyev A., Azerbaijan: Islam in a Post-Soviet Republic, Middle East Review of International Affairs, 2005, 9 (4).

¹⁰ Аль-Фаллах, Адель Абдулла, Гейдар Алиев и национально-духовные ценности, Баку, 2007, с. 101.

¹¹ Իսլամի պատմության բոլոր փուլերում Ումմայի գաղափարն իդեալականացվել է, քանի որ այն ղեկավարում էր Ռուհամմադ մարգարեն Աստծուց ստացած պատվիրաններով, այսինքն՝ աստվածային ծագում ունեցող օրհնքներով: Մարգարեի մահվանից հետո կապն Աստծու հետ ընդհատվեց: Ումմայի ժամանակակից ընկալումն ամրագրված է Իսլամական համագործակցություն կազմակերպության՝ 1981թ. Մեքքայի զգաթաթուրդի մակփոփիչ հոշակագրում: Ըստ այդմ՝ Ումման իսլամական ազգի գաղափարն է՝ անկախ նրա անդամների լեզվական, ռասայական, սոցիալական, աշխարհագրական և այլևայլ պատկանելություններից: Ըստ այդմ՝ Ումմայի անդամներին միավորում է նույն հավատքը, նրանք շարժվում են նույն ուղղությամբ, ունեն մշակութային միասնական ժառանգություն, աշխարհում ունեն նույն առաքելությունը: Sbi'U The Mecca Declaration, The Islamic Summit Conference, Six Issue, Revised Edition, Kuwait, p. 47.

¹² Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն անկախ, բայց չճանաչված

պես նաև Հայաստանի դեմ միջազգային օրակարգ ձևավորելու հարցում: Ադրբեջանի իշխանությունները 1992 թ.-ից ԻՀԿ հարթակն առավելագույն օգտագործեցին երկրին հուզող խնդիրները բարձրացնելու, առաջին հերթին Հայաստանի դեմ քարոզչություն ծավալելու նպատակով: Հատկանշական է, որ նույն նպատակը դրվեց նաև արաբական երկրների հետ համագործակցության հիմքում:

Արաբական աշխարհի հետ Ադրբեջանի շփումները նոր փուլ մտան 2014 թ. մայիսին, երբ Արաբական պետությունների լիգան (ԱՊԼ) Ադրբեջանի և Կենտրոնական Ասիայի պետությունների հետ ստորագրեց փոխհամաձայնության հուշագիր: Փաստաթուղթը ստորագրվեց «Համագործակցության արաբական երկրների, Ադրբեջանի և Կենտրոնական Ասիայի երկրների միջև և տնտեսությունը» խորագրով Էռ-Ռիադում տեղի ունեցած հանդիպման ժամանակ¹³: Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Է. Մամադյարովի կարծիքով Արաբական պետությունների լիգայի հետ Ադրբեջանի ստորագրած համագործակցության հուշագիրը որակական առումով նոր մակարդակ է ստեղծելու Ադրբեջանի և արաբական աշխարհի հետ քաղաքական, տնտեսական, մարդասիրական ոլորտներում համագործակցելու ճանապարհին՝ «մեծապես նպաստելով փոխադարձ համաձայնությանը, հարգանքին և աջակցությանը»¹⁴:

Շտաբըրրություն է ներկայացնում այն փաստը, որ Ադրբեջանը հետամուտ էր ծառայեցնել արաբական հարթակը ոչ միայն բազմակողմ համագործակցության, այլև՝ այլատյացության վերաճած հակահայկական քարոզչության համար: Պատահական չէ, որ Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Է. Մամադյարովը վերը նշված ԱՊԼ Էռ-Ռիադի հանդիպմանը դարաբաղյան խնդրի վերաբերյալ արեց այն նույն շեշտադրումները, ինչը սովորաբար անում է Իսլամական համաժողով

պետություն է: Հռչակել է իր անկախությունը 1991թ. սեպտեմբերի 2-ին: 1991թ. դեկտեմբերի 10-ին Ադրբեջանի կազմում գտնվող Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում (ԼՂՄԻ) անցկացվեց համաժողովրդական հանրաքվե: Շրջանի հայ ազգաբնակչությունը միասնական ձևով (99,8 տոկոս) կողմ քվեարկեց անկախությանը: Քվեարկության նման բարձր ցուցանիշը պայմանավորված էր այն հանգամանքով, որ ԼՂՄԻ-ի ադրբեջանական համայնքը բոլորսեղ հանրաքվե:

¹³ Ties with Arab League member states important for Azerbaijan: FM, <http://www.azernews.az/azerbaijan/67058.html>.

¹⁴ Նույն տեղում:

կազմակերպությունում¹⁵: Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնատարն արաբական հանդիպմանը բարձր գնահատեց ոչ թե արաբական աշխարհի, այլ իսլամական աշխարհի օգնությունն Ադրբեջանին Հայաստանին դատապարտելու հարցում. «Մենք հայտնում ենք մեր անկեղծ երախտագիտությունն իսլամական Ումմային Նրա տևական դիրքորոշման համար»: «Մենք հավատում ենք, որ Հայաստան-Ադրբեջան հակամարտության հետ կապված այս դիրքորոշումը կորոշեցրվի նաև Արաբական լիգայի մեր եղբայր պետությունների կողմից»¹⁶:

Շարկ է փաստել, որ արաբական հանդիպումների ընթացքում Ադրբեջանի պաշտոնատարներն էապես կարևորում են արաբական երկրների հետ համագործակցությունը՝ համարելով, որ արաբական աշխարհի հետ Ադրբեջանն ունի պատմական, կրոնական և մշակութային կապեր¹⁷:

Շարկ է նկատի ունենալ, որ չնայած Լեռնային Ղարաբաղի հարցում Ադրբեջանն անկեղծ է արաբական իսլամական աշխարհի անվերապահ աջակցությունը, սակայն այս խնդիրն աշխարհաքաղաքական հիշյալ հարթության մեջ չունի այնպիսի նշանակալից հնչեղություն, ինչպես շատ այլ խնդիրներ: Անվաճի ապացույցն է նաև այն փաստը, որ արաբ առաջնորդները միջազգային հարթակներում շատ հազվադեպ են անդրադառնում Լեռնային Ղարաբաղի խնդրին: Այս տեսակետից հետաքրքիր է 2012 թ. Արաբական պետությունների

¹⁵ Ադրբեջանական հեռուստակառույցումը դարաբաղյան հարցում անփոփոխ է: Ըստ այդմ «Հայաստանը «բռնազավթե» է Ադրբեջանի տարածքի քսան տոկոսը, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղը՝ իրականացնելով էթնիկ զտումներ»: «Գրավյալ տարածքներում» և Հայաստանում ադրբեջանական պատմական և մշակութային հուշարձաններն ավերվել են, ինչը խիստ վիճարկելի է: Նշված հուշարձանների հիմնական մասն, ի դեպ, պարսկական ծագում ունի: Հատկանշական է, որ ադրբեջանցիներն իրենք են ականատես եղել Շուշիում գտնվող մուսուլմանական հուշարձանների բարվոք վիճակին, երբ 2009թ. հուլիսին հայ-ադրբեջանական «ժողովրդական դիվանագիտության» շրջանակներում ադրբեջանցի քաղաքական և մշակութային մի շարք գործիչներ իրենց հայ գործընկերների հետ (պատվիրակությունների կազմում էին Ռուսաստանում Հայաստանի և Ադրբեջանի դեսպաններ Արմեն Սմբատյանն ու Փոլադ Բյուլբյուզյովին) այցելեցին Լեռնային Ղարաբաղ:

¹⁶ Ties with Arab League member states important for Azerbaijan: FM, <http://www.azernews.az/azerbaijan/67058.html>

¹⁷ Նույն տեղում:

լիզայի եվրոպական վարչության տնօրեն Օմնիյա Տահայի դիտարկումը: Ադրբեջանցի լրագրողի այն հարցին, թե իսլամական աշխարհը՝ Ումման, դարաբաղյան խնդրի շուրջ ՄԱԿ-ում միասնական դիրքորոշում չունի, նա նշել է բառացիորեն հետևյալը. «Ես հասկանում եմ ձեր հիասթափությունը, որովհետև մի շարք արաբական երկրներ ձեզ չեն աջակցում: Կարծում եմ, որ (դարաբաղյան հարցը- Ա.Փ.) Ումմայի հարցը չէ, այլ պետությունների միջև հետաքրքրությունների հարց է...»¹⁸: Նշենք, որ ԱՊԼ-ն կոչ է անում դարաբաղյան հակամարտությունը լուծել խաղաղ ճանապարհով, ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում:

Այսպիսով, հետանկախության շրջանում արաբական երկրներից եկող կրոնական ներթափանցումներն ու ազգային անվտանգությանն ուղղված մարտահրավերները կանխելուց հետո Ադրբեջանը ձեռնամուխ եղավ արաբական երկրների հետ հարաբերությունների սերտացմանը: Արաբական մի շարք պետությունների հետ Ադրբեջանին հաջողվեց կնքել քաղաքական, առևտրական և տնտեսական պայմանագրեր: Մյուս կողմից 2011թ. սկսված «արաբական գարնան» դեպքերը նոր խնդիրներ ստեղծեցին Ադրբեջանի համար, որն ուներ մարդու իրավունքների և խոսքի ազատության խնդիրներ: Սկսեցին ավելի ու ավելի հաճախ խոսել այն մասին, որ Ադրբեջանում կարող է նկատվել իսլամական գործոնի ակտիվացում, կամ էլ «արաբական գարունը» կարող է տեղափոխվել Ադրբեջան¹⁹: Հընթացս միջազգային ցիհադական-ահաբեկչական շարժումներին անդամագրվեցին բազմաթիվ ադրբեջանցի մոջահիդներ, որոնք սկսեցին մասնակցել Սիրիայում տեղի ունեցող ռազմական գործողություններին: 2013 թ.-ից ադրբեջանական և միջազգային լրատվամիջոցները սկսեցին ավելի հաճախ տեղեկություններ հրապարակել Սիրիայում կովոլդ ադրբեջանցի զինյալների մասին²⁰: Ի դեպ, ադրբեջանական հասարակական կարծիքը խիստ բացասաբար արձագանքեց նշված փաստին: Սիրիայում կովոլդ ադրբեջանցիների թեմային անդրադարձավ նաև հոգևոր դասը: Շեյխ ուլ-իսլամ Փաշազադեն

հայտարարեց, որ Ադրբեջանում սխալ պատկերացումներ կան հավատքի պատերազմի՝ ցիհադի և նահատակության՝ շահիդականության մասին: 2014 թ. հունվարի վերջին Կովկասի մուսուլմանների վարչության կադիների խորհուրդը հրապարակեց ֆեթվա, որտեղ ամրագրվեցին ոչ միայն շահիդ հասկացության սահմանները, այլև արաբական երկրներում կովոլդ ադրբեջանցիների ոչ շահիդ լինելու հանգամանքը²¹: Ադրբեջանում փաստորեն լուրջ մտավախություն կար, որ արաբական երկրներում առկա ճգնաժամը և դրանցում Ադրբեջանի քաղաքացիների ներգրավվածությունը կարող են նպաստել այդ երկրում կրոնական արմատական տրամադրությունների ընդլայնմանը²²:

Այսպիսով, իսլամական գործոնը կարևոր տեղ զբաղեցրեց Ադրբեջան-արաբական աշխարհի հարաբերություններում: Մի կողմից Ադրբեջանը սկսեց համագործակցել արաբական մի շարք երկրների հետ, մյուս կողմից՝ զգուշանալ արաբական երկրներից ներթափանցող կրոնական և կրոնաքաղաքական ազդեցություններից: Մեկ այլ դեպքում Ադրբեջանն օգտագործեց արաբական հարթակը՝ դարաբաղյան հարցում աջակցություն ստանալու համար՝ կիրառելով իսլամական համաժողով կազմակերպության փորձը:

¹⁸ News.az interviews Omnia M. Taha, Director of the Arab League's European Department, <http://www.news.az>, (19.03. 2012).

¹⁹ Փաշայան Ա., «Արաբական սցենարի» հավանականությունն Ադրբեջանում, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, <http://www.noravank.am>, (05.04.2011).

²⁰ RovshenogluK. & BalciB., Syria, AzerbaijanandtheSunni-ShiaDividem, TheGlobalist (06. 09. 2013).

²¹ Фетва УМК по уезжающим воевать в Сирию, <http://www.radioazadlyg.org>, (28. 01. 2014).

²² Ի դեպ, Սիրիայում կովոլդ ադրբեջանցիների հիմնահարցին արձագանքելով՝ Ադրբեջանի խորհրդարանը 2014 թ. մարտին քրեական օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարեց, համաձայն որի՝ խտացան պատիժները վարձկանության և ահաբեկչության համար: Վարձկանության հողվածով անցնողներն Ադրբեջանի նոր օրենքով կդատապարտվեն 8-12, ահաբեկչության հողվածով անցնողները՝ 10-15 տարվա ազատազրկմամբ:

ՍԱՐԳԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐԴԱՆԱԸ ԱԶՁԱՄԻ «ՋԻՀԱԴԻ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ

2010 թ. վերջից մուսուլմանական երկրներում ծայր առած և ներկայումս շարունակվող գործընթացներում նկատելի են իսլամական արմատական և ծայրահեղ արմատական տրամադրությունների ավելացում: Այդ համատեքստում իսլամականների համար ջիհադական պայքար մղելու և ընդհանրապես ջիհադի հայեցակարգային կիրարկումների լայն հնարավորություններ ստեղծվեցին, որոնք առարկայական դրսևորումներ են գտնում մուսուլմանական երկրներում ընթացող արդի հակամարտություններում:

Ջիհադի հայեցակարգային նոր դրսևորումների հիմքը դրվեց XX դարի վերջին Արդալլահ Ազգամի կողմից: Վերջինիս գաղափարների անմիջական ազդեցությունն են կրում աշխարհի տարբեր երկրներում բնակվող մուսուլմանների ակտիվությունը ներկայիս ջիհադական պայքարում, Մերձավորարևելյան, Հյուսիսաֆրիկյան և այլ տարածաշրջաններում ընթացող հակամարտություններում իսլամականների թվաքանակի ավելացումն ու 2014 թ. հունիսի 29-ից Սիրիայի և Իրաքի որոշ հատվածներում «Իսլամական պետության» հիմնումը:

Ջիհադի հայեցակարգի նոր դրսևորումները. Արդալլահ Ազգամի գործունեությունը

1979 թ. դեկտեմբերին խորհրդային բանակի ստորաբաժանումները մտան Աֆղանստան՝ աջակցելու խորհրդային կողմնորոշում ունեցող ուժերին: Սկսվեց աֆղանական պատերազմը (1979-1989 թթ.), որը դարձավ իսլամական ծայրահեղ արմատականության նոր միտումների դրսևորման և ծայրահեղ

արմատական գաղափարներով առաջնորդվող իսլամական նոր առաջնորդների ի հայտ գալու միջավայր:

1980-ական թթ. աֆղանական պատերազմում աչքի ընկավ պաղեստինցի Արդալլահ Յուսուֆ Ազգամը, ով դրեց դասական ջիհադի ժամանակակից հայեցակարգի հիմքերն Աֆղանստանում¹: Եւ ջիհադի գաղափարախոսությունը համալրեց նոր տարրերով. այն բռնի ուժով իրականացվող ջիհադն էր առաջին հերթին մուսուլմանական երկիրը բռնազավթած «անհավատների» դեմ, որտեղ բացառվում էր վերջիններիս հետ բանակցությունների ու երկխոսության հնարավորությունը: Ըստ Արդալլահ Ազգամի՝ խորհրդային զորքերի ներխուժումն Աֆղանստան աստվածային կանխորոշմամբ էր իրականացվել, և դավանաբանական դիմակայության իր կոչերով շտապեց Փեշավար, որպեսզի տեղի հավաքվող մոջահիդների շրջանում տարածի իր գաղափարները²:

Ազգամի կողմից առաջ քաշված տեսակետների համաձայն՝ խաղաղ պայմաններում անհրաժեշտ էր, որպեսզի մուսուլմանները կոչ հղեին ոչ մուսուլմանական երկրներին ընդունել իսլամ՝ դրա համար ստեղծելով նպաստավոր պայմաններ: Յուրաքանչյուր իսլամական պետության վրա պարտավորություն էր դրված մոջահիդների խումբ ուղարկել իր հարևան ոչ իսլամադավան պետություններ, որոնք պետք է ներկայացնեին իսլամն այդ պետությունների ղեկավարներին և ժողովուրդներին: Եթե վերջիններիս կողմից մերժվեր իսլամ ընդունելը, ապա նրանց պետք էր առաջարկել ջիզա (գլխահարկ) վճարել, որով կստանային իսլամական պետության հովանավորությունը: Եթե նրանք սա էլ մերժեին, ապա նրանց նկատմամբ պետք էր իրականացնել ջիհադ, պնդում էր Ազգամը՝ նշելով, որ մուսուլմանական ումման գտնվում էր հուսալքված վիճակում, և

¹ Ազգամը ծնվել է 1941 թ. պաղեստինյան Արաբի ալ-Հարթիյահ գյուղում և երիտասարդ տարիքից մասնակցել է Իսրայելի դեմ տարվող պայքարին: 1960-ական թթ. Ազգամը տեղափոխվեց Հորդանան, որից հետո փոխադրվեց Սաուդյան Արաբիա, որտեղ Ջիդդայի Արդ Ալ-Ազիզի անվան համալսարանում ուսանելու տարիներին տոգորվեց ջիհադի գաղափարներով:

² St' u Kohlman E., Al-Qaida's Jihad in Europe: The Afghan-Bosnian Network, Oxford, New York, 2004, p.4-6.

այս տիպի ջիհադ իրականացնելուց առաջ այն պետք է բարոյապես պատրաստ լիներ դրան³:

Ըստ Ազզամի ջիհադն ընդդեմ անհավատների լինում է երկու տեսակի.

1. հարձակողական ջիհադ, որի ժամանակ անհավատների ռազմուժը չէր պատրաստվում հարձակվել մուսուլմանական հողերի վրա: Այդ ժամանակ պայքարն անհավատների դեմ դառնում էր «Կոլեկտիվ/համբային պարտականություն»՝ այդ պայքարին մուսուլմանների մասնակցության սահմանափակ պահանջներով և Ալլահի թշնամիներին ահաբեկելու նպատակով վերջիններիս դեմ տարին առնվազն մեկ անգամ մուսուլմանական բանակ ուղարկելով:
2. Պաշտպանական ջիհադ, որը վերածվում էր «Անհատական պարտականության» յուրաքանչյուր մուսուլմանի համար⁴:

Ազզամը հայտարարում էր, որ ոչ մուսուլմանական երկրի ներխուժումը մուսուլմանական երկիր պահանջում էր անհապաղ ռազմական միջամտություն, և արական սեռի բոլոր մուսուլմանները, ովքեր ունակ էին մարտեր վարելու, պետք է պաշտպանեին այդ մուսուլմանական երկիրը, աշխարհի որ մասում էլ որ լինեին⁵:

Ջիհադի հայեցակարգին առնչվող Ազզամի նորարարություններից էր նաև այն, որ ոչ միայն մուսուլմանական երկրների բնակչությունը, այլև աշխարհի բոլոր մուսուլմանները պետք է մասնակցեին մուսուլմանական երկրի վրա հարձակված երկրի դեմ պայքարին:

Այդ ժամանակ արդեն կար դրա նախադեպը՝ Պաղեստինը, պաղեստինցիներին տրվող աջակցությունն ընդդեմ Իսրայելի և Նրա արևմտյան դաշնակիցների: Պաղեստինի համար միջոցների հավաքագրման և դրա հետ կապված տեղեկատվության տարածման մարտավարության փորձը հետագայում օգտագործվեց այլ երկրներում՝ ջիհադի պայքարին աջակցություն ցուցաբերելու համար:

Ազզամը կարծում էր, որ երբ մուսուլմանական երկրները բռնազավթված են գաղութարարների կողմից, ապա ջիհադը վերածվում էր «Անհատական պարտականության» բոլոր մուսուլմանների համար: Սակայն նա հավելում էր, որ թեթ այդ տարածքներում բնակվող մուսուլմանները քիչ են թվաքանակով կամ մարտունակ չեն, ապա այդ պարտականությունն ընկնում էր հարևան տարածքներում ապրող մուսուլմանների վրա, և այդպես շարունակ, մինչև որ այն («Անհատական պարտականությունը») տարածվի ամբողջ աշխարհով՝ ավելացնելով, որ «Անհատական պարտականության» համար մուսուլմանը կարիք չունի թույլտվության⁶:

Մշտական ջիհադը, ըստ Ազզամի, իսլամի բաղկացուցիչներից մեկն էր և միայն իսլամի ձևավորման ժամանակաշրջանին բնորոշ երևույթ չէր: Այն պետք է իրականացվեր նաև այսօր, սկսվելու գաղափարների ոլորտում՝ ներթափանցելով ճշմարտության, իրականության և փորձի բնագավառ: Ազզամը պնդում էր, որ երբ թշնամին մոտենում է «Իսլամի տանը» (Դար ալ-Իսլամ)⁷, ապա անհրաժեշտ է, որ մուսուլմանները դուրս գան և պայքարեն թշնամու դեմ, մինչև իսլամի հողերի անվտանգության ապահովումն ու թշնամուն հաղթելը: Նրա կող-

³ Azzam A., Signs of ar-Rahman in the Jihad of Afghan, Maktabah Booksellers and Publishers, Birmingham-England, pp. 59-60.

⁴ Իսլամական ավանդույթը տարբերակում է պարտականությունների երկու տեսակ՝ «Անհատական պարտականություն» (Al-Fard al-ʿin-الفرض العین), որը ներառում է արդրքը, ծոնը և այլն և «Կոլեկտիվ/համբային պարտականություն» (Al-Fard al-Kifāya-الفرض الكفایة), որի բավարար քանակության մուսուլմանների իրականացման դեպքում մյուս անհատներն ազատվում են այն իրականացնելուց (օրինակ՝ հանգուցայի համար արդրքը, սրբազան պատերազմը և այլն) (տե՛ս The Encyclopaedia of Islam» Volume II. Leiden, E. J. Brill, The Netherlands, 1991, p. 790):

⁵ Azzam A., Defense of the muslim lands: The first obligation after imam (տե՛ս www.kalamullah.com/Books/defence.pdf (մուսը՝ հոկտեմբերի 12, 2013 թ.).

⁶ Տե՛ս 'zām A., Bašāir al-Naṣr, Bayrūt, 1992, էջ 78:

⁷ «Դար ալ-Իսլամ»-ը (Dār al-Islām- دارالإسلام), ըստ մուսուլմանական ավանդույթի, դիտարկվում է որպես «Իսլամի տուն», որը ներառում է այն բոլոր երկրները, որտեղ գործում է իսլամական օրենքը՝ ենթադրելով հավատքի, օրենքի և ումմայի երաշխավորված անդամների միասնություն: Մուսուլմանական ավանդույթի դասական մեկնաբանությամբ «Դար ալ-Իսլամ»-ից դուրս ամեն ինչ «Դար ալ-Հարբ» է: Այնուամենայնիվ հայտնի են օրինակներ, երբ հարևան երկրների ղեկավարների հետ հաշտության կղեցմամբ թույլատրվել է այդ երկրներին տուրք վճարելու դիմաց պահպանել ներքին ինքնավարությունը, որը դիտվել է մուսուլմանական պետության գերիշխանության պաշտոնական ճանաչում (տե՛ս The Encyclopedia of Islam, New Edition, Under the patronage of the international union of academies, Volume II, Leiden, E. J. Brill, 1991, p. 127):

մից կարևորվում էին նաև իսլամական աշխարհից դուրս մուսուլմանների իրականացրած արշավանքներն անհավատների դեմ: Այս առումով Ազգամը հիշեցնում էր, որ նման բազմաթիվ արշավանքներ են կազմակերպվել Մուհամմադ մարգարեի կողմից: Ազգամը կարևորում էր նաև իսլամի համար ամուր հիմքի ստեղծումը, որը պետք է կառուցվեր մուսուլմանական համայնքի կազմավորման ճանապարհով: Վերջինը պետք է իրականանար այնտեղ, որտեղ գոյություն ուներ ջիհադական պայքարի վրա հիմնված իսլամական շարժում⁸:

Լինելով «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության անդամ Ազգամը դարձավ կապող ռղակ այդ կազմակերպության և իսլամական արմատական այլ շրջանակների միջև: Ազգամը դարձավ ժամանակակից ջիհադի գլխավոր քարոզողը՝ հանրայնացնելով զինված պայքարի հայեցակարգը:

Մուսուլմանները միանշանակ չընդունեցին Ազգամի կողմից քարոզվող գաղափարները, քանի որ աստվածաբաններից շատերը կարծում էին, որ Աֆղանստանում իրականացվող ջիհադը աֆղանցիների «Անհատական պարտականությունն» է: Սակայն աֆղանական ջիհադին մասնակցելու զանգվածային բնույթը և մուջահիդների ռազմական հաջողություններն Ազգամի գաղափարների տարածման հիմքը դարձան:

Արդալլահ Ազգամի կազմակերպական ունակությունների և խարիզմատիկ կերպարի մասին լեզենդներ էին պտտվում մուջահիդների շրջանում: Ազգամը հավատարիմ էր իր սկզբունքներին՝ համարելով, որ կա՛մ Աֆղանստանում վարվող ջիհադական պայքարը կստացվեր, կա՛մ նա կդառնար շահիդ⁹: Մերձավոր Արևելքի երկրներից Աֆղանստան եկած ջիհադականների մարտական պատրաստվածությունը կազմակերպելու և նրանց գործունեությունը ղեկավարելու համար Արդալլահ Ազգամը 1984 թ. ստեղծեց «Մուջահիդների սպասարկման/ծառայությունների քյուր» (Maktab al-Jadamat al-Muğāhidin-مكتب خدمات المجاهدين, որը հետագայում դարձավ «ալ-Կաիդա»-ի կազմավորման հիմքը):

Ըստ Արդալլահ Ազգամի. «Ջիհադը մուսուլմանի պարտականությունն է, որը չի վերանա Աֆղանստանում հաղթանակի հետ, ջիհադը կմնա յուրաքանչյուր մուսուլմանի «Անհատական պարտականությունը», մինչև չվերադարձվեն բոլոր նախկին

մուսուլմանական հողերը, որպեսզի իսլամը նորից գերիշխի այնտեղ»¹⁰:

Քարոզների հետևանքով մեծ թվով մուջահիդներ տեղափոխվեցին Փեշավար, որպեսզի կարողանան անմիջապես մասնակից լինել դիմադրությանը և կռիվել իսլամիստների շրջանում: 1980-ական թթ. կեսին սաուդական հարուստ ընտանիքների երիտասարդների համար կազմակերպվում էին այցելություններ Աֆղանստան, որտեղ նրանք մի քանի շաբաթ անցկացնում էին մարտական ճամբարներում: Մի քանի շաբաթով Աֆղանստան էին ուղարկվում նաև իսլամական ակտիվիստներ մուսուլմանական և եվրոպական երկրներից, որոնք, վերադառնալով տուն ջիհադ վարելու փորձը յուրացրած, պատրաստ էին պայքարելու «անհավատ» իշխանությունների դեմ: Նրանցից ոմանք, իրենց երկրներում իշխանությունների կողմից հետապնդումների ենթարկվելով, սկսեցին հավաքվել Պակիստանի հյուսիսարևմտյան սահմանային Փեշավարի շրջանում¹¹, որը դարձավ այն վայրը, որտեղ սկսեցին կենտրոնանալ ամերիկյան զինամթերքն ու արաբական փողերը, հավաքվեցին մուսուլմաններ ամբողջ աշխարհից, ստեղծվեցին ռազմական ճամբարներ՝ ջիհադ իրականացնելու համար: Մուջահիդները միշտ կապի մեջ էին պակիստանյան և ամերիկյան հատուկ ծառայությունների, ինչպես նաև պակիստանյան իսլամական խմբավորումների, այդ թվում՝ «Ալ-Ջամաա ալ-Իսլամիա» խմբավորման և դեռբանդական դպրոցների ցանցի հետ: Սակայն այս իսլամական խմբավորումների միասնական շարժումն ու պայքարն ունեցան զարգացման իրենց տրամաբանությունը, որն արդեն 1990-ական թթ. սկսեց գործել ընդդեմ իր հեղինակների¹²:

Մինչ Արդալլահ Ազգամը իսլամական արմատական հեղինակների կողմից առաջ քաշվող ջիհադական կարգախոսները զուրկ էին հավատացյալների կազմակերպված զանգվածից, որը դրանք կյանքի կկոչեին: Աֆղանական պատերազմի առաջին 5 տարիներին իսլամական առաջնորդները հիմնականում ֆինանսական և ռազմական օգնության բաշխման և կազմակերպչական գործառոյթներով էին առանձնանում, այլ ոչ թե աչքի ընկնում որպես ռազմական առաջնորդներ: Իրավիճակը

⁸ St'ā 'zām A., նշվ. աշխ., էջ 78:

⁹ St'ā Kohlman E., նշվ. աշխ., էջ 6:

¹⁰ 'zām A., Bašāir al-Našr, Bayrūt, 1992, էջ 78-79.

¹¹ St'ā Kenesh Ж., նշվ. աշխ., էջ 135-148:

¹² Նույն տեղում, էջ 136:

փոխվեց 1985 թ., երբ Արդալլահ Ազզամը համաձայնության եկավ «Աֆղան մուջահիդների իսլամական միության» ղեկավար Արդ Ալ-Ռաբ Ռասուլ Ալ-Մայյաֆի հետ, որը թույլ տվեց Աֆղանստանի Կոմար նահանգում տեղակայված Սայման Ալ-Ֆարիսի ռազմական ճամբարը տրամադրել արաբ մուջահիդների ռազմական պատրաստության համար: Ազզամի ծրագիրը ռազմական ճամբարի հետ կապված ոչ միայն տարբեր վայրերից հավաքվող մուսուլման կամավորներին մարտավարական հնարքներին ծանոթացնելն էր, այլ նաև ջիհադականների շրջանում դավանաբանական միասնության քարոզն էր՝ արմատախիլ անելով նրանց մեջ էթնո-դավանական տարածայնությունները:

Ազզամի կողմից քարոզվող ջիհադը գործնական կիրառում էր ստանում, որտեղ շեշտվում էր ինչպես Աֆղանստանում, այնպես էլ Պաղեստինում բռնազավթիչների և անհավատների (ըստ Ազզամի) դեմ պայքարելու յուրաքանչյուր մուսուլմանի պարտականության կարևորությունը:

Որոշ արաբ երիտասարդների համար Աֆղանստանը դարձավ այն ռազմադաշտը, որտեղ անհրաժեշտ էր ջիհադ իրականացնել: Այդ երիտասարդ ջիհադականների ռազմական գործողությունների սահմանափակ փորձն ու վերջիններիս կողք կողքի պայքարը համախմբում էին նրանց՝ հավատացած լինելով, որ իրենք Աֆղանստանում նահատակներ կդառնան հանուն Աստծո մղվող պայքարում, և մոտ է նրանց դրախտում հայտնվելու ժամանակը¹³: 1980-ական թթ. վերջերին, երբ մուսուլմանները էր աֆղանական պատերազմի ավարտը, Արդալլահ Ազզամը դիմեց իր հետևորդներին. «Եղբայրներ, Աֆղանստանից հետո աշխարհում մեզ համար այլևս ոչինչ անհնարին չկա: Չկան գերտերություններ ու փոքր տերություններ: Կարևորը այն կամքի ուժն է, որը բխում է մեր հավատքից»¹⁴: Ըստ Ազզամի՝ աֆղանական պատերազմն իսկական փորձություն էր առաջնագծում կռվող մուսուլմանների համար, որոնց նպատակն էր ամեն գնով Աֆղանստանում իսլամական կրոնի հաստատելը: Միայն շարունակական պայքարը կապահովեր մուսուլմանների միավորիչ ուժգնությունն ընդդեմ հավանական

հակառակորդի: Մուսուլմանները պետք է շարունակեին ջիհադը մինչև վերջ՝ հասնելով իսլամական պետության կերտման¹⁵:

Այսպիսով, XX դարի 80-ական թթ. իսլամական արմատական գաղափարախոսության մեջ Արդալլահ Ազզամի կողմից առաջ քաշված ջիհադի հայեցակարգային նոր հիմնադրույթների ու գաղափարների ընդհանրական պատկերը հետևյալն է.

1. ոչ մուսուլմանական երկրի կողմից մուսուլմանական երկիր ներխուժումն անհապաղ ռազմական միջամտություն էր պահանջում: Բոլոր արական սեռի մուսուլմանները, ովքեր ունակ էին մասնակցելու ռազմական գործողությունների, պետք է պաշտպանեին բռնազավթված մուսուլմանական երկիրը, աշխարհի որ մասում էլ որ լինեին:
2. Մուսուլմանական երկրում բռնազավթողների դեմ պայքարը մուսուլմանի «Անհատական պարտականությունն» էր, որի համար վերջինս կարիք չուներ թույլտվության:
3. Ջիհադը պետք է մշտական բնույթ կրեր, այսինքն՝ լիներ շարունակական, և այն պետք է ընթանար նաև գաղափարական տիրույթում:
4. Ազզամը կարևորում էր նաև իսլամական աշխարհից դուրս մուսուլմանների կողմից անհավատների դեմ իրականացվող պայքարը:
5. Պայքարի նպատակը Իսլամական պետության հիմնումն էլ¹⁶:

Արդալլահ Ազզամի ջիհադի հայեցակարգային հիմնադրույթների ազդեցությունն իսլամական ծայրահեղ արմատականության արդի միտումների վրա

1980-90-ական թթ. ջիհադական շարժման հաջողության գլխավոր գործոնը Արդալլահ Ազզամի բավական հստակ ձևակերպված և իսլամական արմատականների շրջանում լայն տարածում ստացած գաղափարախոսությունը եղավ, որը հատկապես դրսևորվեց 2001 թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ի դեմ իրականացված և ընդհանրապես 2000-ական թթ. կեսերին իսլամական ծայրահեղականների կողմից իրականացված ահաբեկ-

¹³ Sb'u Kohlman E., նշվ. աշխ., էջ 7-8:

¹⁴ Emerson S., Jihad in America. SAE Productions (for PBS): Washington DC. Originally aired 21 November 1994.

¹⁵ 'zam A., Al-Qa' da. Al-Ūihād, 1988, 41, 'abril, էջ 46.

¹⁶ Արդալլահ Ազզամն իր երկու որդիների հետ սպանվեց պայթյունի հետևանքով Փեշավարում 1989թ. նոյեմբերի 24-ին:

չական գործողություններում, ինչպես նաև 2010 թ. վերջին մուսուլմանական երկրներում, մասնավորապես Մերձավոր Արևելքում ծայր առած ցնցումների, հեղափոխությունների և փոփոխությունների ժամանակ:

Ինչպես Աֆղանստանը 1980-ական թթ., այնպես էլ Մերձավորարևելյան տարածաշրջանը (մասնավորապես Իրաքը) 2000-ական թթ. կեսերից դարձան իսլամական ծայրահեղ արմատականների կողմից վարվող զինադական պայքարի առարկայական դրսևորումների նոր հարթակ:

Իրաքում զինադական պայքարը խոր արմատներ գցեց 2003 թ. հետո, երբ Սադամ Հուսեյնի վարչակարգը տապալվեց, իշխանությունն անցավ շիաներին, և Իրաքում հայտնվեցին արևմտյան կոալիցիոն ուժեր: Ազգամի կողմից առաջ քաշված գաղափարներն իրենց մեծ ազդեցությունն ունեցան հետաադամյան Իրաքում: Այդ գաղափարների անմիջական ազդեցության տակ դեպի Իրաք շարժվեցին մեծաթիվ իսլամականներ, որոնք Իրաքում անմիջապես անցան զինադական պայքարի արևմտյան և շիական ուժերի դեմ:

Ճիշտ է, Իրաքում իշխանության եկած շիաները կարողացան նաև արևմտյան զինուժի աջակցության և Իրաքի տուննի ցեղերի համախմբման շնորհիվ ճնշել գլուխ բարձրացնող իսլամական ծայրահեղ արմատական միտումները, սակայն այն արմատախիլ անել չհաջողվեց:

2010 թ. վերջից Թունիսում սկսված հասարակական-քաղաքական ցնցումների ալիքը հասավ նաև մուսուլմանական այլ երկրներ, մասնավորապես Սիրիա և Իրաք, որտեղ աստիճանաբար ակտիվացող իսլամական ծայրահեղ արմատական դրսևորումներում նույնպես նկատելի դարձավ Ազգամի գաղափարների ազդեցությունը:

Սիրիական հակամարտությունն իր սկզբնավորման ժամանակահատվածից (2011 թ. մարտ) ուներ առավելապես սոցիալական բնույթ, որը հետագայում ընդունեց սուր քաղաքական ուղղվածություն՝ երկիրը կանգնեցնելով խոր ճգնաժամի առջև: Աստիճանաբար ակնառու դարձան Սիրիայում ներգրավված հակամարտող կողմերը՝ ներկայիս իշխանություններն ու հիմնականում դրսից (Պարսից ծոցի արաբական միապետություններ, Թուրքիա, Հորդանան և այլն) կազմակերպվող ու ֆինանսավորվող ընդդիմադիր զանգվածը, որը սկզբնական շրջանում ներկայացված էր առավելապես աշխարհիկ ուժերով, թեպետ նրանց շարքերում նկատվում էին նաև որոշ իսլամա-

կան խմբավորումներ: 2012 թ. ընթացքում Սիրիայում ընդդիմադիր աշխարհիկ խմբավորումների հետ զուգահեռ սկսեցին ակտիվություն ցուցաբերել իսլամական արմատական, նաև ծայրահեղ արմատական ուժերը:

Սիրիական հակամարտության սկզբից նկատվեց երկրում ավանդապես ազդեցիկ դիրքեր ունեցող «Մուսուլման եղբայրներ» իսլամական արմատական խմբավորման ակտիվ ներգրավվածությունը: Դրան զուգահեռ Սիրիայում գլուխ բարձրացրին նաև իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումներ, որոնց շարքում աչքի ընկան «Հադթանակի ճակատ» (جبهة النصرة-Ջաբհաթ ալ-Նուսրա), «Իսլամական Շամի ազատների շարժում» (حركة احرار الشام-Ահրար աշ-Շամ), «Միաստվածության խմբավորում» (لواء التوحيد-Լիուա աթ-Թաուհիդ), «Իրաքում և Շամում իսլամական պետություն» (الدولة الإسلامية في العراق والشام-Դաուլա ալ-Իսլամիա ֆի ալ-Իրաք ու ալ-Շամ) և այլ խմբավորումներ:

Մերձավոր Արևելքում ծավալված զինադեմոստրացիայից ինչպես մուսուլմանական երկրներում, այնպես էլ աշխարհի տարբեր հատվածներում բնակվող մուսուլմանների շրջանում լայն բարոզցությամբ: Սիրիայում, հետագայում նաև Իրաքում զինադեմոստրացիայից դարձնելու նպատակով իսլամական ծայրահեղ արմատականության գաղափարախոսների կողմից օգտագործվեցին ժամանակակից տեխնոլոգիաներ (IT մասնագետներ, համացանց, բարձր որակի գովազդային տեսահոլովակներ և այլն):

Այսօր էլ Մերձավոր Արևելքում շարունակվող հակամարտություններում նկատելի են Աբդալլահ Ազգամի ժամանակակից զինադական պայքարի հանրայնացման մարտավարությունը, առաջ քաշված գաղափարների ազդեցությունն ու կիրարկման լայն հնարավորությունները: Աշխարհի տարբեր հատվածներում բնակվող երիտասարդ մուսուլմանների համար իսլամական խալիֆայության, մուսուլմանական ումմայի շենացման, զինադական պայքար իրականացնելու, «անհավատների» դեմ պայքարելու և իսլամական արմատական այլ գաղափարներ կյանքի կոչելու հնարավորություն է ստեղծվել հատկապես Սիրիայում և Իրաքում: Ազգամի կողմից առաջ քաշված մուսուլմանական երկրում բռնազավթողների դեմ պայքար վարելու գաղափարը վերածվել է մուսուլմանի «Անհատական պարտականության», որով ժողոված իսլամականներն աշխարհի տարբեր հատվածներից շարունակում են գալ և

մասնակից դառնալ իսլամական երկրներում ընթացող ջիհադին: Արդալլահ Ազզամի՝ ջիհադական պայքարի նպատակներից մեկը՝ Իսլամական պետություն ստեղծելը, իր առարկայական դրսևորումն է գտնում իսլամականների կողմից վերահսկվող Սիրիայի և Իրաքի ներկայիս զգալի տարածքներում:

Այսպիսով, 1980-ական թթ. ջիհադի հայեցակարգը Արդալլահ Ազզամի շնորհիվ հարստացավ նոր գաղափարներով, որոնք լայն տարածում գտան ինչպես XX դարի վերջին, այնպես էլ XXI դարի սկզբին և՛ մուսուլմանական աշխարհում, և՛ դրանից դուրս: XXI դարի առաջին տասնամյակի սկզբում մուսուլմանական երկրներում տեղ գտած փոփոխությունների և աշխարհաքաղաքական նոր իրողությունների համատեքստում ջիհադի հայեցակարգի տեսական և գործնական կիրարկումների հիմքում տեսանելի դարձան Արդալլահ Ազզամի կողմից առաջ քաշված ու մուսուլմանական ծայրահեղ արմատական տիրույթում լայն տարածում ստացած նոր մոտեցումները, որոնց անկյունաքարային հիմնադրույթներից մեկը՝ Իսլամական պետության հիմնումը, դարձավ իրողություն 2014 թ. Հունիսի 29-ին Սիրիայի և Իրաքի զգալի տարածքների վրա:

ԻՐԱՆՅԵԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԹՈՒՐԲԻԱՅԻ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Մերձավորարևելյան տարածաշրջանային գործընթացների բաղկացուցիչ մաս են կազմում սիրիա-իսրայելական և թուրք-իսրայելական հարաբերությունները: Այս հողվածում փորձ է արվում ուսումնասիրելու XX դարի վերջին, XXI դարի սկզբին սիրիա-իսրայելական և թուրք-իսրայելական հարաբերությունները, որը հնարավորություն կտա պատկերացում կազմելու մի կողմից՝ Թուրքիայի և Սիրիայի, իսկ մյուս կողմից՝ Իսրայելի միջև առկա փոխառնչությունների տրամաբանության մասին մերձավորարևելյան տարածաշրջանային և արտատարածաշրջանային զարգացումների համատեքստում:

Սիրիա-իսրայելական հարաբերությունները XX դարի վերջին, XXI դարի սկզբին

Սիրիա-իսրայելական հարաբերությունների հիմքում մշտապես եղել են տարաբնույթ հիմնախնդիրներ (տարածքային պահանջներ, ջրային ռեսուրսների վերահսկողության խնդիր, Մերձավորարևելյան տարածաշրջանում վարվող քաղաքականություն և այլն), որոնք իրենց արտացոլումն են գտել նաև 1990-2002 թթ. երկկողմ հարաբերություններում:

Տարածքային հիմնախնդիրներ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև գաղտնի բանակցությունների ընթացքում Սայքս-Պիկոյի համաձայնագրով՝ Սիրիան և Պաղեստինն ընդգրկվեցին հա-

¹ Ն. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն: Հատոր IV. Անկախության և ինքնիշխանության դարաշրջան: 1918-2005թթ., Եր., «Զանգակ-97», 2007, էջ 282:

մապատասխանաբար Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի մանդատի ներքո: Ֆրանսիական մանդատային իշխանությունների վերահսկողության տակ անցան նաև Գոլանի բարձունքները՝ փաստացի մնալով Սիրիայի կազմում:

Հետագայում՝ Երկրորդ աշխարհամարտի ավարտից և մանդատային իշխանությունների վերացումից հետո, Մերձավոր Արևելքում տարածքային նոր բաժանումներ եղան: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1947 թ. նոյեմբերի 29-ի N 181 բանաձևով սահմանվեցին Իսրայել և Պաղեստին պետությունների տարածքները²: 1948 թ. մայիսի 15-ին՝ Իսրայել Պետության հռչակումից հետո, սիրիական բանակը մի քանի այլ արաբական պետությունների զինուժի հետ միասին ներխուժեց Իրեական պետության տարածք՝ նպատակ ունենալով խոչընդոտել Իսրայելի ստեղծումը: 1948-49 թթ. ռազմական գործողությունների արդյունքում Սիրիան մնաց միակ արաբական պետությունը, որն իր ձեռքում էր պահում ՄԱԿ-ի կողմից ընդունված բանաձևով Իսրայելի համար նախատեսված հողերի ոչ մեծ հատված³: Հետագայում հաշտության բանակցությունների արդյունքում Սիրիայի և Իսրայելի սահմանամերձ որոշ տարածքներ ճանաչվեցին որպես «ապառազմականացված գոտիներ»: Մինչև 1967 թ. «ապառազմականացված գոտիները» մնում էին անաղաղ բախումների թատերաբեմ սիրիական և իսրայելական զինված ուժերի միջև:

Արաբական որոշ երկրների (այդ թվում՝ Սիրիայի) և Իսրայելի միջև երկրորդ պատերազմը տեղի ունեցավ 1967 թ. հունիսի 5-10-ը («Վեցօրյա պատերազմ»): Իսրայելի կողմից պատերազմ սկսելու պատճառներից էին նաև 1967 թ. սկզբից իսրայելական օբյեկտների հաճախակի ուճակոծությունները սիրիական օդուժի կողմից: Պատերազմի հետևանքով Իսրայելին անցան Արևելյան Երուսաղեմը, Հորդանան գետի արևմտյան ափը, Գազան, Սինայ թերակղզին, սիրիա-իսրայելական սահմանամերձ տարածքում գտնվող Գոլանի բարձունքները: 1967 թ. նոյեմբերին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունեց բանաձև, որով Իսրայելից պահանջում էր հեռանալ նվաճված բոլոր տարածքներից⁴:

² Նույն տեղում, էջ 292-293:

³ Бар-Օն М. Проблемы Голланских высот. – Иерусалим, 1998. – էջ 6.

⁴ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի №242 բանաձև (http://www.eretzsrael.co.il).

Իսրայելը ձգտում էր Գոլանը վերածել տարանցիկ գոտու՝ այնտեղ ստեղծելով քաղաքացիական և ռազմական օբյեկտների ցանց: Փաստորեն դա նշանակում էր, որ Գոլանի բարձունքները պետք է դառնային Իսրայելի անքակտելի մասը, որը նախօրոք կբացատրեր դրանց հանձնման հարցը Սիրիային:

1970 թ. նոյեմբերի 13-ի ռազմական հեղաշրջման արդյունքում Սիրիայում իշխանության եկավ Հաֆեզ Ալ-Ասադը, սահմանեց երկրի ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները: Օրակարգում կրկին դրվեց Գոլան բարձունքների վերադարձի հարցը, որը Սիրիայի նոր ղեկավարության կողմից դիտվում էր որպես սեփական իշխանության լեգիտիմացման միջոց: Այդ էր պատճառը նաև, որ Սիրիան մասնակցեց Իսրայելի հետ 1973 թ. պատերազմին: Իսրայելական բանակային ստորաբաժանումները հարձակման ենթարկվեցին եգիպտական զինուժի կողմից Սինայի թերակղզում: Իսրայելական զինուժին հաջողվեց ներթափանցել սիրիական տարածք և պաշարել եգիպտական երրորդ բանակը: Իսրայելական զինուժի մյուս ռազմավարական հաջողությունը եգիպտոսի Սուեզի ջրանցքի արևմտյան ափի նկատմամբ վերահսկողության հաստատումն էր, որից հետո եգիպտոսը ստիպված էր զինադադար խնդրել: Չնայած սկզբնական հաջողություններին՝ սիրիական բանակին չհաջողվեց պահպանել իր կողմից ազատագրված Գոլան բարձունքներից արևելք ընկած տարածքները: Եգիպտոսի օրինակին հաջորդեցին նաև արաբա-իսրայելական երրորդ հակամարտություն ներքաշված մյուս արաբական երկրները:

Գոլանի բարձունքների հիմնահարցն առանցքային խընդիրների շարքում է եղել նաև 90-ականներից մինչև 2002 թթ. Սիրիա-իսրայելական հարաբերություններում: Բարձունքների հիմնախնդիրը կարևոր է եղել թե՛ Սիրիայի, թե՛ Իսրայելի ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից: Դա պայմանավորված էր առաջին հերթին բարձունքների աշխարհագրական դիրքով, որը հնարավորություն էր տալիս վերահսկելու հարակից երկրի զգայի հատվածը՝ օգտագործելով սպառազինության որոշ տեսակներ: Իսկ այստեղ գտնվող Տիվերիադյան լիճը համարվում էր տարածաշրջանում խմելու ջրի կարևոր աղբյուրներից մեկը:

Իսրայելական հասարակական-քաղաքական ընկալումնե-

րում Գոլանի բարձունքների հիմնախնդիրը⁵ տարբերվում է մյուս տարածքային հիմնախնդիրներից հետևյալ հանգամանքներով.

1. ի տարբերություն Գազայի հատվածի կամ Հորդանան գետի արևմտյան ափի՝ Գոլանի բարձունքներում Իսրայելը չի բախվում ժողովրդագրական խնդիրների:

2. Գոլանի բարձունքները ռազմավարական կարևորություն ունեն Իսրայել Պետության համար՝ վերահսկելու խմելու ջրի աղբյուր հանդիսացող Տիվերիադայան լճը:

Գոլանի բարձունքների հիմնախնդրի հետ կապված սիրիա-իսրայելական հարաբերություններում սիրիական կողմը միշտ իր անհամաձայնությունն է հայտնել հիշյալ բարձունքների հանձնման դիմաց երկկողմ խաղաղության պայմանագիր կնքելու:

Բացի այդ, Սիրիայի կողմից Գոլանի բարձունքների հիմնախնդրի շահարկումները կապված են եղել տարածաշրջանում իսրայելական (սինիստական) բռնազավթողական քաղաքականության լրացուցիչ շեշտման հետ, որի մասին խոսվում է նաև Սիրիայի սահմանադրության նախաբանում⁶:

Ջրային հիմնախնդիրներ: XX դարի վերջին և XXI դարի սկզբին սիրիա-իսրայելական հարաբերություններում, բացի տարածքային վեճից, գոյություն է ունեցել նաև ջրային ռեսուրսների հիմնախնդիրը, որը երկու երկրների համար հանդիսացել է ինչպես սահմանազատման, այնպես էլ անվտանգության ապահովման գործոն: Տարածքային հիմնախնդրի նման ջրային ռեսուրսների նկատմամբ վերահսկողությունը

նույնպես հակասությունների պատճառ է եղել Իսրայելի և Սիրիայի փոխհարաբերություններում: Դեռևս 1967 թ. պատերազմի նախօրեին սիրիա-իսրայելական ռազմական բախումների մեծ մասը տեղի էր ունենում ջրի խնդրի լուծված չլինելու և Հորդանան գետի ջրի հոսքի փոփոխության փորձերի պատճառով:

Իսրայելը ցանկանում էր իր վերահսկողության տակ պահել Բանիասը, որտեղ գտնվում էր Հորդանան գետի երեք հիմնական ակունքներից մեկը (մյուսը գտնվում է Իսրայելում, երրորդը՝ Լիբանանում), ամբողջական վերահսկողություն հաստատել Հորդանան գետի վերին հոսանքի, Տիվերիադայան լճի և այդ ջրային ավազանը շրջանցող ճանապարհի նկատմամբ: Ջրային ռեսուրսների հետ կապված վերոհիշյալ ծրագրերն Իսրայելը փորձում էր իրականացնել դեռևս իր ստեղծման առաջին տարիներից⁷:

Ինչ վերաբերում է Սիրիային, ապա ջրային հիմնախնդրում Դամասկոսը փորձեց ելք ստանալ դեպի Հորդանան գետի վերին և Տիվերիադայան լճի հյուսիսային հատված՝ համաձայնվելով թույլատրել իսրայելցիներին օգտագործել լճի ավազանը հատող ճանապարհը, անգամ եթե այն անցներ սիրիական տարածքներով:

Մերձավորարևելյան տարածաշրջանային և ներպետական այլ գործընթացներ: Բացի տարածքային և ջրային ռեսուրսների վերահսկողության հիմնախնդիրներից, երկկողմանի հարաբերությունների վրա իրենց ազդեցությունն են ունեցել մերձավորարևելյան տարածաշրջանային և ներպետական այլ զարգացումներ:

Իսրայելն անընդհատ բարձրաձայնել է Սիրիայի կողմից ահաբեկչական կառույցների օժանդակության և Մերձավորարևելյան տարածաշրջանում բռնազավթողական քաղաքականության իրականացման խնդիրների մասին: Սա անմիջականորեն կապված էր «Հիզբալլահ» շիական իսլամական արմատական կազմակերպությանը տրվող սիրիական շիա-ալուիական վարչակարգի օժանդակության և Լիբանանի խնդրի հետ: Սիրիական իշխանությունները մշտապես փորձել են իրենց ազդեցության տակ պահել հարևան Լիբանանը: 1975 թ. քաղաքացիական պատերազմի սկզբում Արաբական երկրների լիգայի թողությունամբ Լիբանանում հայտնվեցին նաև սիրիա-

⁵ 1981 թ. Իսրայելում ընդունվեց օրենք Գոլանի բարձունքների վերաբերյալ, որով հայտարարվեց Իսրայելի ինքնիշխանությունն ու իրավասությունները իր շրջան տարածքի նկատմամբ (տե՛ս Israel Ministry of Foreign Affairs, Golan heights law, December 14, 1981. <http://www.mfa.gov.il/mfa/foreign-policy/peace/guide/pages/golan%20heights%20law.aspx> (մուտք, 21. 03. 2015 թ.): ՄԱԿ-ի Ան-ի կողմից 1981 թ. դեկտեմբերի 12-ին ընդունված N 497 բանաձևով Իսրայելի կողմից Գոլանի բարձունքների անեղծորդումները հայտարարվեցին անվավեր և միջազգային իրավաբար ուժ չունեցող՝ պահանջելով բռնազավթում իրականացրած Իսրայելից չեղյալ հայտարարել դրանք (տե՛ս UN Security Council Resolutions, [http://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=S/RES/497\(1981\)](http://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=S/RES/497(1981))) (Մուտք, 03. 05. 2014 թ.):

⁶ «المقدمة السورية العربية السورية دستور الجمهورية العربية السورية» <http://syriamoi.gov.sy/new/index.php?req=33&p=14>,

⁷ أزمة المياه في المنطقة العربية الحقائق والبدائل الممكنة سامر مخيمر خالد حجازي, 1996, ص 193.

կան ուղղման ստորաբաժանումներ, որոնք կայունության և խաղաղության ապահովման գործառույթներ էին իրականացնում Լիբանանում ընդհուպ մինչև 2005 թ., երբ Բեյրութում Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանությունից հետո ներլիբանանյան և արտալիբանանյան որոշ ուժերի ճնշման տակ սիրիական զորքերը ստիպված էին հեռանալ երկրից⁶:

1990-ական թթ. կեսերին սիրիա-իսրայելական հարաբերություններում որոշ տեղաշարժեր նկատվեցին: 1994-95 թթ. Իսրայելի և Սիրիայի միջև բանակցությունները երկու երկրների պաշտոնատար անձանց ոչ մշտական հանդիպումներ են վաշինգտոնում՝ ԱՄՆ-ի միջնորդությամբ: Իսրայելի վարչապետ Ի.Ռաբինը կողմ էր արտահայտվում Ալ-Ասադի հետ հանդիպմանը, սակայն վերջինս ցանկություն չէր հայտնում անմիջական բանակցություններ վարելու Իսրայելի ղեկավարի հետ: Միևնույն ժամանակ Սիրիայի նախագահն իր հրապարակային ելույթներում և հարցազրույցներում շարունակում էր ընդգծել, որ «Իսրայելը խաղաղ կարգավորման գործընթացի սկզբնավորումից հետո սկսեց խոչընդոտներ հարուցել և անջրպետներ անցկացնել՝ շրջանցելով սկզբունքային հարցերը և խաղաղության պահանջումները՝ անընդհատ խուսափելով, երբ պետք էր պարզ արտահայտվել խաղաղ կարգավորման հիմնական դրույթների, ՄԱԿ-ի բանաձևերի կամ «հող խաղաղության դիմաց» բանաձևի վերաբերյալ»⁷:

Այդ փուլում Սիրիան և Իսրայելը միմյանց մեղադրում էին անվճարականության և անհետևողականության մեջ: Միևնույն ժամանակ այդ փոխադարձ մեղադրանքները միայն քողարկում էին երկու երկրների՝ սեփական դիրքորոշումների պաշտպանությունը որոշակիացմանն ուղղված քայլերը: Իսրայելի նպատակներից մեկն էր նաև Գոլաններից նահանջելու դեպքում սեփական անվտանգության ապահովումը: Նա պահանջում էր ոչ միայն այդ գոտու ապառազմականացում, այլ նաև մերձսահմանային գոտուց սիրիական զորքերի հետքաշում և բարձունքներում վաղ տեղեկացման կայաններ տեղակայելու հնարավորություն:

Սիրիան այլ նպատակներ էր հետապնդում: Այն Արևմուտքի առջև իրեն պետք է դրսևորեր որպես պետություն, որը չէր աջակցում ահաբեկչությանը, և միևնույն ժամանակ ցույց տար արաբական երկրներին սեփական ունակությունը՝ թելադրելու Իսրայելին խաղաղ կարգավորման գործընթացի իր պայմանները: 1995 թ. սկզբին Իսրայելը ներկայացրեց Գոլանի բարձունքներից իր ունեցած դուրսբերման քառամյա գորաֆիկը: Սակայն Սիրիային ձեռնադրելու իր խրախուսական գրքերի ամբողջական դուրսբերումից հետո հարաբերությունների կարգավորումը Թել Ավիվի հետ, որը պետք է իրականացվեր առավելագույնը կես տարվա ընթացքում:

Հիշյալ փուլում սիրիա-իսրայելական հարաբերություններում բացասական ազդեցություն ունեցավ 1996 թ. ապրիլին լիբանանյան «Հիզբալլահ»-ի և Իսրայելի միջև հակամարտությունը, որի հետևանքով իսրայելական զինուժը ուժեղացրեց իր ներթուրանքները Լիբանանում:

Սիրիա-իսրայելական բանակցային գործընթացի վրա, բացի վերոհիշյալ հիմնախնդիրներից, իրենց ազդեցություն են ունեցել որոշ ներսիրայելական և ներսիրիական գործընթացներ ևս:

1990-ական թթ. Իսրայելում իշխանության էին գալիս ուժեր, որոնք պատրաստ էին Սիրիային հանձնելու Գոլանի բարձունքները երկու երկրների միջև խաղաղության պայմանագրի ստորագրման դիմաց: Այդ ուղղությամբ առավել ակտիվ աշխատանքներ էին տարվում հատկապես Բենիամին Նեթանյահուփ և Էհուդ Բարաքի կառավարություններում, սակայն հիշյալ գործընթացները մերժվեցին սիրիական իշխանությունների կողմից: Ինչպես արդարացիորեն նշում է ԱՄՆ-ում Իսրայելի նախկին դեսպան և Քնեսեթի նախկին պատգամավոր Զալման Շոկալը. «Իսրայելի կառավարության գրեթե բոլոր ղեկավարները պատրաստ են եղել բանակցություններ վարելու Գոլանի բարձունքների վերաբերյալ, սակայն վերջնարդյունքում բախվում էին սիրիական կողմի անհամաձայնության հետ»⁸:

1999 թ. ԱՄՆ-ի միջնորդությամբ մի քանի հանդիպումներ ևս եղան Իսրայելի և Սիրիայի միջև: ԱՄՆ-ը Սիրիայի առջև

⁶ Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն: Հատոր III. Անկախության և ինքնիշխանության դարաշրջան: 1918-2005թթ., «Ձևագրակ-97», 2006, էջ 642-668:

⁷ Из обращения Х. Асада к вооруженным силам Сирии 1 июня 1993 г. (цит. по: Мир глазами президента Асада, М., 2000. с. 106).

⁸ Shoval Z., Syria hallucinations, President Assad won't be disengaging from Iran or Hizbullah, December 27, 2006, <http://www.ynetnews.com/articles/0,7340,L-3344820,00.html>.

խնդիր դրեց որոշակիացնել իր դիրքերն անվտանգության խնդիրների, ջրային ռեսուրսների, հարաբերությունների կարգավորման և Լիբանանից սիրիական զորքերի դուրսբերման պայմանների հետ կապված: Սիրիան հրաժարվեց իր կարծիքով երկրորդական այդ հարցերը քննարկելուց, քանի դեռ Իսրայելի նոր վարչապետ Էհուդ Բարաքը չէր հաստատել իր համաձայնությունը Գոլաններից իսրայելական զորքերի դուրսբերման հետ կապված: Փոխգլխումային տարբերակի բացակայության պատճառով 1999 թ. ևս սիրիա-իսրայելական բանակցություններն անօգուտ դուրս եկան և ընդհատվեցին:

2000 թ. Հունիսին՝ Հաֆեզ ալ-Ասադի մահից հետո, Սիրիայի նոր նախագահ ընտրվեց որդին՝ Բաշար Ալ-Ասադը: Իսրայելը հույս ուներ, որ նոր ղեկավարի հետ ավելի հեշտ կլինի փոխպայմանավորվածության հասնել: Սակայն իր առաջին հարցազրույցներից մեկում Բաշար ալ-Ասադը հայտարարեց, որ «ավելելու է Իսրայելի հետ առանց որևէ համաձայնագրի ստորագրման Գոլանի բարձունքների վերադարձի վրա»¹¹:

Ճիշտ է, Բաշար ալ-Ասադի վարչակարգի կողմից որոշ շեշտադրումներ եղան սիրիա-իսրայելական հարաբերություններում փոփոխությունների և Իսրայելի հետ խաղաղության պայմանագրի ստորագրման սիրիական նոր մոտեցումների առումով¹²: Սակայն, մեծ հաշվով, սիրիա-իսրայելական հարաբերություններում զգալի տեղաշարժեր չնկատվեցին: Ընդհանրապես, Սիրիայում Բաշար ալ-Ասադի իշխանության գալով այդ հարաբերություններում ստեղծում նկատվեց: Դա կապված էր առաջին հերթին դեպի Իրան Սիրիայի քաղաքական ուղու փոփոխության, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության կողմից Սիրիային տրվող օժանդակության ավելացման հետ: Դա հնարավորություն տվեց Սիրիային ավելացող ռազմաքաղաքա-

կան և տնտեսական դերակատարման շնորհիվ առավել ինքնուրույն գործել տարածաշրջանում:

Իսրայելում իշխանության եկած Արիել Շարոնի նոր կառավարության կողմից նույնպես լուրջ քայլեր չձեռնարկվեցին երկու երկրների միջև անկա հիմնախնդիրների լուծման ուղղությամբ: Սիրիա-իսրայելական հարաբերություններում Ա.Շարոնի գլխավորած կառավարության սկզբունքային դիրքորոշումն այն էր, որ սիրիական իշխանությունների հետ բանակցությունները կարող են վերսկսվել միայն այն դեպքում, երբ Սիրիան հրաժարվի օժանդակելուց Իսրայելի կողմից ահաբեկչական համարվող «Համաս», «Հիզբալլահ» իսլամական արմատական խմբավորումներին և Պաղեստինի Ազատագրության կազմակերպությանը¹³:

Հարկ է նշել, որ չնայած սիրիա-իսրայելական հարաբերություններում անկա լարվածությանն ու անվտանգությանը, այդ հարաբերությունների սկզբնական փուլում ձեռք բերված որոշ համաձայնություններ կյանքի չկոչվեցին նաև միջնորդ երկրների դիրքորոշման պատճառով, որոնք իրենց՝ հաճախ մրցակցող և հակադրվող շահերն ունեին այս գործընթացներում:

Աշխարհում երկրներ համակարգի վերացումն ու միաբերում համակարգի ձևավորումը հանգեցրին նրան, որ արաբա-իսրայելական հակամարտության կարգավորման գործընթացը դուրս եկավ ԱՄՆ-ԽՍՀՄ համընդհանուր դիմակայության ոլորտից: Հիշյալ ժամանակահատվածում արաբա-իսրայելական հակամարտության կարգավորման ընթացքում նկատվեցին դրական փոփոխություններ, որոնք էին՝ 1992 թ. պաղեստինա-իսրայելական համաձայնությունները (հիշյալ համաձայնությունների գլխավոր դրույթներից էր Իսրայելի կողմից Գազայի հատվածի և Հորդանան գետի արևմտյան ափի ստեղծանական հանձնումը պաղեստինցիներին), 1994 թ. հորդանանա-իսրայելական խաղաղության համաձայնագիրը, 1992-95 թթ. Սիրիա-իսրայելական խաղաղ բանակցությունները և այլն: Վերոհիշյալ զարգացումներին ավելացավ ևս մեկը: Հիշյալ ժամանակահատվածում Սիրիան քաղաքական և տնտեսական արդյունավետ հարաբերություններ կառուցեց Մերձավարա-

¹¹ The Middle East. July-August 2000, № 30, էջ 7:

¹² Դա հատկապես երևաց 2000 թ. հունվարին Դամասկոսում Արաբ գրողների միության կոնֆերանսում Սիրիայի արտգործնախարար Շարոնի ելույթում: Խոսելով սիրիա-իսրայելական հարաբերությունների մասին՝ Շարոնը հայտարարեց, որ երբ խոսքը ռազմական հակամարտության մասին է, ապա Իսրայելի և արաբների միջև ուժերի հավասարակշռություն գոյություն չունի: Սակայն ևս ընդգծեց, որ Սիրիան կարող է ուղղել այդ հակամարտությունը դեպի քաղաքական, տնտեսական, առևտրային և մշակութային մրցակցության ոլորտ, տե՛ս Ալ-Ուարաա Ալ-Արաբիա, Բեյրութ, 12. 02. 2000:

¹³ В.П. Юрченко, Сирия: проблемы национальной безопасности (военная политика и военное строительство в период правления ПАСВ. 1963-2004 гг.), М., Ин-т изучения Израиля и Ближнего Востока. 2004, с. 246.

րևելյան տարածաշրջանի մի շարք երկրների, մասնավորապես Թուրքիայի, Իրաքի և Պարսից ծոցի միապետությունների հետ: ԽՍՀՄ փլուզումն իր ազդեցությունն ունեցավ Սիրիայի և Իսրայելի միջև հարաբերություններում արձանագրված որոշակի դրական տեղաշարժերի առումով: Սակայն, դրան զուգահեռ սիրիական իշխանությունների պահվածքում նկատվեցին Իրանի Իսլամական Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության հետ հարաբերությունների խորացման միտումներ՝ որպես Մերձավորարևելյան տարածաշրջանում իսրայելյան և ամերիկյան քաղաքականության հակակշիռ, որով հետագայում պայմանավորվեց երկու երկրների միջև հարաբերություններում առաջընթացի բացակայությունը, ինչն էլ Սիրիային հեռու պահեց Իսրայելի հետ հարաբերությունները խորացնելուց:

Թուրք-իսրայելական հարաբերությունները XX դարի վերջին, XXI դարի սկզբին

Չնայած Թուրքիան և Իսրայելը դիտարկվել են ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի դաշնակից երկրներ Միջերկրածովյան-Մերձավորարևելյան տարածաշրջանում, և հիշյալ պետությունների առնչությունները կրել են ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ սերտ միության ազդեցությունը, այնուամենայնիվ թուրք-իսրայելական հարաբերությունները հարթ չեն ընթացել՝ առաջնորդվելով ռազմաքաղաքական և ռազմատնտեսական սեփական շահերով¹⁴:

1949թ. Թուրքիան, ճանաչելով Իսրայել Պետությունը, ձգտել է կառուցել իր հարաբերությունները հրեական պետության հետ այնպես, որ չխաթարի իսլամական աշխարհի հետ սեփական առնչությունները:

Ինչ վերաբերում է Իսրայելին, ապա հրեական պետության ստեղծման առաջին տարիներից անվտանգության ապահովման իսրայելական ռազմավարության կարևորագույն դրույթներից էր տարածաշրջանի ոչ արաբական պետությունների հետ անվտանգության ոլորտում համագործակցությունը: 1958 թ. օգոստոսի 29-ին Իսրայել Պետության առաջնորդ Դավիթ Բեն Գուրյոնի հանդիպումը թուրքական իշխանության ներկայացուցիչների հետ նախադրյալներ ստեղծեց

երկու երկրների բազմակողմանի համագործակցության համար: 1980-ական թթ. իսրայելական ղեկավար շրջանակները փորձում էին իրականացնել արաբական երկրների մասնատման քաղաքականություն իսլամական աշխարհում ազդեցիկ դիրքեր ունեցող Թուրքիայի միջոցով¹⁵:

1980-90-ական թթ. տարածաշրջանային հարաբերություններում տեղ գտան առանցքային փոփոխություններ, որոնք պայմանավորված էին սառը պատերազմի ավարտով, ԽՍՀՄ-ի փլուզմամբ և, ըստ էության, երկբևեռ համակարգի փոխարինմամբ միաբևեռ համակարգով: Հիշյալ փոփոխությունները հանգեցրին աշխարհաքաղաքական Նոր պայմաններում միջազգային հարաբերությունների տարածաշրջանային Նոր համակարգի ձևավորմանը: Այդ գործընթացի բաղկացուցիչ մաս էր կազմում տարածաշրջանային շատ երկրների՝ միմյանց միջև առկա հիմնախնդիրների լուծումը բանակցությունների և փոխադարձ շփումների ճանապարհով տեսնելու ցանկությունը: Հիշյալ փոփոխություններն իրենց ազդեցությունն ունեցան նաև թուրք-իսրայելական հարաբերությունների վրա՝ ստիպելով երկու երկրներին ռազմաքաղաքական համագործակցության եզրեր փնտրել: Դրական տեղաշարժեր նկատվեցին հատկապես 1990-ական թթ. սկզբին, երբ ամբողջովին վերականգնվեցին դիվանագիտական հարաբերությունները երկու երկրների միջև, և վերսկսվեցին փոխադարձ այցելությունները: Սակայն Մերձավորարևելյան տարածաշրջանում այդ տարիներին ընթացող Իսրայել-արաբական երկրներ բանակցային ակտիվ գործընթացների ֆոնին թուրք-իսրայելական շփումները մեծ հաշվով մնացին աննկատ, որոնց մասին և՛ թուրքական, և՛ իսրայելական իշխանությունները չէին շտապում բարձրաձայնել:

Թուրքական քաղաքականության ուղղվածությունը դեպի Իսրայել պայմանավորված էր արաբական երկրների հետ անարդյունավետ հարաբերություններով, մինչդեռ Իսրայելի հետ ռազմական և տնտեսական հարաբերությունները թուրքական իշխանությունները շահավետ էին դիտարկում: Թուրքիան վստահ էր, որ հրեական պետության հետ կապերը հավանության կարժանանան ԱՄՆ-ի կողմից, որի հասարակական-քա-

¹⁴ Государство Израиль. Справочник. М., 1986, с. 104.

¹⁵ Иванова И., Турецко-израильские отношения и проблемы региональной безопасности, Ближний Восток: проблемы региональной безопасности. Москва, Институт изучения Израиля и Ближнего Востока, 2000, с. 80-91.

դաքական շրջանակներում շատ էին լսվում քննադատական կարծիքներ կապված բրդերի հանդեպ թուրքական իշխանությունների բռնությունների և հակաահաբեկչական ուժային գործողությունների հետ:

Բացի այդ, 1990-ական թթ. սկզբին և հատկապես ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Թուրքիայի դերակատարման անկում նկատվեց Արևմուտքի անվտանգության ապահովման ռազմավարություններում: Դա նպաստեց, որ թուրքական իշխանությունները նոր դաշնակիցներ փնտրեն տարածաշրջանում, և այս համատեքստում Իսրայելը Անկարայի համար առավել խոստումնալից և հեռանկարային գործընկեր էր դիտարկվում¹⁶:

Սիրիայի, Իրաքի և Իրանի աջակցությունը Թուրքիայում Քուրդիստանի աշխատավորական կուսակցության գործունեությանը, Սիրիայի հետ ջրային ռեսուրսների բաշխման հիմնախնդիրը, իրանական վարչակարգի հետ կապված «անհանգրստությունը», Թուրքիայի մի շարք հարևանների միջև ընթացող ռազմաքաղաքական համագործակցությունը (Հունաստան-Կիպրոս, Հունաստան-Սիրիա, Հայաստան-Իրան և այլն) ստիպեցին թուրքական իշխանություններին վերանայել իրենց ռազմական հնարավորությունները: Այդ համատեքստում Իսրայելի հետ համագործակցությունը դիտվում էր որպես հակաէջիո վերոհիշյալ երկրների և դրանց միջև ձևավորվող ռազմաքաղաքական համագործակցությունների: Բացի այդ, հարաբերություններ հաստատելով Մերձավոր Արևելքում ամենաժամանակակից զինուժն ունեցող Իսրայելի հետ՝ Թուրքիան ցանկություն ուներ ուժեղացնել և արդիականացնել սեփական ռազմական ներուժը:

Ռազմական համագործակցություն: Իսրայելի համար իսլամական աշխարհում մեծ հեղինակություն ունեցող Թուրքիայի հետ համագործակցությունը հնարավորություն էր տալիս ամրապնդելու սեփական դիրքերը Մերձավորարևելյան տարածաշրջանում՝ փորձելով դուրս գալ քաղաքական շրջափակումից: Դա նաև իսրայելական իշխանությունների համար հնարավորություն էր ստեղծում սեփական արտադրության պաշտպանական և ավիացիոն զինատեսակների իրացման շուկաների առումով: Իսրայելը նաև որոշ ռազմավարական և հետախուզական հնարավորություններ էր ստանում՝ համագործակցելով

իր նկատմամբ թշնամաբար տրամադրված Սիրիայի, Իրաքի և Իրանի հետ ընդհանուր սահման ունեցող Թուրքիայի հետ:

1990-ական թթ. սկզբում երկու երկրների միջև ռազմատեխնիկական, ռազմաարդյունաբերության և տնտեսական ոլորտներում համագործակցության ակտիվություն նկատվեց, որը բխում էր Թուրքիայի և Իսրայելի ռազմաքաղաքական և ռազմատնտեսական շահերից¹⁷:

Ռազմաքաղաքական հարաբերություններում ակտիվ քայլեր ձեռնարկվեցին 1993-1994 թթ. պաղեստինա-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորմանը միտված ամերիկյան նախաձեռնության ժամանակ, երբ հաճախակի դարձան տարբեր մակարդակներով թուրքական և իսրայելական կողմերի հանդիպումները:

1994 թ. աշնանը Թուրքիայի վարչապետ Թանսու Չիլերը Իսրայել կատարած պաշտոնական այցելության ժամանակ կոչ հղեց իսրայելական իշխանություններին ընդլայնել համագործակցությունը պաշտպանական ոլորտում: Այն միտված էր գլուխ բարձրացնող իսլամական ծայրահեղ արմատական միտումներին դիմակայելուն:

Թուրք-իսրայելական ռազմատեխնիկական համագործակցության ոլորտում նշանակալի ձեռքբերում էր 1996 թ. ռազմաարդյունաբերության ոլորտում գործակցության մասին ստորագրված համաձայնագիրը: Այն հնարավորություն տվեց թուրքական կողմին սեփական զինուժը համալրելու նորագույն սպառազինությամբ և տեխնոլոգիաներով: Բացի այդ, ԱՄՆ-ի և Եվրոպական մի շարք երկրների կողմից Թուրքիայի սպառազինության մատակարարման հարցում կիրառված արգելանքը իսրայելական ռազմաարդյունաբերական ընկերությունների համար սեփական արտադրանքը Թուրքիայում իրացնելու հնարավորություն տվեց¹⁸:

1997 թ. հունիսի 11-13-ը Իսրայելի նախագահ Վեյցմանը պաշտոնական այց կատարեց Անկարա: Թուրքիայի նախագահ Դեմիրելի և թուրքական այլ պաշտոնյաների հետ հանդիպման ժամանակ նա կոչ արեց զարգացնել թուրք-իսրայելական հարաբերությունները և չտրվել արաբական երկրների

¹⁶ The Jerusalem Post, 04.11.1994.

¹⁷ Nachmani A., Turkey: facing a new millenium: coping with intertwined conflicts, Manchester University Press, 2003, pp. 222-224.

¹⁸ Jung D., Picolli W., Turkey at the Crossroads: Ottoman Legacies and a Greater Middle East, London: Zed Books Ltd., 2001, pp. 163-164.

ճնշումներին: Դեմիրելն իր հեղթին վստահեցրեց իր հրեա գործընկերոջը, որ ռազմական համագործակցության վերաբերյալ համաձայնությունները կմասն ուժի մեջ, և հարաբերություններն այդ ոլորտում կշարունակեն զարգանալ¹⁹: Ճեռք բերված պայմանավորվածությունների համաձայն՝ իսրայելական ռազմական ինքնաթիռներին հնարավորություն ընձեռվեց սեփական զորավարժանքներն իրականացնելիս օգտվելու Թուրքիայի ռազմաթափանցիկ և օդային տարածությունից: Որոշակի առաջընթաց գրանցվեց նաև ռազմածովային ուժերի բնագավառում: Պայմանավորվածություն ձեռք բերվեց հետախուզական տեղեկատվության և տարածաշրջանում տիրող իրավիճակի մասին ռազմավարական գնահատականները փոխանակման մասին: Իսրայելական կողմը Թուրքիային օժանդակելու էր արաբական երկրների և Իրանի հետ իր սահմանների ամրապնդման գործում՝ ներառյալ սահմանային գոտիներում ռադիոտեխնիկական հետախուզության ցանցի բարելավումը: 1997 թ. հունիսի 16-ին 5 թուրքական ռազմանավեր տեղակայվեցին Հաֆայի նավահանգստում՝ համատեղ ռազմական վարժանքներից հետո²⁰:

Թուրք-իսրայելական հարաբերությունների նման արագ բարելավման լույսով միանգամայն տրամաբանական էր հարևան երկրների խիստ արձագանքը Թուրքիայի քաղաքականության հանդեպ: 1997 թ. փետրվարին Եգիպտոսի, Սիրիայի և Սաուդյան Արաբիայի ղեկավարները հանդես եկան հայտարարությամբ՝ կոչ անելով Թուրքիային վերանայել իր դիրքորոշումը: Իրանը և Հունաստանը նույնպես հանդես եկան բողոքի նոտաներով: Թուրքիայի արտաքին գերատեսչության պատասխանը եղավ այն, որ այդ բողոքները «որևէ կերպ չեն վերաբերում Թուրքիային»²¹:

Սակայն, երկկողմ հարաբերությունների զարգացման հիմնական խոչընդոտը թուրքական պետության իսլամականացման կողմնակիցների բացասական դիրքորոշումն էր: 1996 թ. Ընթացքում՝ վարչապետ դառնալուց հետո, Ն. Էրաքանը կարճ ժամանակահատվածում հասցրեց այցելել Թեհրան, Իսլամաբադ և Տրիպոլի, որտեղ վստահեցրեց Իրանի, Պակիստանի և Լիբիայի ղեկավարներին իսլամի հիմնարար

սկզբունքներին թուրքական կողմի հավատարմության և սիր-նիզմի հանդեպ տածած առեւելության մասին:

Ինչ վերաբերում է Իսրայելի հետ ռազմական համագործակցությանը, ապա իսլամականների կողմից այդ համագործակցության խաթարման փորձերը հանդիպեցին թուրքական զինվորականության ներկայացուցիչների դիմակայությանը: Թուրքական բանակի և իսլամականների միջև վեճն ավարտվեց նրանով, որ Թուրքիայի գլխավոր շտաբի հրամանատարի պահանջով Ն. Էրաքանը հայտարարեց իր հրաժարականի մասին՝ չսպասելով իր ժամկետի ավարտին:

Տնտեսական համագործակցություն: Ռազմական համագործակցությանը զուգահեռ արդյունավետ զարգանում էր նաև թուրք-իսրայելական տնտեսական համագործակցությունը: 1997 թ. ապրիլին պայմանագիր ստորագրվեց թուրք-իսրայելական տնտեսական համագործակցության մասին, իսկ 1997 թ. վերջին Թուրքիայի վարչապետ Յիլմազը հայտարարեց, որ գնաճի հաղթահարման գործում Թուրքիան նախընտրում է «իսրայելական մոդելը»²²:

Երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացման համար հատկապես արդյունավետ էր 1998 թ.: Տարվա սկզբից Իսրայելը սկսեց առանձնահատուկ ուշադրություն ցուցաբերել Թուրքիայում Հարավարևելյան Անատոլիայի զարգացման ծրագրի (GAP) հանդեպ (այդ ծրագրով նախատեսվում էր Եփրատ գետի վրա կառուցել Աթաթյուրքի անվան ամբարտակ, արդյունավետ դարձնել թուրքական ջրային ռեսուրսների օգտագործումը, զարգացնել Թուրքիայի ամենահետամնաց տարածաշրջաններից մեկը համարվող Հարավարևելյան Անատոլիան, արդիականացնել հողատարածքների ոռոգման համակարգը և այլն)²³: Գյուղատնտեսության և ոռոգման բնագավառներում առաջնակարգ տեխնոլոգիական հնարավորությունների տիրապետող Իսրայելը պատրաստ էր իր ռեսուրսներով կիսվելու Թուրքիայի հետ և նպաստելու նախագծի իրականացմանը:

Ամբարտակի կառուցման և Անատոլիայի այդ հատվածի ոռոգման գաղափարը խիստ բացասաբար ընդունվեց Սիրիայի կողմից՝ այն մտավախությամբ, որ ամբարտակի կառուցումը

¹⁹ Milliyet, 12.06.1997.

²⁰ Նույն տեղում, 17-18.06.0997:

²¹ Նույն տեղում, 01.03.1997:

²² Նույն տեղում, 03.10.1997:

²³ Kolars Jh., Mitchell W., The Euphrates River and The Southeast Anatolia Development Project, Southern Illinois University, 1991, p. 2-3.

կնվածեցնի եփրատ գետով դեպի Սիրիա հոսող ջրային ռեսուրսների ծավալները: Մահմեդական որոշ երկրների կողմից թուրք-խրայեյական համագործակցությունը ևս քննադատության արժանացավ: Մասնավորապես 1998 թ. Թեհրանում Իսլամական համագործակցության կազմակերպության հանդիպման ժամանակ լավեցին կարծիքներ առ այն, որ թուրք-խրայեյական համագործակցությունը Մերձավոր Արևելքի քաղաքական քարտեզը վերանայելու փորձ է:

Հատկանշական է, որ 1998 թ. սեպտեմբերին Կահիրեում տեղի ունեցած Արաբական երկրների լիգայի արտաքին գործերի նախարարների հանդիպման (օրակարգային խնդիրների շարքում ներառված էր նաև թուրք-խրայեյական համագործակցությունը) ժամանակ նկատվեց թուրք-խրայեյական համագործակցության վերաբերյալ արաբական երկրների միասնական դիրքորոշման բացակայություն: Ավելին, խորհրդակցության ընթացքում քննադատություններ ուղղվեցին Բուրդիխանի աշխատավորական կուսակցությանն օժանդակող Սիրիայի Արաբական Հանրապետությանը՝ կոչ հղելով այդ օժանդակության դադարեցման անհրաժեշտության մասին: Այդ ամենն առաջացրեց սիրիական կողմի խիստ դժգոհությունը, որն էլ ավելի խորացավ այն բանից հետո, երբ արաբական երկրների մեծ մասը հրաժարվեց Սիրիայի և Լիբանանի կողմից պատրաստված օրինագիծն ընդունելուց, որով խիստ քննադատության էր ենթարկվում Թուրքիան: Նույնիսկ Պաղեստինի, Հորդանանի և Օմանի ներկայացուցիչները ելույթներով հանդես եկան առ այն, որ թուրք-խրայեյական համագործակցությունը որևէ վտանգ չի ներկայացնում արաբական աշխարհի համար²⁴:

Թուրք-խրայեյական հարաբերություններում որոշակի սառեցում նկատվեց 2000-ական թթ. սկզբում, երբ պաղեստինյան հիմնախնդրի սրացման հետ կապված լարված իրավիճակ ստեղծվեց տարածաշրջանում²⁵:

²⁴ Նույն տեղում, 19.09.1998:

²⁵ 1988 թ. Թուրքիան ճանաչեց պաղեստինյան պետությունը (տե՛ս International Journal of Middle East Studies, Febr. 1993, էջ 100): Սակայն, չնայած ճանաչմանը, Թուրքիայի և ՊԱԿ-ի հարաբերությունները շարունակում էին մնալ ոչ քարիդրացիական (մասնավորապես Արաֆաթի կողմից գլխավորվող ՊԱԿ-ը կասկածվում էր տարածաշրջանում Թուրքիայի հիմնական մրցակիցների հետ հարաբերությունների զարգացման մեջ: Մասնավորապես Անկարան կասկածում էր ՊԱԿ-ին 1970-80-ական թթ.

Թուրքիայի համակրանքը պաղեստինցիների հանդեպ առավել արտահայտվեց 2000 թ. վերջում, երբ սկսվեց երկրորդ ինթիֆադան: Հոկտեմբերին Թուրքիան ուղունեց Իսրայելի կողմից պաղեստինցիների հանդեպ իրականացված բռնությունը դատապարտող ՄԱԿ-ի ընդունած բանաձևը, իսկ նույն ամսվա վերջում Ստամբուլում տեղի ունեցած իսլամական տնտեսական կոնֆերանսում Թուրքիայի նախագահ Ա.Սեզերը խստորեն քննադատեց Իսրայելին²⁶:

2002 թ. նոյեմբերին Թուրքիայում տեղի ունեցած ընտրություններում հաղթեց «Արդարություն և զարգացում» կուսակցությունը, որի անդամների մեծ մասը նախկինում էրաբքանի գլխավորած «Բարօրություն» կուսակցության անդամներ էին: Թեև «Արդարություն և զարգացում» կուսակցությունը չքննադատեց Իսրայելին, սակայն դրա անդամների մեծ մասը բացասաբար էր վերաբերվում Իսրայելի հետ հարաբերություններին: Միևնույն ժամանակ էրդոզանի կառավարությունը չէր պատրաստվում որևէ կերպ վերանայել թուրք-խրայեյական հարաբերությունները:

Այսպիսով, XX դարի վերջին և XXI դարի սկզբին թուրք-խրայեյական հարաբերություններն առանձնանում էին ռազմաքաղաքական և տնտեսական համագործակցության խրաքամմբ, որտեղ նկատելի էին ռազմավարական և մարտավարական ընդհանուր հետաքրքրություններ և մոտեցումներ: 1990-ական թթ. տարբեր քնազավառներում թուրք-խրայեյական հարաբերություններում նկատվող առաջընթացը կարևոր իրողություն էր ոչ միայն հիշյալ երկրների քաղաքականության համար, այլև Մերձավորարևելյան տարածաշրջանում ուժերի հարաբերակցության առումով:

Թուրք-խրայեյական համագործակցությունը հնարավորություն տվեց Իսրայելին դուրս գալու քաղաքական մեկուսացումից, որում հայտնվել էր հրեական պետությունը տասնամյակներ շարունակ: Բացի այդ, այն դարձավ հակակշիռ սիրիահրանական դաշինքին: Վերջինս թուրքական և իսրայելական

քորդ և հայ ահաբեկիչներին վերապատրաստելու գործում (տե՛ս Aras B. Palestinian-Israeli Peace Process and Turkey, Commack, N.Y., Nova Science Publishers, 1998, էջ 125): Միևնույն ժամանակ 1990-ական թթ. Թուրքիան շարունակում էր տնտեսական և քաղաքական օժանդակություն ցուցաբերել պաղեստինցի ժողովրդին:

²⁶ Middle East New Agency (Cairo). Oct. 26, 2000.

իշխանությունների կողմից դիտարկվում էր որպես լարվածության աղբյուր Մերձավորարևելյան տարածաշրջանում:

2000-ական թթ. սկզբում պաղեստինյան հակամարտության սրացումը, մերձավորարևելյան տարածաշրջանային զարգացումներում թուրքական իշխանությունների պաղեստինամետ դիրքորոշումը, 2002 թ. Թուրքիայում իսլամական «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալը որոշ հակասություններ առաջ բերեցին թուրք-խորայելական հարաբերություններում: Հիշյալ հակասությունները թուրքական իշխանությունները փորձում էին դիտարկել Իսրայելի հետ ստեղծված ռազմաքաղաքական և ռազմատնտեսական հարաբերություններից անկախ, ինչը, սակայն, ցանկալի արդյունք չտվեց: Ավելին, «Արդարություն և զարգացում» կուսակցության կողմից քայլեր ձեռնարկվեցին մուսուլմանական աշխարհում սեփական հեղինակության բարձրացման ուղղությամբ, ինչը չէր կարող բացասաբար չանդրադառնալ թուրք-խորայելական հարաբերությունների հետագա ընթացքի վրա:

Հայացք նետելով XX դարի վերջին, XXI դարի սկզբին սիրիա-խորայելական և թուրք-խորայելական հարաբերությունների վրա՝ կարող ենք փաստել հետևյալը.

- 1980-ական թթ. վերջը և 1990-ական թթ. սկիզբը նշանավորվեցին մերձավորարևելյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում և տարածաշրջանային զարգացումներում նկատելի փոփոխություններով, որոնք իրենց ազդեցությունն ունեցան XX դարի վերջին, XXI դարի սկզբին սիրիա-խորայելական և թուրք-խորայելական հարաբերությունների վրա:
- XX դարի վերջին, XXI դարի սկզբին հիշյալ հարաբերությունների հիմքում եղել են տարաբնույթ հիմնախնդիրներ (տարածքային, ջրային ռեսուրսների հետ կապված և այլն): Այդ հարաբերությունների վրա իրենց ազդեցությունն են ունեցել աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական ու տարածաշրջանային գործընթացներ և ներպետական զարգացումներ:
- Հիշյալ ժամանակահատվածում Սիրիա-Իսրայել և Թուրքիա-Իսրայել փոխառնչությունները կրել են փոփոխական բնույթ: Եթե նշված ժամանակահատվածի սկզբնական հատվածում և՛ սիրիա-խորայելական, և՛ թուրք-խորայել-

լական հարաբերություններում որոշ առաջխաղացում գրանցվեց, ապա 2000-ական թթ. սկզբում դրանցում նկատվեց որոշակի սառեցում:

- Սիրիա-խորայելական հարաբերությունների համեմատ թուրք-խորայելական առնչությունները շատ ավելի առաջ գնացին: Նկատվեցին դրական տեղաշարժեր Թուրքիայի և Իսրայելի միջև ռազմաքաղաքական և տնտեսական բնագավառներում, ինչը չի կարելի ասել սիրիա-խորայելական հարաբերությունների մասով:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Արաքս Փաշայան, պ. գ. թ., դոցենտ

Աշխատում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնում՝ որպես ավագ գիտաշխատող: Զբաղվում է արաբական երկրների ներքին և արտաքին հիմնախնդիրների, «Իսլամական համագործակցություն» կազմակերպության, ինչպես նաև «քաղաքական իսլամի» ուսումնասիրությամբ:

Վահրամ Պետրոսյան, պ.գ.թ., դոցենտ

Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ է: Զուգահեռաբար վարում է ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հայ-քրդական առնչությունների բաժնի վարիչի պաշտոնը: Զբաղվում է քրդագիտական հիմնախնդիրներով, Թուրքիայի և ԱՄՆ-ի արտաքին քաղաքական խնդիրների ուսումնասիրությամբ:

Գրիգոր Վարդանյան, պ.գ.թ.

Աշխատում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնում՝ որպես գիտաշխատող: Զբաղվում է Սիրիայի Արաբական Հանրապետության ժամանակակից պատմության, ալավիական համայնքի հիմնախնդիրների, ինչպես նաև Սիրիայում ալավիների ունեցած ռազմաքաղաքական ազդեցության ուսումնասիրությամբ:

Սարգիս Գրիգորյան

ԵՊՀ-ի հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հայ-քրդական առնչությունների բաժնի գիտաշխատող է: Հետազոտությունների հիմնական ոլորտներն են իսլամական ծայրահեղական շարժումները, ինչպես նաև քրդական հիմնախնդիրը Մերձավոր Արևելքում:

Արսեն Զուլֆալական

ԵՊՀ-ի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ: Զբաղվում է սիրիա-թուրքական հարաբերությունների հիմնահարցով, Սիրիայի և Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնախնդիրների ուսումնասիրությամբ:

AUTHORS

Araks Pashayan Assoc. Prof., PhD

Associate Professor and a Senior Research Fellow at the Department of Arab Countries at the Institute of Oriental Studies NAS RA. Main fields of her research include domestic and foreign political issues of Arab Countries, Organisation of Islamic Cooperation, as well as "political Islam".

Vahram Petrosyan Assoc. Prof., PhD

Associate Professor of the Department of International Relations and Diplomacy of the Faculty of International Relations of the Yerevan State University. He is also the head of the Department of Armenian-Kurdish Relations at the Institute of Armenian Studies, YSU. Main fields of his research include the problems of Kurdish studies, and the Turkish and U.S. foreign policy issues.

Sargis Grigoryan PhD

Research Fellow at the Department of Armenian-Kurdish Relations of Institute for Armenian Studies of YSU. Main fields of his research include the Islamic radical movements as well as the Kurdish issue in the Middle East.

Grigor Yardanyan PhD

Research Fellow at the Department of Arab Countries at the Institute of Oriental Studies, NAS RA. Main fields of his research include the problems of contemporary history of Syrian Arab Republic, developments within Syrian Alawite Community and its political-military role in Syria.

Arsen Julfalakyan (post-graduate student)

Post-graduate student of YSU Chair of International Relations and Diplomacy. His research interests include relationship between Syria and Turkey and foreign policies issues of Syria and Turkey.

ԱՎՏՈՐՆԵՐ

Արակ Քաշյան կ.ի.ն., դոցենտ

Տարիցի գիտնական Երևանի Արաբական Ինստիտուտի Արաբական Ինստիտուտի արևելագիտության և արաբական հարաբերությունների բաժնի ղեկավար: Զբաղվում է արաբական հարաբերությունների, արաբական մշակույթի և արաբական լեզվի ու գրականության ոլորտներում հետազոտություններով:

Վահագն Քոչարյան կ. ի. ղ.

Դոցենտ Կաթողիկոսյանի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ֆակուլտետի միջազգային հարաբերությունների ԵԳՄ: Զբաղվում է արևելագիտական հարաբերությունների Ինստիտուտի արևելագիտական հետազոտությունների ԵԳՄ: Զբաղվում է արևելագիտական հարաբերությունների, արաբական մշակույթի և արաբական լեզվի ու գրականության ոլորտներում հետազոտություններով:

Տարիցի Գրիգորյան կ.ի.ն.

Գիտնական Երևանի Արաբական Ինստիտուտի արևելագիտության և արաբական հարաբերությունների բաժնի ղեկավար: Զբաղվում է արաբական հարաբերությունների, արաբական մշակույթի և արաբական լեզվի ու գրականության ոլորտներում հետազոտություններով:

Գրիգոր Վարդանյան կ.ի.ն.

Գիտնական Երևանի Արաբական Ինստիտուտի արևելագիտության և արաբական հարաբերությունների բաժնի ղեկավար: Զբաղվում է արաբական հարաբերությունների, արաբական մշակույթի և արաբական լեզվի ու գրականության ոլորտներում հետազոտություններով:

Արսեն Դժուխանյան

Ասպիրանտ Կաթողիկոսյանի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ֆակուլտետի միջազգային հարաբերությունների ԵԳՄ: Զբաղվում է արաբական հարաբերությունների, արաբական մշակույթի և արաբական լեզվի ու գրականության ոլորտներում հետազոտություններով:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐԱՍԻԱ

ԱՐՄԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ
ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ

ՀԱՏՈՐ IV (2)

Ռուբեն Սաֆրաստյանի խմբագրությամբ

Հրատ. պատվեր № 667

Ստորագրված է տպագրության՝ 25.12.2015թ.:

Չափսը՝ 60 x 100 ¹/₁₆, տպագր. 7 մանուկ:

Տպարանակը՝ 200 օրինակ:

«ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: